


ԱՆՈՒՇԱԿԱՆ  
ԶԱՔԱՐՅԱՆ



ԲՈՒԹԻ ԼԱՉԱՔԵՎՈՒԿԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՎ  
ՀԱՅ ԿԱՆԱՆՑ  
ՄԱՍԻՆ



929:882 Հայաստանի + 947.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ԲՈՐԻՍ ԼԱԶԱՐԵՎՍԿԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ  
ՄԱՍԻՆ

A 90284



ՀՏԴ 882.0 + 941 (479.25)

ԳՄԴ 83.3Ո + 63. 3 (2Գ)

Ձ - 431

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ԴՅ ԳԱԱ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԹԱՆԳԱՐԱՆ— ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՈՐՈՇՄԱՄԲ

ԽՄԲԱԳԻՐ  
ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

Ձաքարյան Անուշավան

Ձ - 431 Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին. —  
Երևան. ԴԴ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտ,  
2004.— 112 էջ:

XX դարի 10-ական թվականներին ռուս գրական գործիչների  
շարքում, որոնք իրենց գրական-հասարակական գործունեության  
մեջ մեծ տեղ են հատկացրել հայ իրականությանը, առանձնա-  
հատուկ դեր ունի ժամանակի հայտնի արձակագիր Բորիս Լա-  
զարևսկին: Դրա խոսույն վկայություններն այն փաստերն ու իրողու-  
թյուններն են, որ առաջին անգամ ներկայացվում են գրքում:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանակի համար:

Ձ 4603020101 2004  
0176(01) - 2004

ԳՄԴ 83.3Ո + 63.3 (2Գ)

ISBN 99930 – 899 – 9 – 7

© ԴԴ ԳԱԱ հայոց ցեղասպանության  
թանգարան–ինստիտուտ, 2004

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

XX դարի 10-ական թվականների սկզբից ռուս հասարակայնության շրջանում մեծապես աճում է հետաքրքրությունը Հայաստանի, նրա պատմության և մշակույթի նկատմամբ: Դա հիմնականում պայմանավորված էր հայ ժողովրդի հասարակական-քաղաքական դրությամբ: Հայտնի է, թե որքան շնորհակալ և արդյունավետ գործ են կատարել ռուս գրական-հասարակական գործիչները Հայաստանն իրենց ժողովրդին ներկայացնելու և ծանոթացնելու առումով: Այս բնագավառում գործած գործիչների շարքում կան հայտնի կամ քիչ հայտնի անուններ. վերջիններս անծանոթ են ոչ միայն լայն հանրությանը, այլև մասնագետ գիտնականներին: Նրանցից մեկը *Բորիս Լազարևսկին* է (1871–1936): Ժամանակին անդրադարձել ենք գրական-մշակութային այս գործչին, խոսել հայ իրականության հետ նրա առնչությունների մասին\*: Սակայն մի շարք նոր, հետաքրքիր հանգամանքներ, իրողություններ ու մանրամասներ թելադրում են կրկին անդրադառնալ այդ հարցերին:

Գրքում մեր խոսքին կցել ենք Բ. Լազարևսկու գրչին պատկանող և մեզ հասու երկու պատմվածք ու ծավալուն ակնարկաշար: «Հավելվածում» զետեղել ենք գրողի մասին ռուս գրական-հասարակական հայտնի գործիչ Ս. Գորոդեցկու հոդվածը, ինչպես նաև, թեմայի ամբողջացման նպատակով,

---

\* Տե՛ս *Ան. Չարարյան*. Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914 - 1920). Երևան, 1984, էջ 196 - 198; *Ան. Закарян*. Борис Лазаревский и Армения.—Литературная Армения, 1995, № 7 - 9, с. 157 - 159. *Ան. Չարարյան*. Հայաստանը Բորիս Լազարևսկու ստեղծագործության և հասարակական գործունեության մեջ. — Պատմա-բանասիրական հանդես, 2002, № 3, էջ 103-108: *Ան. Закарян*. Трагедия армянского народа в оценке русских литераторов. Ереван, 2003, с. 204 - 211.

XIX դարի 80-ական թվականների ռուս գործիչների դիտարկումները հայ կնոջ մասին:

Նյութերը հրատարակում ենք բնագրերի լեզվով. պահպանել ենք դրանց առանձնահատկությունները, խմբագրական միջամտություններ չենք կատարել, բացառությամբ կետադրական մասնակի շտկումների և ուղղագրական սխալների ուղղման: Յուրաքանչյուր նյութի վերջում նշված է սկզբնաղբյուրը:

## Գ Լ ՈՒ Խ Ի

### ՀԱՅԱՍՏԱՆԸ

Բ. ԼԱՁԱՐԵՎՍԿՈՒ ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ո՞վ էր Բորիս Լազարևսկին, ինչո՞վ էր առնչվում Հայաստանին: Ուկրաինացի պատմաբանի որդին, Կիևի համալսարանի շրջանավարտը ռուս գրական միջավայրում հայտնի էր սիրային թեմաներով գրած պատմվածքներով՝ Չեխովի հետևությանձև և հաճախ ընդօրինակելով վերջինին: Նա համարվում էր իզական սեռի հոգեբան-մասնագետ, որի խոսումն վկայությունն են նաև նրա գրքերի վերնագրերը՝ «Վենյա (մի կանացի հոգու պատմություն)», «Կնոջ հոգին» և այլն:

Մեծանուն հայ բանաստեղծ Վահան Տերյանը գրական-հասարակական ճանաչված գործիչ Կարեն Միքայելյանին Պետրոգրադից հղած «1915, 2 ապրիլի» թվակիր նամակում, անդրադառնալով հայ գրականությանը նվիրված ժողովածու հրատարակելու Մ. Գորկու մտադրությանը և Կ. Միքայելյանի «ծեռնարկած» նմանատիպ գործին, մասնավորապես գրում է. «Ինձ ասացին, որ իմ հասցեն որոնում է Բորիս Լազարևսկին (գիտես իհարկե), կարծեմ, նույնպիսի մի գործով, թեև ինքս ամաչում եմ առաջ գնալ և այսպես ասած «շուտափույթ» լինել՝ ավելի, քան արժան է – երևի շուտով կիմանամ»<sup>1</sup>: Նամակի ծանոթագրություններում գրված է, որ նշված Բ. Լազարևսկին, «Կարծում ենք Վ. Յա. Բոյուսովը»<sup>2</sup>: Սա բացահայտ շփոթ է: Վ. Տերյանն իր նամակում, որն ուղղած է ռուս հասարակության լայն շրջաններին քաջածանոթ Կ. Միքայելյանին, միանշանակ

<sup>1</sup> *Վահան Տերյան*. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1979, էջ 200–201:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 418:

գրում է. «Իմ հասցեն որոնում է Բորիս Լազարևսկին» և փակագծերի մեջ ավելացնում՝ «գիտես իհարկե» նրան: Միքայելյանը լայն կապեր ուներ ռուս բանաստեղծների, գրողների, հասարակական-քաղաքական գործիչների հետ և, անկասկած, գիտեր Բ. Լազարևսկուն, անձամբ ճանաչում էր նրան կամ, թերևս, լսել էր նրա մասին: Ե՛վ Վ. Տերյանը, և՛ Կ. Միքայելյանը այդ ժամանակաշրջանում զբաղված էին հայ գրականությունը ռուս բանաստեղծ-գրողների թարգմանությունների միջոցով ռուս հասարակայնությանը ծանոթացնելու պատասխանատու և շնորհակալ գործով (որը, ի դեպ, փայլուն կատարվեց ի դեմս Մ. Գորկու և Վ. Բրյուսովի հայտնի ժողովածուների) և, բնական է, նրանք պետք է, որ գիտենային ժամանակի քիչ թե շատ հայտնի գրողներին, գրական գործիչներին:

Իսկ ինչո՞վ բացատրել, որ նամակի ծանոթագրության մեջ նշված է Վ. Բրյուսովի անունը: Թերևս միայն այն բանով, որ «կարծեմ, նույնպիսի մի գործով» է «որոնել» Վ. Տերյանին «ոմն» Բ. Լազարևսկի: Վ. Տերյանը Կ. Միքայելյանին ուղղված նամակի սկզբում, այս նախադասությունից առաջ խոսում է Մ. Գորկու և Կ. Միքայելյանի ու այլոց հայտնի նախածեռնությունների (հայ գրականության թարգմանության) մասին և հետո ավելացնում, որ իրեն փնտրում են «նույնպիսի մի գործով»: Քանի որ նամակը ծանոթագրելու ժամանակ դեռևս հայտնի չէր, որ Բ. Լազարևսկին ևս հետաքրքրություն է ցուցաբերել հայ իրականության և մշակույթի նկատմամբ, ըստ այդմ, ծանոթագրության մեջ, Լազարևսկու մասին ընթերցողին տեղեկություն տալու փոխարեն, չիմացության պատճառով, նշվել է Վ. Բրյուսովի անունը: Այսպես կարելի է միայն մեկնաբանել տվյալ իրողությունը: Կարծում ենք, Վ. Տերյանի նամակների վերահրատարակության ժամանակ պետք է ուղղել այս ակնհայտ սխալը:

Ու, թեև, մենք հասու չենք, արդյոք Բ. Լազարևսկին և Վ. Տերյանը հանդիպել են, «նույնպիսի մի գործը» որևէ ընթացք ունեցե՞լ է, թե ոչ, բայց, այնուամենայնիվ, այս ուշագրավ փաստը մեկ անգամ ևս վկայում է այն մեծ հետաքրքրության մասին, որ ռուս գրողներն ու գրական գործիչները ցուցաբերել են հայ մշակույթի նկատմամբ XX դարի 10-ական թվականների կեսին:

Ռուսաստանում հայոց պատմության, մշակույթի ու գրականության հետևողական ուսումնասիրող և անխոնջ պրոպագանդող Յուրի Վեսելովսկին 1916 թ. գրել է «Ռուս գրականությունը և հայ կյանքը» բովանդակալից հոդվածը: Դրանում խոսվում է ռուս գրականության մեջ հայ իրականության արտացոլման մասին, անդրադարձ կա նաև Լազարևսկու ստեղծագործությանը: Այսպես, նա գրում է. «Արդյոք շատերը գիտեն, որ հայ ժողովրդի ներկայացուցիչները հանդես են եկել ամենաքիչը որպես էպիգոդիկ դեմքեր Օստրովսկու, Պիսեմսկու, Սալտիկով-Շչեդրինի, Չեխովի, Նեմիրովիչ-Ռանչենկոյի, Լազարևսկու և շատ ուրիշների ստեղծագործություններում»<sup>3</sup>: Այնուհետև՝ «Ռուս նորագույն գրականության մեջ նույնպես երբեմն հանդիպում են հայ կյանքի հետաքրքիր արձագանքներ... Եթե այլ գրողներ ևս ունեն հայ կյանքի առանձին արտացոլումներ, եթե, օրինակ, Բորիս Լազարևսկին իր պատմվածքներից մեկում մեզ նույնպես ցույց է տալիս այդ նույն աշխարհից վերցված կանացի հետաքրքիր կերպար, ապա չի կարելի ամեն դեպքում աչք փակել այն բանի հանդեպ, որ մինչ այժմ մեր գրողների կատարածը հայ իրականության արտացոլման մասով միանգամայն քիչ է»<sup>4</sup>: Հոդվածից պարզվում է, որ հայ կյանքին անդրադառնալիս Լազարևսկին հավատարիմ է եղել ստեղծագործական իր նախասիրությանը, այն է՝ իգական սեռի հոգեբան-մասնագետի կոչմանը: Ռուս գրողի այս պատմվածքը գտնելու մեր պրպտումները, սակայն, առայժմ անօգուտ են եղել:

Բ. Լազարևսկու ծանոթությունը Հայաստանի և հայ ժողովրդի հետ հետագայում էլ է շարունակվել: Նա հայ իրականության, հասարակայնության հետ շփվել է նաև հենց Անդրկովկասում: 1920 թ. գարնանը ժամանակի ռուս «հայտնի գրողը» եղել է Թիֆլիսում և Երևանում: Մարտի 31-ին մամուլը տեղեկացնում է, որ Բ. Լազարևսկին օրերս «Հայաստանի օրիորդները և կանայք» թեմայով դասախոսություններ կկարդա

<sup>3</sup> Ю. Веселовский. Русская литература и армянская жизнь. — Армянский вестник, 1916, № 15, с. 2.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 3:

նշված քաղաքներում<sup>5</sup>: Ապրիլի 10-ին Թիֆլիսի «Слово» թերթում տպագրվում է գրողի «Բրոշեչկա» («Брошечка») վերնագրով պատմվածքը<sup>6</sup>: Մինչ այդ էլ՝ 1919 թ. կեսերին, տպագրվել էր նրա «Օտարության մեջ» («На чужбине») խորագրով պատմվածքը<sup>7</sup>: Ի դեպ, այս պատմվածքների գլխավոր հերոսները հայ կանայք են՝ չքնաղ մի աղջնակ՝ «թախծոտ աչքերով», և տարեց մի կին: Հավելենք նաև, որ այդ տարիներին Անդրկովկասի ընթերցող հասարակայնությունը Բ. Լազարևսկու գրական գործունեությանը ծանոթ էր Սերգեյ Գորոդեցկու<sup>8</sup> «Лирик прозы (портрет Бориса Лазаревского)» հոդվածով: «Բորիս Լազարևսկին արդեն ամբողջովին անցյալում է, – գրում է Ս. Գորոդեցկին:– Չեխովի և Կուպրինի մերձավոր հետնորդը, նա «Նիվայի» պանթեոնում արդեն ենթակա էր դասակարգման. նրա երկերի հրատարակությունը պետք է լույս տեսներ «հավելվածի» տեսքով 1919 թ., բայց իրադարձությունները խանգարեցին:

Չայցևից, Չուլկովից և Ալ. Տոլստոյից՝ ռուսական այդ նոր արձակի գրողներից ավագ լինելով, նա դեռ ոչ հեռու անցյալում եղել է «երիտասարդ», սակայն Ռուսաստանի վրայով փոթորիկ անցավ, և նրա մի շարք հատորները դրված են գրադարակում «դասականների» միջև, ինչ-որ մի տեղ»<sup>9</sup>: Ս. Գորոդեցկին այնուհետև հանգամանորեն ներկայացնում և գնահատում է գրողի գրական դիմանկարը, մեկ առ մեկ բացում նրա ստեղծագործության նուրբ ծալքերը:

<sup>5</sup> Слово, 31. III. 1920.

<sup>6</sup> Թերթն իր 14. IV. 1920 թ. համարում հայտնում է, որ պատմվածքի հեղինակի ազգանունն աղճատված է, և որ դրա հեղինակը ներկայումս Թիֆլիսում գտնվող «ռուս նշանավոր գրող» Բորիս Լազարևսկին է:

<sup>7</sup> Кавказское слово, 13. VIII. 1919.

<sup>8</sup> Ռուս գրական-հասարակական այս հայտնի գործչի մասին մանրամասն տե՛ս *Ան. Չաքարյան*. *Նշվ. գիրքը*, էջ 93-187: *Ան. Закарян*. Русские литераторы и армянская действительность (10-е гг. XX в.). Ереван, 1994, с. 80-127; *Ան. Закарян*. Трагедия армянского народа в оценке русских литераторов, с. 129-188\*, 222-230.

<sup>9</sup> Слово, 5. IX. 1919.

Եվ, ահա, 1920 թ. գարնանը Բ. Լազարևսկին ստեղծագործական իր վերոհիշյալ նախասիրություններով՝ լայնորեն ներկայացել է հայ հանրությանը: Ապրիլի 28-ին Թիֆլիսի կոնսերվատորիայի լեվի-լեցուն դահլիճում ռուս գրողը դասախոսություն է կարդում «Հայաստանի օրիորդները և կանայք» թեմայով: Դրան վերաբերող հայտարարության մեջ ասվում է, թե «բելլետրիստ Բորիս Լազարևսկին ... հայտնի է որպես դիտող և գիտնական իգական սեռի ուսանող երիտասարդության հոգեբանության», և որ, «լինելով Ռուստովում, Արմավիրում, Թիֆլիսում և Երևանում, հարգելի վիպագիրը կարողացել է ավելի մոտից ծանոթանալ և ուսումնասիրել հայ կնոջ և օրիորդի բնավորությունը, նրա դեպի լույսն ու գիտությունը ձգտող անվերջ տրագեդիան, որը և կազմում է նրա դասախոսության նյութը»<sup>10</sup>:

Բնականաբար, Բ. Լազարևսկու դասախոսությունը մեծ հետաքրքրություն է առաջացնում հասարակայնության լայն շրջաններում: Խոսքը վերաբերում էր տասնամյակներ շարունակ խոսք ու զրույցի առարկա դարձած հայ կնոջ վիճակին, ակնկալվող դերին, և, բնականաբար, արժանանում է հայ մամուլի արձագանքներին: Այսպես, «Նոր աշխատավոր» թերթը հաղորդում է, թե «Բ. Լազարևսկին հայտնի է ռուսական արդի գրականության մեջ իբրև նուրբ հոգեբան պատանեկան հասակի՝ մասնավորապես իգական սեռի: Եվ հիրավի, կարճատև ժամանակամիջոցում հանդիպելով հայ օրիորդի և կնոջ Ռուսաստանի քաղաքներում, Անդրկովկասի և Հայաստանի կենտրոններում, նա կարողացել է ըմբռնել հայ կնոջ իսկական տիպարը»: Հաղորդումը պարունակում է նաև բանախոսին վերաբերող զգաստ դիտողություններ. «Դասախոսություն բառիս ընդունված իմաստով, իհարկե, չի կարելի անվանել հարգելի բելլետրիստի ատենախոսությունը: Դրանք ավելի շատ մտերմական շրջանում արտահայտված մտքեր ու ապրումներ էին հայ կնոջ հատկանիշների վերաբերմամբ, քան թե լայն դասախոսություն... Կային, իհարկե, մի շարք չափազանցություններ ու ոչ ճիշտ մեկնաբանություններ՝ բխող նյութի նորությունից ու կարճատև ուսումնասիրությունից»: Եվ ապա՝ «Բայց ընդ-

<sup>10</sup> Նոր աշխատավոր, 27. IV. 1920: Հմմտ. Слово, 28. IV. 1920.

հանուր առմամբ հոգեբանական սխեման և մասնավորումները միանգամայն ճիշտ էին և զարմանալի նրբությամբ ըմբռնված: Հայ օրիորդի հոգեբանական պրոբլեմի լուծումը ավելի աջող էր և զերծ վրիպումներից, քան հասակավոր կանանց և տիկնանց: Իբրև հայ ժողովրդի դարավոր տառապանքի, ցավի ու զուլումի արտահայտիչ է հանդես գալիս հայ օրիորդը իր եզակի գեղեցիկ աչքերով, հենց այնպես, ինչպես Դոստոևսկին ապրելով ու վերապրելով կյանքի տանջանքները, պահեց նրանց իր չտեսնված գեղեցիկ աչքերի խորքում»<sup>11</sup>:

Որքան էլ «հոգեբանական սխեման և մասնավորումները» ճիշտ, դժվար չէ որսալ, որ Լազարևսկու դատողությունները տառապում են մի հիմնական թերությամբ. դրանք էապես վերացական են, զուրկ սոցիալ-տնտեսական, հասարակական հիմնավորումներից, մի թերություն, որ հավասարապես կարող է վերաբերել և՛ կնոջ անցյալի նրա բնութագրումներին, և՛ պատմականորեն առկա հոգեբանական-բարոյական նկարագրի զննումներին:

Ամեն դեպքում դասախոսության առաջ բերած հետաքրքրությունը նշված հասկանալի շարժառիթներով այնքան մեծ է եղել, որ «Հայ աշակերտական ընդհանուր միության» վարչության խնդրանքով նախատեսվել է դրա կրկնությունը մայիսի 2-ին<sup>12</sup>:

Հենց այդ օրն էլ Լազարևսկին այցելել է Հովհ. Թումանյանին: Մեծ բանաստեղծի ալբոմում<sup>13</sup> ռուս գրողը թողել է

<sup>11</sup> Նոր աշխատավոր, 30. IV. 1920:

<sup>12</sup> СЛОВО, 30. IV. 1920.

<sup>13</sup> Այս ալբոմի մասին հիշատակություն կա Նվարդ Թումանյանի «Հուշեր և գրույցներ» գրքում՝ 1919 թ. մարտի 12-ի գրառման տակ. «Ս. Գորոդեցկու գլխավորությամբ հայրիկին կրկին այցելության եկան «Лѣх поэтов» խմբակցության երիտասարդ բանաստեղծները՝ շնորհավորելու նրա ծննդյան 50-ամյակը:

Ալբոմում գրեցին իրենց բանաստեղծությունները:

Մնացին ընթրիքի:

Հետաքրքիր և ուրախ երեկո էր»:

Ըստ բանաստեղծուհի Հռ. Պողոսյանի հուշագրական տվյալների, այդ օրը Թումանյանի հարկի տակ հավաքվածներից «Բանաստեղծների համքարության» անդամները կարդացել են նրան նվիրված բանաստեղծություններ, ապա վերջինիս խնդրանքով դրանք

խորհմաստ հետևյալ գրառումը. «Սիրելի՛ պոետ: Ես նախապաշարված եմ, եղել եմ, կամ և հավանաբար կլինեմ ... Թանաքաբծերը, որ կան Ա. Ի. Խատիսովի լրացրած էջի վրա, ինձ ասացին՝ նրան չէ, որ վիճակված է բարելավել իր մայր հայրենիքի կեցությունը, թեպետ նա ամենախելոք մարդկանցից մեկն է ...»<sup>14</sup>

գրել ալբոմում ( *Р. Погосян. Незабываемые встречи.— Литературная Армения, 1959, № 1, с. 169*): Իրենց բանաստեղծություններն ու քառյակներն ալբոմում գրել են Ս. Գորոդեցկին, Ն. Բել-Կոն-Լյուբոմիրսկայան, Մայան, Ա. Գերբսմանը, Ա. Կուլեբյակինը, Տ. Պոյարկովան, Հ. Ասիլյանը (նույն ինքը՝ Հո. Պողոսյանը), Վ. Ջոտան և ուրիշներ («Բանաստեղծների համքարության» ծավալած գործունեության մասին մանրամասն տե՛ս *ԱՆ. Ձաքարյան*. Ս. Գորոդեցկու հիմնած թիֆլիսի «Բանաստեղծների համքարությունը» և նրա «Ակմե» ժողովածուն.— ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, № 12, էջ 44-56 ): Ալբոմը պահվում է Հոփի. Թումանյանի թանգարանում՝ Թումանյանների ընտանեկան արխիվում:<sup>14</sup> Նկատի ունի Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանին (1874-1945): Այս կոնտեքստով նրա անվան հիշատակումը վկայում է, որ ռուս գրողը ճանաչել է վարչապետին և քաջատեղյակ է եղել վերջինիս ծավալած գործունեությանը, հավանաբար, Երևանից: Հայաստանի մայրաքաղաք կատարած Բ. Լազարևսկու այցի մասին, ցավոք, տվյալներ չունենք. թիֆլիսյան մամուլն այդ օրերին հաղորդում էր, որ նա դասախոսությամբ հանդես է գալու նաև Երևանում: Ինչևէ. Ա. Խատիսյանը վերոհիշյալ ալբոմում («18 հունվարի 1920 թ.» տարեթվով) ևս ունի գրառում. «Բանաստեղծները, սովորաբար, դժկամորեն են ընդունում քաղաքական գործիչների արվեստը, այդ իսկ պատճառով ես տարակուսում եմ գրել իմ խոսքը նրանց ներշնչանքների ալբոմում, սակայն իմ գործն է՝ կերտել Հայաստանն ավերակների, մահվան և արցունքների ծովի քաոսից որպես բարգավաճ և ծաղկուն ստեղծագործություն, նույնպես հրաշալի է. առանց ներշնչանքների, զգացմունքների լարվածության և ապագան թափանցելու չի կարելի իմ գործն անել, և թող բանաստեղծները ներեն իմ համարծակությունը և թեկուզ ժամանակավորապես դաժան քաղաքականությանը տեղ տան սքանչելի մուսայի կողքին ու դրանով ստեղծեն անողորքի և գեղեցիկի զուգակցումը՝ մեր սիրելի Հայրենիքի ներկա դրության խորհրդապատկերը...»: Ա. Խատիսյանի այս տողերի վրա կան թանաքաբծեր, որի մասին էլ իր գրառման մեջ ակնարկել է Բ. Լազարևսկին:

Հայաստանը կհանգստանա այն ժամանակ, երբ սերը մեր-  
ձավորի հանդեպ ֆիկցիայից կդառնա իրականություն...

Այդ մեծ գործում պետք է հսկայական դեր խաղան ՅԱՅԱՍ-  
ՏԱՆԻ ԱՂՋԻԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՆԱՅՔ և բանաստեղծները»: Գրության  
տակ՝ աստղամիշով, կա հետևյալ նշումը. «Բայց ոչ «Ռա-  
ֆալովիչները»<sup>15</sup>:

Ամենայն հավանականությամբ, պետք է ենթադրել, որ Թու-  
մանյանը ներկա է եղել Լազարևսկու դասախոսությանը, և,  
դրանից հետո, սովորության համաձայն, վերջինիս հրավիրել է  
տուն, իր հյուրընկալ օջախում շարունակել գրույցը հայ կա-  
նանց դարավոր տառապանքների, բնավորության, առաքի-  
նությունների, մարդկանց, ժողովուրդներին միմյանց կապող  
սիրո ու բարության մասին, որոնց հաղթանակի հետ էլ, հիշա-  
տակված գրության մեջ, առնչվում է բազմաչարչար հայ ժո-  
ղովրդի ճակատագիրը: Այդ գրույցի ոգով էլ, ըստ էության, շա-  
րադրված են Լազարևսկու վերոգրյալ տողերը<sup>16</sup>:

<sup>15</sup> Խոսքը, ամենայն հավանականությամբ, ժամանակի ռուս գրական  
հայտնի գործիչ Սերգեյ Ռաֆալովիչի մասին է. նա ևս այդ խառնակ  
տարիներին ապրել, ստեղծագործել է Անդրկովկասում, ծավալել հա-  
յանպաստ գործունեություն (այդ մասին մանրամասն տես՝ *Առ.  
Յակարյան*. Трагедия армянского народа в оценке русских ли-  
тераторов, с. 188-196): Բ. Լազարևսկին Ս. Ռաֆալովիչի անունը  
նման կտրվածքով հիշատակել է մեզ անհայտ ինչ-ինչ նկատառում-  
ներից ելնելով: Ի դեպ, Ռաֆալովիչը «Բանաստեղծների համաքարու-  
թյան» անդամ էր և վերոհիշյալ ալբոմի տարբեր էջերում ունի երկու  
քառյակ՝ «12. III. 1919 թ.» տարեթվով:

<sup>16</sup> Նկատենք, ալբոմում Բ. Լազարևսկու տողերին հաջորդած էջերից  
մեկում կանանց և գրականության մասին անթվակիր հետևյալ գրա-  
ռումն ունի գրական-հասարակական հայտնի գործիչ Տիգրան Յով-  
հաննիսյանը (1865–1921). «Երբ կանայք ազատություն ստանան,  
մարդիկ գերմարդ կդառնան: Գրականությամբ է ժողովուրդը ազ-  
դառնում. առանց գրականության՝ նա ամբոխ է միայն»: Տ. Յով-  
հաննիսյանի այս դիտարկումը, կարծում ենք, անմիջական աղերս  
ունի ռուս բանաստեղծի վերոհիշյալ գրառման հետ:

Дорогой поэт! Я счастлив, был, есть  
и вероятно буду... Каким на истра-  
нично забытой А. И. Хайнекович  
мне скажут, что не могу сурово  
облегчить бытие своей матери-  
родины, не смотрю на то что он  
был в чуждых людях...

Армения отдохнет тогда, когда  
любовь к ближнему из фанатизма  
станет добрым и великим...

В этой великой работе будут играть  
великую роль ДВУШКИ И ЖЕНЩИНЫ  
Армении и поэты?

~~Петр Петрович~~

1920 год 2 мая

» Но не «Рафайлович».

Штаб.

Բորիս Լազարևսկու գրառումը  
Հոկ. Թումանյանի պլեթոնը



## Գ Լ ՈՒ Խ II

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՋԻԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՆԱՅՔ Բ. ԼԱԶԱՐԵՎՍԿՈՒ ԱԿՆԱՐԿԱՇԱՐՈՒՄ

1919—1920 թթ. Ռոստովում, Արմավիրում, Թիֆլիսում և Երևանում իր դասախոսություններով հայությանը հիացրած Բորիս Լազարևսկին 1920-ին Պոլսով Փարիզ մեկնելիս՝ նրբին տպավորություններով ու զգացմունքներով շարադրված այդ դասախոսություններն ամբողջացնում և արևմտահայ թարգմանությամբ՝ «Հայաստանի աղջիկներն ու կիները» վերնագրով, «Ճակատամարտ» թերթում տպագրում է իր ծավալուն քննական ակնարկաչափը<sup>1</sup>: Ընդ որում, խմբագրության կողմից սույն ծանոթությամբ. «Այս ուսումնասիրությունը «Ճակատամարտ»-ի համար գրած է Բորիս Լազարևսկի, ռուս գրող՝ Չեխովի դպրոցեն, որ ունեցած է շատ արկածալի կյանք մը: Բնիկ ուկրաինացի, ավարտած է Քիևի համալսարանին իրավաբանական ճյուղը, վարած է զինվորական և ծովային պաշտոններ: Ռուս և ճապոնական պատերազմեն հետո ինքզինքը նվիրելով գրականության, արտադրած է շատ մը գործեր՝ մեծ մասով մանրավեպեր: Վերջերս մեծամասնական հալածանքեն փախչելով՝ անցած էր Օդեսա, ուրկե գնաց Թիֆլիս և Երևան, ու այժմ Պոլիս եկած է Փարիզ անցնելու համար»<sup>2</sup>:

Ընդմիջարկելով ասենք, որ հայ իրականության մեջ կնոջ դերի, նրա դրության, կանանց հարցի ուսումնասիրության խնդրի գիտակցությունն ու կարևորությունը սկզբնավորվել է XIX դարի 50—60-ական թվականներից: Այդ գործի նախամոտիվներն են եղել հայ գրողները՝ իրենց երկերով, ապա

<sup>1</sup>Ճակատամարտ, 7.X.1920, 8.X.1920, 9.X.1920, 10.X.1920, 12.X.1920, 13.X.1920, 14.X.1920, 15.X.1920, 16.X.1920:

<sup>2</sup>Նույն տեղում, 7. X. 1920:

Ժամանակի պարբերական հրատարակությունների շուրջ համախմբված գործիչները, որոնք բազում էջեր են նվիրել այդ հարցերին: Մասնավորապես, դրա խոսու՛ն վկայությունն է այն, որ 1912 թ. Թիֆլիսում «Մշակ» թերթի 40-ամյա հոբելյանի առթիվ հրատարակվել է «Մշակը» և հայ կինը» ժողովածուի 1-ին հատորը՝ նվիրված «կանանց հարցին ընդհանրապես և մասնավորապես հայ կնոջ առաջխաղացման գործին»: Թերթում լույս տեսած առաջնորդողները, հողվածները և բանասիրական նյութերը արտացոլում են հայ կնոջ մտավոր ու բարոյական զարգացման ընթացքը:

Օտար, հատկապես ռուս ուսումնասիրողների և ճանապարհորդների կարծիքները Արևելքի կնոջ մասին ընդհանրապես, և հայ կնոջ մասին՝ մասնավորապես, մեզանում շրջանառվել են XIX դարի 80-ականներից: Այսպես, հայտնի է, որ հասարակական գործիչ Գանկևիչը Կովկասում եղած ժամանակ «խորությամբ» ուսումնասիրել է հայ ընտանիքը, նրանում կնոջ ունեցած դերը: Դրա վկայությունն է 1881 թ. սկզբին Թիֆլիսում նրա կարդացած դասախոսությունը «Հայ կինը» թեմայով: «... արևելյան բոլոր կանանցից մենք միայն մեկին ենք ճանաչում, որը, չնայելով իրան սպառնացող բազմաթիվ վտանգներին, խստությամբ պահպանել է իր բարքերի մաքրությունը՝ այդ կինը՝ հայուհին է»,<sup>3</sup> — սկսելով դասախոսությունը՝ նշել է Գանկևիչը: Եվ դա միայն այն բանի շնորհիվ, որ նա «որպես դևիզ» է իր համար ընտրել աշխատանքը, հավատը և ընտանիքը: Հանգամանորեն անդրադառնալով այս հարցերին՝ դասախոսը, մասնավորապես, նկատում է. «Տնտեսության և խնայողության ոգին, հարգանք դեպի սրբությունը և սեր դեպի ընտանիքը պահպանվում են հայ ազգի մեջ շնորհիվ նրա կնոջ... Հայերի մոտ ընտանեկան երջանկությունը կախված է ամուսինների փոխադարձ համածայնությունից: Տղամարդը անխոնջ աշխատում է, կինը տընտեսության և կարգին է նայում տան մեջ և հոգում է նրա մեջ խաղաղություն պահպանել, որը զորեղ ներգործություն ունի տան մեջ բոլոր ապրողների վրա: ... Հայ կինը կրթում է մանուկներին ծնողական իշխանության հնազանդության մեջ և իր կրոնի վարդապետությունների համածայն ... Աղջիկների

<sup>3</sup> Մշակ, 1881, № 86:

կրթության վրա առանձին ուշադրություն է դարձվում, և ամբողջ Հայաստանը կարող է պարծենալ նրանով, որ նա դեռևս չներկայացրեց աշխարհին այն գայթակղող և հրապուրիչ պատկերներից և ոչ մեկը, որոնց վրա նկարվում են՝ շնություն, անհարազատ ծնունդ և պրաստիտուցիա ... Հայ կինը զորություն է ստանում նույնպես իր կրոնական համոզմունքների մեջ, իր ժառանգական ավանդությունների սերի մեջ և իր բարքերի մաքրության մեջ»<sup>4</sup>: Ամփոփելով իր նկատառումները՝ Գանկևիչը նշում է. «Խորը քննելով հայ կանանց ընտանեկան բարքերը, դուք չեք գարմանա տեսնելով, որ ժողովրդի մասսայի մեջ գերակշռում է բարոյականությունը և բարօրությունը»<sup>5</sup>:

Հայ կնոջ մասին ուսումնասիրություն է կատարել նաև ռուս հայտնի ճանապարհորդ, բժշկապետ Ա. Ելիսևը, որը 1880-ական թվականների կեսերին Ռուսաստանի Աշխարհագրական ընկերության համծնարարությամբ ճանապարհորդել է Հայաստանում և գլխավորապես Փոքր Ասիայում: Վերադառնալով Պետերբուրգ՝ կարդացել է մի շարք դասախոսություններ Արևելքում կնոջ դրության մասին: Այնուհետև Ա. Ելիսևը իր դասախոսությունները տպագրել է տեղի «Сев-верный вестник» ամսագրի 1888 թ. համարներում: Պարբերականի № 10-ում տպագրվել է Ելիսևի 6-րդ դասախոսության մի մասը, որ վերաբերում է հայ կանանց: Ի դեպ, հոդվածն անմիջապես թարգմանվել է հայերեն, տպագրվել «Արձագանք» շաբաթաթերթում, «Արևելյան մամուլում» և ընդարձակ մեկնաբանություններով՝ «Մշակում»<sup>6</sup>:

Այս շարքում ուշագրավ է նաև Յու. Վեսելովսկու «Կանանց ճակատագիրը հայ գրական գործիչների արտացոլմամբ» («Женская доля в изображении армянских литераторов») ուսումնասիրությունը<sup>7</sup>:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս Արձագանք, 23. X. 1888, № 41, էջ 571–572, Արևելյան մամուլ, 1888, XI, էջ 534–536, Մշակ, 1888, № 124, 125:

<sup>7</sup> Ю. Веселовский. Литературные очерки. М., 1900, с. 540–563. Մեր օրերում ևս հայ կնոջ կերպարը ուսումնասիրության նյութ է օտարների համար: Այսպես, 2003 թ. նոյեմբերի 12-ին Գոնգորտիա

A 90284

Բ. Լազարևսկու «Հայաստանի աղջիկներն ու կիները» ակնարկաշարը հայ ժողովրդի ցեղասպանությանն արձագանքող ուշագրավ նյութ է, որ սկսում է XVII դ. անգլիական բուրժուական հեղափոխության նշանավոր գործիչ, աշխարհահռչակ բանաստեղծ, հումանիստ, մահ կրոնաքաղաքական գործերի հեղինակ Ջոն Միլթոնի (1608–1674) վկայակոչմամբ: Այն է. «Միլտոնի նշանավոր բանաստեղծությունը՝ «Դրախտ կորուսյալը» (պոեմ է. գրել է 1667 թ.– *ԱՄ. Ջ.*), կվերջանա Աստուծո և սատանայի կատարյալ գծտության նկարագրությամբ: Երրորդ երգին վերջին խոսքերն են. «Սատանան խորին ողջույնով մը պատշաճ հարգանքը հայտնեց երկնային ոգիին, լքեց արևուն ճանապարհը և շտապեց դեպի երկիր. իր թռիչքի ընթացքին քանի մը ցնծալի ոստումներե վերջ հասավ Նպատ լեռան գագաթը» (Նպատը Հայաստանի ձյունածածկ լեռն է):

Անշուշտ, ասիկա պարզ հեքիաթ մըն է, որուն ծագումը շատ հեռավոր անցյալի մը կհասնի: Բայց երբ կմտածեն այն բոլոր տառապանքներուն վրա, որոնց ենթարկվեցավ Հայաստանը մասնավորաբար վերջին դարերու ընթացքին, կմղվին հա-

համալսարանի Սիմոն դը Բովուար հաստատությունում՝ Համազգային-Սանահին մասնաճյուղի գրական հանձնախմբի նախաձեռնությամբ կայացել է Վիկտորիա Ռոյի հեղինակած «Հայ կանանց գրականության պատմական ակնարկ» գրքի շնորհանդեսը: Ուսումնասիրելով 5 հայ կին գրողների (Սրբուհի Տյուսաբ, Սիպիլ, Մարիամ Խատիսյան, Շուշանիկ Կուրդինյան, Ջապել Եսայան) ստեղծագործությունները՝ Վ. Ռոյն իր աշխատանքում «փորձել է ներկայացնել կնոջ հիմնական մտահոգությունները, այն է՝ կրթության տալ հայ կնոջը և նրան մղել ազգի ազատագրման գործին՝ եզրեր գտնելով հայոց հին պատմության ու գրականության մեջ հայ կնոջ վերապահված բարձր դերի հետ: Սակայն, ըստ Ռոյի, մերօրյա հայ կինը այլ ռազմավարություն է որդեգրել իր հաստատման ու կայացման ճանապարհին՝ այս անգամ հույսը դնելով դիմադրողական ուժի վրա: Ինչպես Ջապել Եսայանի՝ հետեղեռնյան մի գրությունն է վկայում, Վարդանանքի Շուշանիկներն այս անգամ ներկայացվում են որպես դիմադիր ուժ, — մատնանշվում է աշխատանքում» (Երկիր, 12 -18. XII. 2003):

վատալու, որ սատանան իրավունք ուներ իր արկածախնդրությունները Հայաստանեն սկսելու»<sup>8</sup>:

Ահա, այսպես, հիանալի արևմտահայերենով թարգմանված, մեկը մեկից հետաքրքիր, գրավիչ, իմաստալից էջեր ու հատվածներ, և դժվար է կողմնորոշվել՝ ո՞րը շրջանցել, ո՞րը վերաքաղել: Բայց ակնարկաշարի մուտքային հատվածները, պարզապես, անկարելի է կրճատել: Այդ իսկ առունով էլ շարունակենք. «Հայաստանի մեջ կլիման խիստ է, հողը ամուլ է: Տեսա զով գիշեր մը՝ լուսնի լուսով, իր խավերը տակնուվրա եղած հրաբխային ժայթքումներով: Ու հիշեցի այն պատկերները, զորս նկարիչ Վրուպել պատրաստած էր Լերմոնտովի «Դև»-ին համար: Դևը ինքնիրեն խոսելով կըսե. «Ես անիկա եմ, որուն ակնարկը կչքացնե ամեն հույս»: Եվ վերջը վերջը Հայաստանի մեջ իմ բնակության միջոցին, այդ բոլոր առասպելները մեկդի նետելով, հաճախ կմտածեի, որ չորս կողմեն թշնամիներով պաշարված ժողովուրդի մը ուրիշ բան չէր մնար, բայց եթե կորսնցնել ավելի բախտավոր պարագայի մը ամեն հույս» (7. X. 1920):

Դժվար չէ գուշակել, թե ինչ հարց ու հարցադրումներով է ծավալվելու ակնարկաշարը, մանավանդ որ հետաքրքրությունն էլ հատված առ հատված աճում է, և հեղինակն էլ դիտարկումները շարունակում է. «Այս մտածումը իմ հետաքրքրությունս շարժեց: Ո՞վ է ուրեմն այս ժողովուրդը, որ հակառակ այս դժոխային պայմաններուն չէ ջնջված, չէ փոխակերպված անասուններու կամ օրանգութանի ցեղի մը, այլ, ընդհակառակը, տված է ստեղծագործ այրերու և կիներու ամբողջ սերունդ մը, որ այնքան նրբությամբ կհասկնա գեղեցիկը: Աչքերը հոգիին հայելին են: Ես տեսած եմ երկրագունդին գրեթե բոլոր ժողովուրդները և պետք է խոստովանիմ, թե ոչ մեկ տեղ տեսած չեմ այնքան պերճախոս բիբեր, որքան Հայերուն և մանավանդ Հայուհիներուն բիբերը: ... կկրկնեմ. Հայերուն և մասնավորաբար հայ կիներուն և աղջիկներուն աչքերը հաճախ կպատմեն համարձակ և արտա-

<sup>8</sup> Ճակատամարտ, 7. X. 1920: Այսուհետև հղումները կտրվեն տեքստում՝ փակագծերում նշելով թերթի տվյալ համարը: Բնագրային ընդգծումները մերն են:

հայտիչ կերպով այն, ինչ որ չափտի կրնային արտահայտել իրենց բերանները:

Ինձի կթվի, թե ատոր պատճառը այն է, որ մտածումներու խորությունը կախում ունի տառապանքի ուժգնութենեն, իսկ տառապանքի տեսակետով հայ ժողովուրդը առաջին տեղը կգրավե աշխարհի մեջ ... » (7.X.1920):

Եվ ակնարկաշարի նրբագագ հեղինակը հայացքն ուղղում է հայ աղջիկների ու կանանց *բիբերին*, կարդում «բերանով» անասելին, տեսնում լուռ հանդիմանության «այն զարմանալի արտահայտությունը», որ թափանցում է դիտողի հոգու խորքը: Չամայն աշխարհին ու մարդկությանն ուղղված ահասարսուռ եղելություններ՝ մի՞թե անպատժելի. ահա այսպիսիք. «Երևանի մեջ տեսա հազարավոր պզտիկ որբ աղջիկներ, որոնք կայարան կտարվեին Ալեքսանդրապոլ ղրկվելու համար. նկատեցի, որ անոնցմե շատերը ունեին աչքերու այն միևնույն արտահայտությունը, զոր Փերոֆ տված է Դոստոևսկիին: Այս միջոցին ուրիշ մտածում մը ունեցա, թե ասոնք ալ պզտիկ թիապարտներ են և նույնքան բացարձակ անմեղ: ... մեզի շատ կհիշեցնե այն վիճակը, որ նկարագրված է «Մեռելներու տան հիշատակներ»-ուն մեջ: Եվ եթե Դոստոևսկի աքսորի դատապարտվեցավ Նիկոլայ Ա-ի կողմե, հայ ժողովուրդն ալ տարագրվեցավ նույնինքն Բարին Աստծու կողմե:

Ես տառապանքի այդ արտահայտությունը առաջին անգամ նկատեցի մատաղատի աղջիկներու աչքերուն, և ոչ թե այրերու կամ անուսնացած կիներու աչքերուն մեջ ... Ես տեսա անագորույն տառապանքի արտահայտությունը գրեթե երեխա աղջկան մը աչքերուն մեջ. այդ միայն իր անձնական տառապանքը չէր, այլ և իր մորը և մեծ մորը, որովհետև այդ մայրերեն և մամերեն շատերը իրենց հոգին չէին ավանդեր յաթաղաններու հարվածներուն տակ, այլ, ինչ որ հազար անգամ ավելի սուկալի է, *Պոլսո հարեմներուն մեջ: ... Չեմ չափազանցեր, եթե ըսեմ, որ Չայուհիին թուխ-կապույտ աչքերը միշտ ցոլացումն են հարցումի մը կամ ավելի ճիշտ համր հանդիմանություն ուղղված իր ճակատագրին...» (7-8.X.1920):*

Եթե գիտենք, որ Բ. Լազարևսկին իրավաբանական կրթություն ունի, ապա, բնականաբար, հասկանալի է, նրա դիտարկումները որքան էլ հագեցած լինեն իրավագիտակցությամբ,

այնուհանդերձ, դրանց մեջ ոչ պակաս տպավորիչ են գեղագետի ընկալումները:

Հենց այդ բնույթով էլ Միլթոնին հետևում են Պերովն ու Դոստոևսկին՝ սեփական տեսած-լսածի ուղեկցությամբ, որոնց գումարվում են բազմատեսակ վկայություններ: Ահա վերստին կարդացածը. «Շատ ժամանակ չկա, որ ձեռքս անցավ խոշոր գիրք մը՝ գորշ կազմով: Անունն էր «Հայերու վիճակը Թուրքիո մեջ, օտար պետությանց միջամտութենն առաջ, 1895-ին»<sup>9</sup>: Պատահմամբ բացի և առաջին նախադասությունը, զոր կարդացի, հետևյալն էր.

«Օր չանցնիր, որ սիրտ մը չխորտակվի» (տե՛ս հիշատակված գրքի 197-րդ էջում—*ԱՄ. Ձ.*): Կարծեցի, թե դիպված մըն է: Էջին վերջը նայեցա և կարդացի. «1878-ին Հայաստան դրկված մասնավոր թղթակիցներեն մեկը, ուշադիր ստուգումներն վերջ, հաստատեց, որ Տաճկահայաստանի մեջ չի գտնվիր մեկ քրիստոնյա կին, որ ամուսնութենն առաջ անպատվված չըլլա»: Ահա թե ինչ տեսած են մեծ մայրերը և հանիները ...» (8.X.1920):

Եվ հետևում է «դատավարական» ապացուցում--հաստատումը՝ վկայությունների համոզիչ ընդոստ շեշտադրումներով. «Արդյոք Հայաստանի աղջիկները և կիները մաքառիլ չէի՞ն գիտեր. արդյոք հայ ընտանիքը պահանջված խիստ կարգ ու սարքը չունե՞ր: Ո՛չ: Փոքր Ասիո ցեղերուն մեջ ոչ մեկ ուրիշ ժողովուրդ այնքան նախանձախնդրությամբ պահած է ընտանեկան օջախը, որքան Հայերը:

Նույնիսկ Հայաստանի թշնամիները կխոստովանեն ասիկա» (8.X.1920):

Եվ ի լրումն ապացույցի հավելում է նույն գրքում տեղ գտած «հուզիչ» պատմությունը՝ արձանագրված Խըրիմյան կաթողիկոսի մի ճամփորդության միջոցին՝ Ախալքալաքում: 84-ամյա մի պառավի տանը հյուրընկալված կաթողիկոսին հետաքրքրում է, թե բազմանդամ այդ ընտանիքը, որում կային վաճառականներ, ուսուցիչ-ուսուցչուհիներ, բժիշկ, իրավաբան, «մաթեմատիկոս մը և քանի մը ուսա-

<sup>9</sup> Խոսքը «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году» (Մոսկվա, 1896 թ.) ժողովածուի մասին է:

նողներ» ... մանչեր, աղջիկներ, թռռներ, ինչպես է կառավարվում: Եվ «դյուցազներգական շունչով խոսակցությունը» վերջավորվում է ահա այսպես. «Ես իրենց կտրվեցնեմ հնազանդության պարտականությունը իրենց անդրամիկներուն հանդեպ, և կպատժեմ ծուլներն ու անկարգները:

— Ուրեմն պատժե՞լ ալ գիտես, քա՛ջ պառավ, — հարցուց կաթողիկոսը:

— Ապա ինչպե՞ս, պետություն մը կրնա՞ գոյություն ունենալ առանց պատիժի դրության: Իմ տունս ալ պատիկ պետություն մըն է:

— Իսկ ո՞վ է թագավորը:

— Ուրքերուդ հողը, հաճի Սարը:

— Օ՛հ, օրհնված ըլլան այն ծերունի մայրերը, որոնք այսքան լավ կապերով կապահպանեն հայկական ընտանիքը» (տե՛ս վերոհիշյալ գրքի 127-128-րդ էջերի տողատակերուն— *ԱՄ. Ձ.*):

Եվ սա հավատո հանգանակն է կաթողիկոսի. հավանությունը՝ գրող-իրավաբանի, որ շարունակելով հաղորդում է, թե 443 էջանոց այդ գրքի հեղինակներն են. «1. բեզգիացի Ռուան ժաքմենը, 2. ամերիկացի Գրինը և իռլանդացի Դիլլընը»: Գըրուն է Լազարևսկին և; ասես կայացնելով վճիռը՝ եզրակացնում. «Այս իրողություններեն եզրակացուցած են, թե յուրաքանչյուր հայ կնոջ անցյալը շատ ավելի խելագարություն և զարհուրանք կպարունակե, քան հայ տղամարդունը, և պատճառները շատ հասկնալի են:

Ա՛յդ է մոտիկ անցյալը, մոտիկ կըսեն, որովհետև 1895 - են միայն 25 տարի անցած է ...» (Ց.Մ.1920): Հավաստելով՝ դառնում է արդեն քանիեքորոդ անգամ հայ աղջիկների ու կանանց աչքերին՝ սեփական տպավորությամբ. «Հայ աղջիկներու աչքերու գեղեցկությունն ու խորությունը ուժեղ տպավորություն գործեցին վրաս», և դիտարկումների շարք՝ համապատասխան բացատրությամբ: Դրանցից քաղենք թեկուզ այս մեկը. «Ձատիկ էր, և ահա, պատերազմի և հեղափոխության օրերուն, Ուկրաինիո ամենեն աղքատ գյուղերուն մեջ կզգայի, որ տոն է, կերգեին, կօրորվեին և կարմիր հավկիթներ կփոխանակեին:

Հայաստանի մեջ Ձատիկի շաբաթը բոլորովին տարբեր էր և այս ոչ թե անցյալ դարուն, այլ 1915-ին: Ատոր տեղեկացա

կարդալով ֆրանսացի հեղինակ Հանրի Բարբիի մեկ գիրքը<sup>10</sup>, ուր կա պատմությունը արճեշցի հայ աղջկան մը». և ապա. «... Վանի աղջիկներուն կրած սարսափը անբաղդատելի է» (9.X.1920) և այլն:

Եվ, բնականաբար, լինելով «Չեխովի դպրոցի» հետևորդ՝ Լազարևսկին անդրադառնում է և հայուհու հանդեպ Չեխովի սիրո «տեսության» բնույթին. ըստ որի՝ «Չեխով զայն կբաղդատե շանթին հետ, որ պահ մը կփայլատակե, ամեն ինչ կլուսավորե և կանհետի: Իսկ այս բաղդատությունը կվերաբերե հայ մանկամարդ աղջկան մը ...»<sup>11</sup>: Եվ դարձյալ նկատի ունենալով նույն հայուհիներին՝ շարունակում է. «Անոնք ավելի սլացիկ և ճկուն կերպարանք ունին, անոնց աչքերը գեղեցիկ են, բայց և միշտ լուրջ:

Հաճախ ինձի այնպես կթվի, թե իրենց բիբերու լուրջ արտահայտության մեջ կգտնվի գլխավոր պատճառը այն գեղեցկության, որ ազդած է Չեխովի վրա: Անգամ մը ան ըսավ ինձի. «*Գեղեցկությունն ալ տաղանդ մըն է: Կթվի, թե այդ միևնույն խոսքը կգտնվի իր պատմության մեջ: Տաղանդ, այսինքն հատկություն մը, որ կարթնցնե ուրիշներու, երևութապես նույն մարդոց վրա գերազանցության գաղափարը*» (10.X.1920) :

<sup>10</sup> Խոսքը գրողի «В стране ужаса. Мученица Армения» (Թիֆլիս, 1919 թ.) գրքի մասին է (հայերեն թարգ.՝ «Սարսափի երկրին մեջ: Նահատակ Հայաստան», Կ. Պոլիս, 1919 թ.):

<sup>11</sup> Նկատի ունի Ա. Չեխովի «Գեղեցկուհիներ» հայտնի պատմվածքը (1888 թ.), որտեղ գրողն իրեն հատուկ վարպետությամբ նկարագրում է հայկական մի ընտանիք, ուշադրության կենտրոնում պահելով տանտիրոջ աղջկան՝ Մաշային: Գրողի վրա հենց առաջին հայացքից վերջինս թողել էր ցնցող տպավորություն, որի ազդեցության տակ էլ Չեխովը գրում է. «Սեղանի մոտ նստելով՝ նայեցի ինձ թեյ տվող աղջկա դեմքին և հանկարծ այնպես զգացի, կարծես թե ներսս քամի բարձրացավ, սրտիցս ցրեց օրվա տպավորությունները... Դեմս կանգնած էր մի գեղեցկուհի, և ես այդ զգացի առաջին հայացքից, ինչպես, օրինակ, զգում եմ շանթը» (Ա. Պ. Չեխով. Ընտիր երկեր, Երևան, 1987, էջ 191): Այնուհետև հաջորդում է հայ աղջկա «հազվագյուտ» գեղեցկության մանրամասն նկարագրությունը:

Հիրավի, սպառփչ սահմանում. *պատմական ճակատագրով պայմանավորված*, պատմական ճակատագրով թելադրված *լրջություն — արժանապատվություն՝ աննահանջ — անբեկանելի ցուցանիշ բիրերում արտացոլված դրոշմով*: Վկայությանը և ակնարկաչարի առաջին մասի սույն նովելատիպ վերջնահատվածի. «Թիֆլիս հասնելես առաջ բնակած եմ Բաթումի մեջ, ուր, ինչպես գիտեք, կային շատ անգլիացիներ: Դիտելով զանոնք, ինձի անկարելի եղավ չնկատել այն վես նայվածքը, զոր ունին երբեմն ուրիշ ազգերու, և մանավանդ Հայերու հանդեպ:

Եվ սակայն այդ ջենտլմեններեն մեկը, երկուքը և ավելին Բաթումեն մեկնեցան Հայուհիներ հարս տանելով իրենց հետ:

Ես աչքովս տեսա կառք մը՝ առնվազն վեց ձիով, ծաղկազարդ, ուղեկցությանը հեծելազորքերու, որ կտաներ երիտասարդ ամուլը՝ գեղեցիկ Հայուհին և դյուքված, կախարդված անգլիացին ...

Ու նկատեցի, ժպտեցա և մտածեցի, թե իսկապես պետք էր ճշմարիտ տաղանդ մը ունենալ հարկադրելու համար անգլիացի մը, որ կորսնցնե իր սովորական պաղարյունությունը, անգլիացի, որ շատ անգամ երկրաշարժեն իսկ այնքան չազդվիր» (10.X.1920):

Աստղանիշով բաժանված ակնարկաչարի երկրորդ մասը վերաբերում է հայ աղջիկների ու կանանց բնավորության, վարք ու պահվածքի արտահայտչական այլևայլ հատկանիշների դրսևորմանը՝ լինեն առաքինություններ, թե թերություններ, որը Լազարևսկու գրչով նորից նոր ծայր է առնում «գեղեցիկ հայուհիներով»: Այն է՝ «ես տեսած եմ շատ գեղեցիկ Հայուհիներ, բայց չեմ տեսած մեկը, որ բացարձակապես զվարթ ըլլա, այն զվարթութենեմ, որ կհայտնվի դեմքի յուրաքանչյուր մկանին մեջ:

Ո՛չ իսկ մեկ հոգի ...

Չտեսա ո՛չ ազնվական և ոչ ալ քաղքենի դասերուն մեջ, որոնցմով լեցված են հարավային Ռուսիո խոշոր կենտրոնները:

Արմավիր, Ռոստով և Թիֆլիս, իմ բնակության ընթացքին, կդիտեի Հայուհիներուն դեմքերը: Հայ աղջիկներուն երկրորդ հատկանշական գիծն է իրենց շրթներուն ծալքը: Ես չնկատեցի ոչ մեկ գրգռիչ ծիծաղ, զոր կարծակեն հաճախ Ուկրաինիո ու

Վրաստանի մանկամարդուհիները ... երկիրներ, որոնք պակաս դժբախտություններ չեն տեսած, և սակայն ավելի երջանիկ են, քան Հայաստանը:

Առանց բացվելու, հայ աղջկան շրթները բարձրաձայն կարտահայտեն այն ցավագին անհրաժեշտությունը, որուն ենթարկված է իրենց ամբողջ ազգը, տառապելու և լռելու, գերեզմանի մը պես լռելու համար ...» (10.X.1920):

Ապա նկարագրելով նրանց «լավ հագուստը», վարքը, ընտանեկան նիստուկացը, պարզելով բաղձանքներն ու ցանկությունները՝ Լազարևսկին իրավաբան-հետախույզի ճշգրտությամբ արձանագրում է, որ բոլորն էլ փափագում են սովորել. այլուր՝ միայն սովորել՝ Ռուսաստանում լինի, թե արտասահմանում: Եվ որ դա նշանակում է, թե հայուհին, ի վերջո, ազատագրվում է հեզությունից: «Պետրոգրադի սառնամանիքները, — գրում է ակնարկագիրը, — վախ չէին պատճառեր Կարսի և Ալեքսանդրապոլի բնիկներուն, և առտուն հաճախ կտեսնեի Վասիլևոյի Օստրովի մեջ այդ սևաչվի գանգրամազ մանկամարդուհիներեն՝ կարճահասակ, բայց առույգ, որոնք ամառնային հագուստ հագած՝ կաճապարեն պրոֆեսորի առաջին դասին հասնիլ» (12.X.1920): Եվ թվարկում է ուսումնական հաստատություններում ուսանած շրջանավարտների՝ Տերյան-Կորգանյան, Պապայան, Ալիմով-Էրիսով, Ադանյան քույրեր, Սիրիմանյան քույրեր ... Անկասկած՝ մերձավոր ծանոթությամբ ու տպավորություններով, որ հավասարապես բնորոշ է Լազարևսկու բոլոր հուշարկուններին:

Ամփոփելով հայ աղջիկների մասին ասելիքները՝ Լազարևսկին դա համարում է ավելի դյուրին, քան ամուսնացած կնոջ հոգեբանություն զննել-բնութագրելը, քանի որ՝ «Կինը, որ իր սերը կուտա մարդու մը, ա՛լ ավելի լռակյաց կդառնա»: Առավել ևս՝ «Ան չի սիրեր իր մտերիմ զգացումները հայտնել ոչ երջանիկ եղած ատեն, ոչ ալ երբ դժբախտ է: Ես չեմ ըսեր, թե ամուսնացած հայուհիները մինչև իրենց մահը հավատարիմ են իրենց ամուսիններուն: Ատիկա ճշմարիտ չպիտի ըլլար» (12.X.1920): Հեղինակի տպավորությունն ու համոզմունքն այն է, որ եթե ռուս, ֆրանսիացի, լեհ, նույնիսկ գերմանացի կինը՝ լքելով ամուսնուն, «լալով կամ առանց լացի» գանգատվելով ամուսնուց՝ չարախոսում է, ապա հայ

կինը՝ եթե գանգատվելու իրավունք էլ ունենա, չի գանգատվի՝ «ամենաբարձր արժանապատվությամբ»: Ավելին. որպես բարձրագույն արժանիք, հայ կնոջ այդպիսի նկարագիրը նա համարում է անբաղդատելի բացառություն՝ շեշտադրելով. «Չեմ գիտեր, թե այս երևույթը հատկանշակա՞ն է հայ կիներուն համար, բայց ինձի կթվի, թե այդ հազվագյուտ բացառությունն ընդ է ուրիշ ազգերու կիներուն համար» (13.X.1920) :

Ինչպես տեսնում ենք, կանանց պարագայում ևս Լազարևսկին հաստատում է առաքինության նույն չափանիշը՝ արժանապատվությունը, որը նույնպես, իբրև մարդկային բարձր հատկանիշ, պատիվ է բերում այս անգամ էլ հայ կանանց:

«Կիների» մարդկային էության ու կեցվածքի քննական արժեվորումը շարունակվում է, և գրողի ուշադրությունն այս դեպքում էլ գրավում է ամուսին կորցրած, երկու սիրուն զավակ ունեցող մի գեղեցիկ կին՝ հազիվ քսանհինգ տարեկան. «ձեռքը խնդրեցին հարուստ և ընկերային բարձր դիրք գրաված մարդիկ», և կինը մերժում է՝ ամեն անգամ նույն պատասխանով. «— Վերամուսնանալով՝ ինքզինքիս համար բան պիտի գողնամ զավակներես, և իրավունք չունիմ այդպես ընելու, անոնց մե՞ղքը ինչ է, որ հայրիկը մեռած է: Ես պարտիմ անոնց, թե՛ հայրը և թե՛ մայր ըլլալ» (13.X.1920), — վկայում է ակնարկագիրը՝ գնահատելով զավակների հանդեպ հայ մայրերի անձնուրաց պարտավորության գիտակցությունը, մանավանդ երբ չկա հայրը:

Իրոք, հեղինակի մտաբերումների շարքն անսպառ է, մի տեղ էլ նրբանկատությունը նահանջում, և հիշողությունը գալիս գանվում է ցեղասպանության տարիների զարհուրելի իրողությունների՝ «ամենե աղքատ, գրեթե մուրացիկ դասերու, այրիներուն և մենավոր կիներուն» ճակատագրերին, որպիսիք ականատեսի դառնությամբ դիտարկում է Լազարևսկին. «Երկու անգամ դժբախտությունը ունեցա Նովոռոսիյսկեն Բաթում և Բաթումեն Տուապսե ճամփորդելու: Շոգենավերը լեցուն էին հայ գաղթականներով, որոնք իրենց հայրենիքը կղառնային: Կիներու և երեխաներու թիվը շատ ավելի էր այրերեն:



Երգչուհի  
Ելենա Տերյան-Կորզանովա (Ղորղանյան)



Երգչուհի  
Նադեժդա Պապայան



Մարիամ Ակիմովայի դիմանկարը  
(նկարիչ՝ Վ. Սերով, 1908 թ.)



Դաշնակահարուհիներ  
Հեղինե և Եվգինե Աղամյան քույրեր



Դաշնակահարուհի  
Մարգարիտա Միրիմանյան

Այնտեղ տեսա թշվառություն մը, որուն մասին երագիս մեջ անգամ չէի կրնար գաղափար ունենալ:

Չեմ ուզեր խռովել ընթերցողներս՝ նկարագրելով բոլոր արհավիրքը: Անոթությունը և սովը կչարչրկեին անգթորեն. կլսեի աղաղակներ և հեծեծանքներ, բայց ուշադիր դիտող մը ըլլալով հանդերձ չնկատեցի, որ անքնութենեն և անոթութենեն գալարուն մայրը ո՛ր և է հարված փորձեր իր գավակը լռեցնելու ...

Հանդիմանությունները կըլլային խղղուկ մրմռութով մը, իսկ գորովանքի ու փայփայանքի տեսարանները ավելի շատ էին:

Չափազանցություն չպիտի ըլլա, եթե ըսեմ, որ միայն այստեղ, թերևս առաջին անգամ ըլլալով, ըմբռնեցի, թե ի՞նչ է մայրը ընդհանրապես և թե ի՞նչքան մեծ է իր տռամը, երբ չի կրնար փարատել իր գավակին անոթությունը ...» (13.X.1920):

Մայրական դրաման՝ ամենից դրամատիկը, ավելի քան ողբերգական՝ հայ ժողովրդի մայրերի պարագայում, թերևս, այդ պատճառով էլ այդպես սրտառուչ, այդչափ համակող է հայոց մայրերգությունը: Բայց և ի պատիվ գրող-իրավաբանի, արժանին հատուցենք նրա նրբազգաց, զգայական «հոտառությանը», նաև ժամանակի ու ապագա ընթերցողի զգացողությունը և տրամադրությունը կանխազգալու, որսալու դյուրազգաց կարողության համար:

Եվ եթե մինչև այս պահը հեղինակի ուշադրությունն ու հուշարկունը գամված էին թշվառներին, ապա այդ պահից նա շրջվում և անարգանքի սյունին է գամում հայ հարուստների անարժան-անպատիվ խավին, դժբախտաբար, մեծապես տեղին ու ցավալի: Անչափ ցավալի այսօրինակ հուշարկուններով. «Թիֆլիսի մեջ հանդիպելով հազարավոր մուրացիկ տղոց, հաճախ ես ինձի հետևյալ հարցումը կուտայի, ո՞րն է ավելի զարհուրելի այս որբերուն համար, մա՞հը, թե մոր բացակայությունը: Եվ ամեն անգամուն ալ ես ինձի կպատասխանեի. անշուշտ, մորը բացակայությունը ...

... Կթվի, թե նյութես շեղեցա: Բայց անկեղծ չպիտի ըլլայի, եթե ուրիշ խնդիր մըն ալ չշոշափեի:

Ինչո՞ւ հայ հարուստներ անհրաժեշտ միջոցներ ձեռք չեն առներ, այս արհավիրքը դարմանելու համար:

Հավանաբար կան պատճառներ, որոնց ես ծանոթ չեմ կամ չեմ հասկնար»: Ապա հետևում է ահա այս ընդհանրացումը.

«Միայն, երբեմն այն գաղափարը կունենամ, թե թշվառ մայրերու ու զավակներու հանդեպ անտարբերությունը ամենեն քստմնելի երևոյթն է, զոր տեսած են հայ բարձր ընկերության մեջ ...» (13.X.1920):

Այո՛, ամբողջ հարցն այն է, որ նման «բարձր ընկերությունները» բոլոր ժամանակներում էլ (առ մեր օրերը) երբեք բարձր չեն եղել: Առանձին Թամամշև-Մանթաշև բացառություններով: Իսկ «արհավիրքը դարմանելու» համար երբեք էլ միահամուռ ջանք, ավելի ճիշտ՝ ազգային արժանապատվություն չեն դրսևորել. գերի են եղել անհարկի շքեղության, փառասիրության, ազահության ... Ուրեմն և երբեք անտեղի չէ ո՛չ մի նկատառում կամ շահ չունեցող Բորիս Լազարևսկի մարդ-անհատի նզովք հիշեցնող խոսքը. «Երբեմն ինձի այնպես կթվի, թե այս մեծ մեղքին համար է, որ Աստված կամ ճակատագիրը ո՛չ երջանկություն և ոչ ալ հանգիստ կուտա ամբողջ Հայաստանի ...» (13.X.1920):

Ապա Լազարևսկին անցնում է «հայ ազնվականության պատկանող» կանանց ու աղջիկներին, որոնք «իրենց մանկութենեն ուրիշ բան չէին հագներ, բայց միայն նուրբ կտավե զգեստ մը և արտասահմանի մեջ կառնեին իրենց ուսումը»:

Անոնք ամառը կանցնեին Պիարից կամ Օսթանտ և կճանչնային աշխարհի բոլոր նշանավոր դեմքերը: Նյութական հոգեր չունեին, բայց և այնպես ոչ մեկ երջանիկ կթվեր: Իրենց աչքերը կարտահայտեին միշտ անձկություն կամ մտահոգություն և նոր տպավորություններու հավիտենական որոնումը: Միշտ բարոյական ծարավը ունեին: Ահա՛ թե ուր պետք է փնտրել իրենց անձկության գլխավոր պատճառը» (14.X.1920):

Ըստ հեղինակի, այդ աղջիկներն ունեն «ընկերուհիներ, բայց ոչ բարեկամուհիներ, բացի մանկության շրջանեն» և քանի մեծանա՝ այնքան կավելանա իր բարոյական մեռակությունը ... «Ընկերուհիները կմնան, բայց բարեկամուհիները կչվեն անդարձ...». և ապա. «Ռուս կամ գերման աղջիկը, առաջին հուսախաբութենե վերջ, կփնտրե նոր բարեկամություն մը: Հայուհին մինչև ամուսնությունը, և երբեմն նույնիսկ մինչև մահը, երբեք չի հավատար կիներու բարեկամության»:

Եվ իր հոգին կմնա մենավոր» (15.X.1920):

Ապա հիշատակվում են և այդ «մենավոր» հոգիներին ինքնահատուկ բնավորության, վարք ու խառնվածքի հատկանիշներ, ինչպես, ասենք, առաջին տպավորության առանձնակի կարևորությունը՝ լինի թատերախաղ, գիրք, մարդ՝ հաճո կամ անհաճո... Ապա այսպիսի՝ համոզված. «Միայն մեկ բան կհաստատեն: Ոչ մեկ ազգի կնոջ հոգին այնքան մենակ է, որքան հայ կնոջը» (15.X.1920): Եվ գրող-իրավաբան՝ ասել է և հոգեբան Լազարևսկին ենթադրում է, թե այդպիսի խառնվածքը պետք է որ ունենա խորհրդատվության ու «խորհրդապաշտության» հակում: Այնինչ, Ռոստոմի և Արմավիրի եկեղեցիներում կան ծերեր, կանայք ու տղաներ, բայց մանկամարդուիներ չեն լինում: Հանդիպել է միայն Ջատկին: Նույնը եղել է Երևանում, և հետևում է եզրակացությունը. առհասարակ «պաղ են կրոնքին հանդեպ»: Այդ մասին հարցրել է մի հայի և ստացել է ահա այսպիսի պատասխան. «— Ատենոք մենք՝ Հայերս, շատ հավատացյալ էինք և անդադար կաղոթեինք: Հետո տեսանք, որ Աստված մեզի չօգնեք և ամեն հավատք կորսնցուցինք» (16.X.1920):

Այդուհանդերձ, «հետախուզության» շնորհիվ հասկանալով տղամարդկանց «գործնական մտքի» պատշաճությունը՝ Աստծու հանդեպ, կանանց պարագայում չի հասկանում: Ի վերջո, գտնվում է մի մանկամարդուի, որը սկզբունքորեն Աստծուն չի հավատում, «անդենական կյանքին» ևս, և հեղինակի խնդրանքով արտասանում է իր բանաստեղծություններից մեկը:

Բանաստեղծական տողերին հետևում են, այսպես ասած՝ չեզոքացնող, երկսայրի տողեր, որոնց, իրոք, տիրապետում են միայն հմուտ ու ազնիվ հրապարակախոսներ: Այդպիսին է և Բորիս Լազարևսկին. խորաթափանց, շրջահայաց, օբյեկտիվ-ուղղամիտ, ի մասնավորի նաև վերջնաէջերի սահմանումներ, ընդհանրացումներ ի մի բերելիս: Անշուշտ, ցավ ու դավի, անելանելիության ծանրությունը փոքր-ինչ մխիթարական դարձնելու, բեռնաթափելու միտումով: Բայց ծանրությունը անելանելիությամբ մնում-առկախվում է գրող-իրավաբանի՝ նման պատկերավոր առած-ասացվածքային համազոր տարողությամբ. այն է՝ «Ես չեմ հիշեր այս բանաստեղծության վերջին տողերը, բայց այս քանի մը տողերը շատ բան բացա-

տրեցին ինձի և հասկցա, թե անհարմար է այդ խնդիրներու մասին հարցաքննել մանկամարդուհին՝ *աղջիկը ժողովուրդի մը, որ կորսնցուցած է իր հավատքը, ճիշտ ինչպես չվանի մասին չեն խոսիր կախված մարդու տան մեջ»* (16.X.1920), — ճշգրիտ բանաձևում է նրբազգաց գրող-իրավաբանը: Եվ, այդուհանդերձ, անհուսության մատնված ժողովրդի համար որոնում է ինչ-ինչ հուսո հանգրվաններ: Իհարկե, այս անգամ նույնպես հայուհիների օգտին, նրանց համար՝ առայժմ այս դեղատոմսով. «Բայց ամեն կանոն իր բացառությունը ունի, և եթե ինձի չէ հանդիպած հավատավոր կամ խորհրդագրած մանկամարդուհի, կրնամ ըսել, թե գիտեմ և կարդացեր եմ քերթվածները հայ լուրջ բանաստեղծուհիի մը: Անոր բանաստեղծություններեն յուրաքանչյուրը տոգորում է խոր հավատքով մը առ Աստված:

Կարդացեք Շահինյանը, որ Մոսկվայի մեջ ուսանեցավ և ռուսերեն գրեց, բայց իր տաղանդը ավելի միջազգային է և ճշմարիտ» (16.X.1920): Արձանագրում է Լազարևսկին՝ կանխագուշակելով Մարիետա Շահինյանի ազգասեր գործունեությունը ողջ կյանքում:

Ինչպես նշվեց, «Հայաստանի աղջիկներն ու կիները» թարգմանվել ու հրատարակվել է Պոլսում: Բնականաբար, այդ միջոցին հեղինակն ունեցել է բազմաթիվ ծանոթություններ, որ հաստատվում է ակնարկում տեղ գտած մի ամբողջական, հետաքրքիր այսպիսի հատվածով. «Կրնայի թվել առնվազն տասնյակ մը բանաստեղծուհիներ և գրագիտուհիներ, բայց անոնց լեզվին անծանոթ ըլլալով, չպիտի կրնամ մեջբերումներ ընել: Միայն խորհուրդ կուտամ ամեն հայ աղջկան կարդալ Սրբուհի Տյուսաբի գործերը: Տիկին Տյուսաբ ծնած է 1842-ին (1841-ին—*ԱՄ. Ձ.*) և մեռած՝ 1901-ին: Ան առաջինը եղավ, որ նվիրվեցավ հայ կիներու և աղջիկներու պաշտպանության: Չեզի համար գաղտնիք մը չէ, թե շատ չըներ, որ, համաձայն ընդունված սովորության, հայ կինը չէր համարձակեր խոսիլ իր ամուսնուն ներկայությանը: Թերևս ատիկա առաջ կուգար այն բանեն, որ *հայ տղամարդիկը շատ կսիրեն իրենք խոսիլ կամ թերևս Արևելքի առանձնահատուկ կարգապահության հետևանք էր այդ:*

Տյուսաբի լավագույն և ամենեն կարևոր գործերն են «Մայտա», «Սիրանույշ» և «Արաքսիա կամ Վարժուհին»: Չեն

գիտեր, թե այս գործերը թարգմանվա՞ծ են ռուսերենի, բայց շեշտել հետևյալ իրողությունը, կարևոր է: Անցյալ դարու կեսին, երբ Արևելքի կիներուն մեծամասնությունը կարդալ անգամ չէր գիտեր, հայաստանցի կին մը համարձակվեցավ ասպարեզ իջնել իր իրավունքներուն պաշտպանության համար, և իբրև միջոց ընտրեց գրականությունը: Անոր հաջորդեցին ուրիշներ՝ իրենց ժողովուրդին տանջանքները հասցնելով մինչև Եվրոպա:

Ծանոթացած ըլլալով, թեև շատ հարևանցի, հայ կին գրողներու՝ իմ գրչի քույրերուն կենսագրությանց, նկատեցի, որ գրեթե բոլորն ալ կմեծնային և իրենց ուսումը կառնեին Պոլսո մեջ կամ Ռուսաստան և կամ արտասահման, և հասկցա հայուհիներուն բուռն ձգտումը՝ մեկնելու ո՛ր և է տեղ առաջին պատեհությամբ» (16.X.1920):

Հայ աղջիկներին ու կանանց վերաբերող ռուս ուսումնասիրող-ականատեսի հայացքների ու գնահատանքի անդրադարձի վերծանման-իմաստավորման բանալին ևս տրամադրում է հեղինակը՝ հակիրճ ամփոփումով՝ ծաղկաքաղով ներկայացվող այս հատվածներով ու տողերով. «Անգամ մը փողոցն անցած ատեն ... լսեցի. «Հայերը իրենք են պատասխանատուն իրենց կրած դժբախտությանց»:

... Ես քաղաքականութենե չեմ հասկնար, ատիկա իմ գործս չէ, բայց գրողի հոտառությունը ինձի կզգացնե, թե ատիկա բոլորովին ճիշտ չէ:

Ենթադրենք, թե այդ մեղադրողը կամ անճարակ հոգեբանը քիչ մը իրավունք ուներ իր խոսքին մեջ. «Հայերը իրենք են հանցավորը»: Բայց այն չհամարձակեցավ ավելացնել «Նաև Հայուհիները»: Եվ սակայն ոչ միայն իմ, այլև ուրիշներու կողմն մեջբերված իրողությունները կապացուցանեն, որ Վանի լճին մոտ և Ղարաբաղի մեջ ամենեն ավելի կիները, աղջիկները և մանուկներն են, որ տառապեցան:

Եվ համարձակորեն պիտի պատասխաներ, թե առաջին և երկրորդ ակնարկին:



Մարիետա Շախինյան  
(նկարիչ՝ Տատյանա Գիպպիուս, 1911 թ.)



Սրբուհի Տյուսաք

— *Ինչե՛ր կան խոսելիք Հայաստանի աղջիկներու և կիներու ճակատագրի մասին, և պետք է այդ բոլորը ըսել այնպես, որ ամբողջ աշխարհը լսե և մտածե այդ լռակյաց և հլու դժբախտներուն վրա ...* »: Եվ վերջապես. «միակ սփոփանքը և միակ հանգիստը Աստծու կողմե լքված Հայաստանի, ինչպես և դժբախտ Ռուսաստանի համար ...

Մշակույթն դուրս երջանկություն՝ չկա և չի կրնար ըլլալ երկրի մը համար: Եվ այն երկիրը, որուն կիները և ապագա մայրերը այնքան տենչանք ունին այդ մշակույթին, չի կրնար կորսվիլ, ինչքան ալ պզտիկ ըլլա իր երկրամասը, ինչքան ալ բազմաթիվ ըլլան իր թշնամիները... Որովհետև զգացումին և տաղանդին ուժը ամեն տեղ է և միշտ գերազանց է բռնության անիծապարտ գործեն» (16.X.1920):

Ասել է՝ «անեծքի» պարտք - պարտավորության արժանի ...

1914 - 1917 - 1920 թթ.՝ Առաջին աշխարհամարտ, հայոց ցեղասպանություն—«Մեծ եղեռն - մեծ արհավիրք», հեղափոխություն—հակահեղափոխություն և Հայաստանի Հանրապետություն, իրողությունների բովում հայ ժողովրդին վիճակված ողբերգական ճակատագրի ընթացքով՝ խորհրդանշական ավարտ:

Մերօրյա ընթերցողին ահա այսպես է ներկայանում Բորիս Լազարևսկու տաղանդավոր գրչով թղթին հանձնված՝ «խորազգած» մարգարեական սահմանումներով, նրբամիտ բանածևերով, նրբիմաստ կռահումներով, առավել ևս ուշագրավ դիտարկումներով լի «Հայաստանի աղջիկներն ու կիները» ակնարկաշարը:

## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հետադարձ հայացքով 1920-ից առ այսօր վերժանման-պարզաբանման արժանի եղելություններ՝ առհասարակ ռուսական կայսրության, ապա խորհրդային երկրի ժողովուրդների հարաբերությունների պատմության, պատմական հոգեբանության ու կյանքի իսկության՝ բոլոր առումներով: Ուրեմն և խորին երախտագիտությամբ հիշատակի խոսք ուղղենք ինչպես գրող-իրավաբան Բորիս Լազարևսկուն, այնպես էլ նրան ծնած Ուկրաինայի ժողովրդին, մտաբերելով նաև, որ հետագա տասնամյակներով մինչ օրս՝ ի դեմս Պավլո Տիչինայի (որը, ի դեպ, «լավ» տիրապետում էր հայերենին՝ ինչպես վկայում է Մ. Սարյանը)<sup>1</sup>, Մ. Ռիլսկու, Մ. Բաժանի ... մինչև Ի. Դրաչ ... և ուրիշներ, աննահանջ՝ առօրյա, թե ընդհատակյա սատար են եղել հայ ժողովրդին ու նրա գրողներին: Վկայություններից մեկն էլ 1935-ի օրերին հայ ժողովրդին ուղղված Միկոլա Բաժանի սրտառուչ-նվիրական այս տողերն են. «Խնդությունն առաջին անգամ է մտնում հին Ուրարտու աշխարհը: Ո՛չ մի տեղ այնքան խորը չես գիտակցում այն դարերի ամբողջ սարսափը, ամբողջ հուսահատականությունը, ամբողջ խավարը, որոնց էնգելսն այնպես հանճարեղ և արդարացի կերպով մարդկության նախապատմություն է անվանել,— որքան այս հին, քարքարոտ երկրում, որի պսակն է հանդիսանում Արարատի մաքուր, արծաթե սաղավարտը: Ժողովուրդն ապրել է բոլոր տառապանքներն ու կտտանքները, բոլոր հեծեժանքներն ու հառաչանքները, որոնք ստեղծել են այդ ահավոր ու երկրագնդի հինգ վեցերորդականի համար դեռևս չավարտված պրեյուդը: Եվ նրա աչքերի մեջ, որպես հիշողություն, դեռևս երբեմն առկայծում են անցյալի ծանր ստվերները »<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Մ. Սարյան. Արվեստի մասին, Երևան, 1986, էջ 173 - 174:

<sup>2</sup> Սովետահայ գրականության տարեգրություն, Երևան, 1957, էջ 299:

Բորիս Լազարեսկուն ծայնակցող ազնիվ-արդար արծագանք, հավատարիմ բարեկամի ... և բախտակցի. թեկուզ միայն հիշենք ուկրաինական ժողովրդի՝ կոլեկտիվացման տարիների միլիոնավորների ոչնչացումը սովից ...

Այսպիսով, XX դարի 10-ական թվականներին իրենց ստեղծագործություններում հայ կյանքն արտացոլած ռուս գրական գործիչների շրջանակն ընդլայնվում է մինչ այժմ համարյա անհայտ ևս մեկով՝ ի դեմս Բորիս Լազարեսկու: Դրա խոստուն վկայությունն են ժամանակի ճանաչված գրողի շփումները Չայաստանի և հայ իրականության հետ, որոնք, ինչպես տեսանք, իրենց արտահայտությունն են գտել նրա ստեղծագործության և հասարակական գործունեության մեջ:

БОРИС ЛАЗАРЕВСКИЙ  
ОБ  
АРМЕНИИ И АРМЯНСКОЙ ЖЕНЩИНЕ

АНУШАВАН ЗАКАРЯН

Р е з ю м е

Среди русских литературных деятелей 10 - х годов ХХв., отразивших в своих произведениях армянскую действительность, достойное место занимает известный в свое время беллетрист *Борис Лазаревский* (1871—1936). Будучи сыном украинского историка, он получил образование на юридическом факультете Киевского университета, занимал посты в военном и морском ведомствах. После русско - японской войны посвятил себя литературе: в основном писал небольшие романы на любовные темы, подражая Чехову, считая себя специалистом - психологом женской души.

Можно с уверенностью сказать: нововыявленные материалы показывают, что малоизвестного в армянской среде русского писателя многое связывало с Арменией и ее культурой, что нашло отражение и в его литературно-общественной деятельности. Так, известный армянский поэт В. Терьян в письме от 2 апреля 1915 г. из Петрограда, адресованном общественно-культурному деятелю К. Микаэлян, писал: "Мне сообщили, что мой адрес разыскивает Борис Лазаревский (знаешь его, конечно), думаю, с таким же делом (имеется в виду издание сборника "Поэзия Армении".—*Ан. З.*)".

Ю. Веселовский в статье "Русская литература и армянская жизнь", написанной в 1916 г., говоря об отра-

женин армянской действительности в новейшей русской литературе, упоминает и Б. Лазаревского, отмечая, что он "также показывает нам в одном из своих рассказов интересный женский образ, взятый из того же мира".

В августе 1919 г. в тифлисской газете "Кавказское слово" печатается рассказ Б. Лазаревского "На чужбине", а в апреле 1920 г. в газете "Слово"—"Брошечка". В этих рассказах его героини—армянская девушка и женщина.

В 1919-1920 гг. Б. Лазаревский для армянства городов России — Ростова, Армавира, а также Тифлиса, Еревана выступил с лекциями "Девушки и женщины Армении", где обстоятельно представлены взгляды и оценка писателем армянской женщины, армянской действительности в целом. Лекции вызвали большой интерес в армянских общественных кругах. После одной из этих лекций в Тифлисе Лазаревский посетил великого армянского поэта Ов. Туманяна, о чем свидетельствует его запись в альбоме поэта.

Б. Лазаревский, отправляясь в Париж через Константинополь, в 1920 г. в нескольких октябрьских номерах местной газеты "Чакатамарт" ("Битва") публикует в переводе на западноармянский цикл очерков - исследований "Девушки и женщины Армении".

К книге приложены два рассказа и цикл очерков Б. Лазаревского. Помещена статья известного русского литературно - общественного деятеля С. Городецкого "Лирик прозы (портрет Бориса Лазаревского)", а также, для более полного раскрытия темы, приводятся мнения и наблюдения об армянской женщине некоторых русских деятелей 80 - х годов XIX века.

BORIS LAZAREVSKY  
ABOUT  
ARMENIA AND ARMENIAN WOMEN

ANUSHAVAN ZAKARYAN

S u m m a r y

Among Russian literary workers of the 10s of the 20th century that reflected Armenian reality in their works famous novelist of his time Boris Lazarevsky (1871-1936) has a deserving place. Being the son of a Ukrainian historian, he was educated at the faculty of law of the Kiev university, held posts in the military and nautical departments. After the Russian-Japanese war he devoted himself to literature: wrote mainly short novels on love themes, imitating Chekhov, considering himself a specialist-psychologist of a woman's soul.

It is safe to say: newly-found materials show that a lot connected little known among the Armenians Russian writer with Armenia and its culture, which found reflection in his literary-social activity, too. Thus, well-known Armenian poet V.Teryan in his letter from Petrograd (April 1, 1915) addressed to public-cultural figure K. Mikayelyan, wrote: "I was informed that Boris Lazarevsky is looking for my address (you know him, of course), I think, connected with the same matter (publication of V. Bryusov's collection "Poetry of Armenia" is meant . - *An. Z.*)".

Yu. Veselovsky in his article written in 1916 "Russian Literature and Armenian Life", speaking about the reflection of the Armenian reality in the newest Russian literature mentions also

B. Lazarevsky, saying, that he “also shows us an interesting image of a woman, taken from that world in one of his stories”.

In the August of 1919 in Tiflis, in the newspaper “Kavkazskoye Slovo” (“Caucasian Word”) B. Lazarevsky’s story “On the Strange Land” (“Na Chuzhbine”) was published and in the April of 1920 in the newspaper “Slovo” (“Word”) – the story “The Brooch” (“Broshechka”). In these stories his heroines are an Armenian girl and a woman.

In 1919 - 1920 B. Lazarevsky read lectures called “Girls and Women of Armenia” for the Armenians of Russian towns Rostov, Armavir, and also for Tiflis, Yerevan, in which writer’s views and estimation of an Armenian woman, Armenian reality, on the whole, are thoroughly presented. Lectures caused great interest among the Armenians.

After one of such lectures in Tiflis Lazarevsky visited the great Armenian poet Hovh. Toumanyán, illustration of which is his record in poet’s album.

Going to Paris via Constantinople in 1920 B. Lazarevsky in some of October numbers of the local newspaper “Chakatamart” (“The Battle”) publishes his series of essays-papers “Girls and Women of Armenia” in the translation into Western Armenian.

In the book are also added B. Lazarevsky’s two stories and a series of essays. We have placed well-known Russian literary-public figure S. Gorodetsky’s article “Lyric Poet of Prose (Boris Lazarevsky’s Portrait)” and also, in the purpose of more complete discovery of the theme, views and observations about Armenian women of some Russian public figures of the 80s of the 19th century are brought.



ԲՈՐԻՍ ԼԱԶԱՐԵՎՍԿՈՒ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



## НА ЧУЖБИНЕ

С чувством жгучего одиночества ходил я по горячим улицам Тифлиса, пошатываясь точно пьяный, под палящими лучами солнца и думал: " Вот сейчас упаду и умру здесь, на чужбине. Затем или обращусь в ничто, или улечу в ту страну, где ни для кого нет никакой чужбины, где все знают друг друга без слов и где для всех родина ...".

Подлейший из всех инстинктов — инстинкт самосохранения—загнал меня в какое-то маленькое, уютное и относительно прохладное кафе. Хорошенькие кельнерши весело подавали. Старушка — кассирша с ласковыми, спокойными глазами давала сдачу, курила тоненькие папироски и отмечала что-то на квадратном листке бумаги.

Входили англичане и молча садились за столики. Разговаривали тихо какие-то дельцы. Возле окна ели мороженое две жгучие брюнетки в белых платьях — одна постарше, а другая совсем молоденькая, должно быть, лет шестнадцати, с темными невеселыми глазами, в которых было написано, что может быть и она скоро очутится там, где для всех — общая родина.

У меня всегда была способность угадывать это ...

И вдруг я вспомнил почти такие же глаза, которые я видел двадцать лет назад, сначала в вагоне, а затем здесь, в этом самом городе.

Тогда я умел еще загораться от одного нежного колебания длинных ресниц.

Девушки ехали с отцом и матерью в купе 1-го класса, кажется, из - за границы. Мы познакомились, но разговаривали немного, хотя ехали вместе целые сутки. Я успел

только узнать, что армянское имя девушки по - русски означает любовь, что она в прошлом году окончила гимназию и очень любит читать. Затем и без слов было видно, что это очень богатые люди.

Красота, богатство и молодость — три фактора, как выражаются г.г. марксисты, обеспечивающие личное счастье. А между тем первое чувство, которое проникло в мое сердце после знакомства с девушкой, — была грусть тихая, безнадежная и необъяснимая, какая остается во всем организме, когда выйдешь из церкви, прослушав спетую великолепным хором панихиду.

Самое имя девушки, Любовь, не говорило мне о радостях и наслаждениях и напоминало почему-то формулу Кнута Гамсуна: "Любовь — несокрушимая печать, что хранится всю жизнь, хранится до смерти, хранится и после смерти" ...

Однако, занимая свою попутчицу, я старался рассказывать ей все веселое и смешное и радовался, если она улыбалась.

Мы стояли у окна вагона и глядели на еще розовые, но уже потухающие вершины Эльбруса.

Когда совсем стемнело, поезд остановился возле какой-то большой станции, где я успел выпить стакан чаю и купил томик Чехова с его замечательным рассказом "Красавицы".

Снова поехали.

Мне захотелось подарить эту книгу барышне и сделать надпись, кому и от кого. Таким образом я узнал ее фамилию. Она поблагодарила меня одним движением ресниц. Затем мы разошлись по своим купе, чтобы спать.

Хотя я и лег и закрывал глаза, но забыться не мог. Влюбленность уже проникла в мой мозг и душу и тревожила. Сами собой выплывали слова Гамсуна и захватывала нервы радость не совсем обыкновенная: мне было весело от сознания, что я никогда больше не буду разговаривать с этой девушкой и никогда она не

сделается моей шаблонной знакомой и не омрачится воспоминание о ней ничем обычным, — земным.

Впрочем на другой день я еще раз увидел мою спутницу на улице в Тифлисе, но она не заметила меня, я даже не успел снять фуражки; а вечером уехал дальше.

Все это было приблизительно лет двадцать назад.

Миновало много радостей и печалей.

Самые содержательные дни моей жизни протекали в Петербурге. Было много любви и ревности и даже восторгов, но никогда ничего похожего на то чувство, которое я пережил когда-то в вагоне.

Совсем случайно я узнал, что моя бывшая спутница также жила и была замужем в этом самом Петербурге, но уже умерла.

И насколько меня поразило то, что я мог ее видеть, но не увидел, — настолько же не поразило известие о ее кончине.

Я только подумал:

"Ведь не мог же в самом деле цветков горгензии красоваться и жить под небом, похожим на солдатское сукно ...

Ведь не могли же зрачки, в которых отражались розовые вершины Эльбруса, долго глядеть на грязный лед Фонтанки ...

Ведь не могла же молодая душа, уже понимавшая проникновенного Чехова, понимать ту некрасивую насквозь материальную жизнь совсем чужого ей города".

Повторяю, я не удивился и даже не опечалился, как будто мне сказали, что она переехала только в другое место, где нет понятий, тесно связанных с понятиями о физической жизни на земном шаре, но остается способность мыслить и видеть и потому ей там гораздо удобнее ...

Мало того, мне показалось, что в тот момент, когда я узнал о ее физической смерти, она вспомнила меня и нашу встречу в вагоне.

И сегодня, именно она, именно она нарочно послала в это кафе похожую лицом на нее, такую, какой я ее встретил, для того, чтобы в моей памяти снова прошел тот земной день моей молодости.

Когда я очнулся от набежавших мыслей и поглядел в сторону окна, где только что сидели две женщины, их уже не было.

Сам не знаю, почему я спросил кассиршу, кому принадлежит дом, в котором помещается кафе и услышал в ответ фамилию той, которая носила имя — Любовь.

Это совпадение тоже не поразило меня, только не показалось совпадением, а чем-то другим, — я не знаю, как назвать ...

На улице была такая же трудно выносимая жара, через десять шагов я опять начал покачиваться и снова думал, что вот, может быть, сейчас упаду и умру, но подлейший из инстинктов уже не мучил и не пугал меня...

11 августа 1919 г.

Тифлис

---

Кавказское слово, 13. VIII. 1919.

## БРОШЕЧКА

Сначала Иванов и Коваленко шли в хвосте страшного обоза, шли целых пять дней, стараясь не обращать внимания на валявшиеся по краям шоссе трупы, которые люди почему-то поленились сбросить в пропасть. Слушали плач женщин и детей, ругательства погонщиков и глядели на искаженные лица и мучения,

никогда не виданные и не слыханные ни в Сибири, ни на Сахалине.

И уже не было жаль ни самих себя, ни идущих впереди...

По утрам, перед восходом солнца, они глядели, как сама собой любовалась и кокетничала природа: горы и снежные вершины из нежно розовых делались голубоватыми, затем контуры яснили и строились в синие цепи, те самые, на которые смотрел когда-то все понимавший и предвидевший пророк Михаил Лермонтов...

Настанет год...

И чем необузданнее кокетничала на рассвете природа, тем злее бывали утренние морозы.

Южанин Коваленко несколько раз плакал, кутаясь в рваную шинелишку, которую таскал с 1914 г. Иванов молча стучал зубами. Но всходило солнце и делалось легче...

Они отстали от обоза не сразу: Коваленко стер ногу, — решили свернуть в сторону, на извилистую тропу поискать деревню и отлежаться. Опять шли двое суток, но деревни не нашли и людей не видели, только случайно наткнулись на большой мешок с сухарями и полудюжиной банок с консервами, должно быть кто-то украл несколько таких мешков и один обронил. Коваленко увидел сухари, перекрестился и сказал:

— Это будут наши разговеты... Впрочем, кто его знает — какая неделя страстная или святая и какой день? ... Может, сегодня Благовещение, может, и светлый праздник.

— А тебе не все равно? — мрачно спросил Иванов.

— Оно, конечно, пожалуй, что и все равно... А все-таки, может Господь ради праздника и еще какое-нибудь чудо пошлет.

— Забудь эти пустяки...

Чтобы переменить разговор Коваленко сказал:

— Давят меня эти горы, дышать трудно... То ли дело у нас на Украине: на сорок верст крутом видно.

И вдруг запел болезненным тенором:

Ой у полі могила  
З вітром говорила  
Не вий вітре буйнесенькій  
Шоб я черніла...

— И эти пустыки забудь... Когда подохнем, так и здесь будет могила, — и не одна, а две... Впрочем некому будет их рыть. Шакалы поужинают...

— Могила в этой песне совсем другая — это сторожевой курган в степи...

Поели сухарей и консервов, запили ключевой водой и перестали ссориться. Заговорили по хорошему и никак не могли определить, куда забрели — в Бакинскую губернию, или в Елизаветпольскую. Но не было ужаса перед будущим. И погода потеплела ...

— Я нисколько не жалею, что мы отстали, — сказал Коваленко, — все равно никто бы не в силах был нам помочь, и мы никому... Ты знаешь, перед раскрытой могилой у меня всегда есть хоть некоторая надежда на чудо, на будущую загробную жизнь, а перед толпой, все равно перед гражданской или военной, я всегда и наверное знаю, что: не жди ни сочувствия, ни понимания, ни даже простой рассудительности... Вот мы только вдвоем, а я все еще надеюсь и жду, если и не спасения, то хоть какого -нибудь хорошего момента, а там с ними ни секундоочки не жди.

— Опять завел философию ... А я не надеюсь ни на что, понимаешь, ни на что и ни на кого, потому что хочу хоть в последние дни своего существования не быть идиотом ...

"Врешь: и ты надеешься", — подумал Коваленко, но, не желая снова рассердить друга, перестал говорить о

будущем. Стали вспоминать Петербург и студенческие годы. И опять больше говорил Коваленко ...

— Знаешь, если бы мне семь лет назад, когда я был на третьем курсе, кто-нибудь сказал, что я сделаюсь офицером, я бы тому человеку в глаза плюнул. Семь лет, а все равно как семьдесят... была такая землячка Олеся Мирошниченко, жила на Васильевском острове, курсистка, я к ней зачастил. Комнатенка маленькая, убогая, самовар кривобокий и закуски к чаю на два рубля, а чувствовалось, как в раю. Из имущества только книги были, хорошие книги: Байрон, академическое издание, и Лермонтов, тоже академическое издание... Словесница она была... И все мы мечтали, когда поженимся, поехать на родину в Харьковщину, а затем путешествовать на Кавказе.

— Так вот ты же и путешествуешь по Кавказу, — перебил Иванов...

— Да... путешествую... Одевалась Олеся очень скромно, но красавица была, и все к ней шло... Была у нее брошечка тоже простенькая, вроде английской булавки, только золотая или вызолоченная и с красненьким камешком...

— Вы хохлы сентиментальные люди... поел и разболтался, а я поел и спать хочу... Ты бы прошел к ручью, да промыл бы ногу... Небось, болит? Ведь я уже две ночи не спал, по совести говоря, и всю минувшую ночь и глаз не сомкнул, тебя, дурака, стерег, думал, что заражение крови начинается.

— А болит и здорово... Это ты правду говоришь, а то стемнеет, видно не будет.

— Иди, иди, да потом салом из консервов смажь, не век же мы будем сидеть в этом проклятом ущелье...

Хромая и опираясь на палку, Коваленко побрел к ручью, а Иванов начал мостить под голову мешок, а под плечо похожий на тряпку китель.

Коваленко боялся потревожить посиневшую пятку и возился долго. Холодная струя показалась ему кипятком,

всей голове стало жарко, потом от боли даже затошнило. Стучало в висках.

Вернувшись, он начал смазывать нарыв говяжьим салом, как посоветовал уже крепко спавший друг, а затем забинтовал остатками белья... Сопел и вздыхал.

Когда поднял голову, то впереди, на тропинке, в полувечернем сумраке ему показалось, будто движется сгорбленная фигура, вроде старухи. Любопытство, смешанное с чем-то похожим на страх, заставило его снова поглядеть в ту сторону. Разбудить Иванова было жаль и стыдно. Старуха и на самом деле оказалась старухой с коричневым лицом и была такая худая и оборванная, что даже беженец удивился. Она подошла совсем близко, затрясла головой и хриплым голосом произнесла:

—Утелу бан ч'унэк?

Коваленко не понял, но догадался, полез в свою торбу, куда отложил штук пять сухарей, вынул их и подал. Старуха поклонилась, но не отошла и не села, а глядела и мигала запыленными веками. Она уже не казалась страшной. "И зачем такое создание живет на свете?", — подумал Коваленко. Старуха произнесла еще одно слово:

—Харкавор а.

Офицер снова не понял. "Разве дать ей еще консервов?". Он достал начатую банку, отковырял кусок английского красного вареного мяса и протянул. Старуха сейчас же его съела. Затем затопталась на месте, пошарила у себя за пазухой рукой, вынула из тряпья крохотный сверток в грязной бумажке, подала его офицеру и выговорила:

—Са на э инч вор к'эз харкавор а.

—Нет, консервов я не могу больше дать, — сказал Коваленко по-русски.

Старуха покачала головой, как будто улыбнулась и указала пальцем на сверток, который Коваленко держал в левой руке, не зная что с ним делать. Он сообразил,

что надо развернуть, и когда снял два слоя почти истлевшей бумаги, то увидел золотую брошечку, простенькую, вроде английской булавки, только с красным камешком. В ушах у него загудело и набежала мысль, что все это или снится, или галлюцинация.

Хотелось что-то сказать, или спросить старуху, но она еще раз поклонилась, улыбнулась и довольно быстро пошла по тропинке вниз.

— Стой! — крикнул Коваленко. Старуха не обернулась. Догнать ее с больной ногой было нельзя. Разбудить Иванова он не посмел. Еще раз смотрел Олесину брошку, поцеловал и положил перед собой на холст мешка...

Над снежными вершинами горели крупные, точно золотые орехи, звезды; плакали где-то недалеко шакалы и сладко храпел Иванов, а Коваленко все глядел на золотую вещичку... взял отстегнул булавку и уколол ею свою руку. Боль почувствовалась совсем ясно.

Потом он положил брошечку в боковой карман, разостлал шинель и прилег.

Когда проснулся, было уже светло. Иванов сидел рядом и грыз сухарь. Коваленко полез в карман, достал брошечку с красным камешком и, ни слова не говоря, начал ее рассматривать. Иванов сделал глоток, покосился и произнес:

— Да и сентиментальный же народ вы, украинцы. Носит человек этакую штучку при себе, вероятно, уже не первый год, а только, в первый раз вынул... Я бы при таких обстоятельствах, какие мы переживаем, давно бы ее продал, ведь золотая. Да и Олеся твоя, если бы и узнала, наверное, не обиделась бы...

Коваленко густо покраснел и ничего не ответил.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՋԻԿՆԵՐՆ ՈՒ ԿԻՆԵՐԸ\*

Միլտընի նշանավոր բանաստեղծությունը՝ «Դրախտ կորուսյալը», կվերջանա Աստուծո և սատանայի կատարյալ գծտության նկարագրությամբը: Երրորդ երգին վերջին խոսքերն են. «Սատանան խորին ողջույնով մը պատշաճ հարգանքը հայտնեց երկնային ոգիին, լքեց արևուն ճանապարհը և շտապեց դեպի երկիր. իր թռիչքի ընթացքին քանի մը ցնծալի ոստումներե վերջ հասավ Նպատ լեռան գագաթը» (Նպատը Հայաստանի ծյունածածկ լեռն է):

Անշուշտ, ասիկա պարզ հեքիաթ մըն է, որուն ծագումը շատ հեռավոր անցյալի մը կհասնի: Բայց երբ կմտածեմ այն բոլոր տառապանքներուն վրա, որոնց ենթարկվեցավ Հայաստանը մասնավորաբար վերջին դարերու ընթացքին, կմղվիմ հավատալու, որ սատանան իրավունք ուներ իր արկածախնդրությունները Հայաստանեն սկսելու:

Հայաստանի մեջ կլիման խիստ է, հողը ամուլ է: Տեսա զով գիշեր մը՝ լուսնի լուսով, իր խավերը տակնուվրա եղած հրաբխային ժայթքումներով: Ու հիշեցի այն պատկերները, զորս նկարիչ Վրուպել պատրաստած էր Լեբնոնտովի «Դև»-ին համար: Դևը ինքնիրեն խոսելով կըսե. «Ես անիկա եմ, որուն ակնարկը կչքացնե ամեն հույս»: Եվ վերջը վերջը Հայաստանի մեջ իմ բնակության միջոցին, այդ բոլոր առասպելները մեկդի նետելով, հաճախ կմտածեի, որ չորս կողմեն թշնամիներով

---

\* Այս ուսումնասիրությունը «Ճակատամարտ»-ի համար գրած է Բորիս Լազարևսկի, ռուս գրող՝ Չեխովի դարոցեն, որ ունեցած է շատ արկածալի կյանք մը: Բնիկ ուկրաինացի, ավարտած է Քիևի համալսարանին իրավաբանական ճյուղը, վարած է գինվորական և ծովային պաշտոններ: Ռուս և ճապոնական պատերազմեն հետո ինքզինքը նվիրելով գրականության, արտադրած է շատ մը գործեր՝ մեծ մասով մանրավեպեր: Վերջերս մեծամասնական հալածանքեն փախչելով՝ անցած էր Օդեսա, ուրկե գնաց Թիֆլիս և Երևան, ու այժմ Պոլիս եկած է Փարիզ անցնելու համար (Ծ. խ.):

պաշարված ժողովուրդի մը ուրիշ բան չէր մնար, բայց եթե կորսնցնել ավելի բախտավոր ապագայի մը ամեն հույս:

Այս մտածումը իմ հետաքրքրությունս շարժեց: Ո՞վ է ուրեմն այս ժողովուրդը, որ հակառակ այս դժոխային պայմաններուն չէ ջնջված, չէ փոխակերպված անասուններու կամ օրանգութանի ցեղի մը, այլ, ընդհակառակը, տված է ստեղծագործ այրերու և կիներու ամբողջ սերունդ մը, որ այնքան նրբությամբ կհասկնա գեղեցիկը: Աչքերը հոգիին հայելին են: Ես տեսած եմ երկրագունդին գրեթե բոլոր ժողովուրդները և պետք է խոստովանիմ, թե ոչ մեկ տեղ տեսած չեմ այնքան պերճախոս բիբեր, որքան Հայերուն և մանավանդ Հայուհիներուն բիբերը:

Քիչ հետո պիտի տեսնեք, որ ես ոչ մեկ նպատակ ունիմ շողոքորթելու այս ժողովուրդը և մանավանդ ունե՛մ ժողովուրդ:

Սակայն և այնպես կկրկնեմ. Հայերուն և մասնավորաբար հայ կիներուն և աղջիկներուն աչքերը հաճախ կպատմեն համարձակ և արտահայտիչ կերպով այն, ինչ որ չպիտի կրնային արտահայտել իրենց բերանները:

Ինձի կթվի, թե ատոր պատճառը այն է, որ մտածումերու խորությունը կախում ունի տառապանքի ուժգնութենեն, իսկ տառապանքի տեսակետով հայ ժողովուրդը առաջին տեղը կգրավե աշխարհի մեջ ...

Ես ո՛չ վիճակագրող եմ և ոչ ալ բազմահմուտ, այլ արվեստի մարդ մը և իմ անձնական տպավորություններս ու մտածումներս է, որ պիտի հայտնեմ: Արվեստագետի մը համար ամենեն դյուրին և հաճելի բանն է բաղդատություններու դիմել:

Ձանալով հիշել, թե արտահայտության տեսակետով ո՞ր աչքերը կնմանին հայկական աչքերուն, միտքս բերի Ֆեոդոր Միխայելովիչ Դոստոևսկիի գեղարվեստական կենդանագիրը՝ շինված Փերոֆի կողմե. նկար մը, զոր ժամերով դիտած եմ զմայլագին Մոսկվայի Տրետյակովի նկարասրահին մեջ: Այն ատեն սա միտքը ունեցա, թե եթե Դոստոևսկի թիպարտության դատապարտված չըլլար, եթե Օմսկի մեջ խարազանի հարվածներ չուտեր, չպիտի կրնար այնքան հանճարեղ գործեր արտադրել և իր հրաշալի աչքերը չպիտի ունենային այն զարմանալի արտահայտությունը լուռ հանդիմանության, որ մինչև դիտողին ջիղերուն կթափանցե:

Երևանի մեջ տեսա հազարավոր պզտիկ որբ աղջիկներ, որոնք կայարան կտարվեին Ալեքսանդրապոլ դրկվելու համար. նկատեցի, որ անոնցմե շատերը ունեին աչքերու այն միևնույն արտահայտությունը, զոր Փերոֆ տված է Դոստոևսկիին: Այս միջոցին ուրիշ մտածում մը ունեցա, թե ասոնք ալ պզտիկ թիապարտներ են և նույնպես բացարձակ անմեղ: Անոնք որբանոց դրված են միայն լավագույն պարագային, բայց եթե քննենք այդ «լավագույն պարագան», պիտի տեսնենք, որ օդի քանակով, հագուստի և սնունդի որակով այդ լավագույն պարագան մեզի շատ կհիշեցնե այն վիճակը, որ նկարագրված է «Մեռելներու տան հիշատակներ» - ուն մեջ: Եվ եթե Դոստոևսկի աքսորի դատապարտվեցավ Նիկոլայ Ա-ի կողմե, հայ ժողովուրդն ալ տարագրվեցավ նույնինքն Բարին Աստծու կողմե:

Ես տառապանքի այդ արտահայտությունը առաջին անգամ նկատեցի մատաղատի աղջիկներու աչքերուն, և ոչ թե այրերու կամ ամուսնացած կիներու աչքերուն մեջ: Ճգնեցա հասկնալ պատճառը և ես ինձի այսպես բացատրեցի. տղամարդու մը ամենեն զարհուրելի տանջանքը կվերջանա մահվամբ. Հայաստանի ապրած դաժան տարիներու ընթացքին, մահվրնե առաջ, հայ կիներու և աղջիկներու տառապանքներուն միացած էին միշտ անպատվությունն ու բռնությունը: Ամուսնացած կինը ավելի դյուրությամբ կտաներ այդ բռնությունը, քան մատաղ անմեղ աղջիկը: Ես տեսա անագորույն տառապանքի արտահայտությունը գրեթե երեխա աղջկան մը աչքերուն մեջ. այդ միայն իր անձնական տառապանքը չէր, այլ և իր մորը և մեծ մորը, որովհետև այդ մայրերեն և մամերեն շատերը իրենց հոգին չէին ավանդեր յաթաղաններու հարվածներուն տակ, այլ, ինչ որ հազար անգամ ավելի սոսկալի է, Պոլսո հարեմներուն մեջ\*:

Եվ ես համոզված եմ, որ այդ փոքրիկներեն շատերը փորձած են լուծել սա հարցը, իրենց ամուսնութենեն թե՛ առաջ և թե վերջը.

— Ինչո՞ւ համար ես ծնած եմ այն երկրին մեջ, ուր ավելի քար կա, քան ծաղիկ, ուր արյունը նույնքան հաճախ կտեսնվի,

\* Ճակատամարտ, 7.X.1920:

որքան ջուրը, ուր կարելի չէ սիրել մեկը, առանց վստահ ըլլալու, որ սիրականը չպիտի խլվի, եթե ոչ պատերազմի պատճառով, գոնե օրվան հացը ճարելու համար:

Չեմ չափազանցեր, եթե ըսեմ, որ Հայուհիին թուխ-կապույտ աչքերը միշտ ցուացումն են հարցումի մը կամ ավելի ճիշտ համր հանդիմանություն՝ ուղղված իր ճակատագրին: Այսպե՛ս են նույնիսկ աչքերը անոնց, որոնք կապրին բարօրության և ապահովության մեջ:

Շատ ժամանակ չկա, որ ձեռքս անցավ խոշոր գիրք մը՝ գորշ կազմով: Անունն էր «Հայերու վիճակը Թուրքիո մեջ, օտար պետությանց միջամտութենեն առաջ, 1895-ին»\*: Պատահամա՞ր բացի և առաջին նախադասությունը, զոր կարդացի, հետևյալն էր.

«Օր չանցնիր, որ սիրտ մը չխորտակվի» (տե՛ս հիշատակված գրքի 197-րդ էջում—*ԱՄ. Ձ.*): Կարծեցի, թե դիպված մըն է: Էջին վերջը նայեցա և կարդացի.

«1878-ին Հայաստան դրկված մասնավոր թղթակիցներեն մեկը, ուշադիր ստուգումներե վերջ, հաստատեց, որ Տաճկահայաստանի մեջ չի գտնվիր մեկ քրիստոնյա կին, որ ամուսնութենե առաջ անպատվված չըլլա»:

Ահա թե ինչ տեսած են մեծ մայրերը և հանիները...

Արդյոք Հայաստանի աղջիկները և կիները մաքառիլ չէի՞ն գիտեր. արդյոք հայ ընտանիքը պահանջված խիստ կարգ ու սարքը չունե՞ր: Ոչ: Փոքր Ասիո ցեղերուն մեջ ոչ մեկ ուրիշ ժողովուրդ այնքան նախանձախնդրությամբ պահած է ընտանեկան օջախը, որքան Հայերը:

Նույնիսկ Հայաստանի թշնամիները կխոստովանին ասիկա:

Այդ միևնույն գրքին մեջ կարդացի հուզիչ պատմություն մը՝ քաղված Խրիմյան կաթողիկոսի ճամփորդութենեն:

«Ախալքալաքի մեջ կաթողիկոսը գիշերը անցնելու համար հյուր եղավ 84 տարեկան պառավի մը տունը, որ հաճի Մար կկոչվեր և մեծն էր անբաժան ընտանիքի մը, բաղկացած 4 մանչե, 4 աղջիկե և 54 թռռներե և զավակներե, ընդամենը 63 հոգի միևնույն երդիկին տակ:

\* Տե՛ս ծան. 9:

Այդ ընտանիքի անդամներուն մեջ կային վաճառականներ, ուսուցիչներ, ուսուցչուհիներ, բժիշկ մը, իրավաբան մը, մաթեմատիկոս մը և քանի մը ուսանողներ:

Դյուցագներգական շունչով խոսակցություն մը ծայր տվավ կաթողիկոսին և այդ հնադարյան ընտանիքի նահապետին միջև.

— Այդքա՛ն մանչեր, աղջիկներ և թռռներ ունիս, շիտակ ըսե, իրարու հետ կռիվ չե՞ն ըներ:

— Հայրիկ, ոտքի՛ դ մատաղ, թող կուտա՞մ, որ իրարու հետ կռիվ ընեն: Ես իրենց կսորվեցնեմ հնագանդության պարտականությունը իրենց անդրամիկներուն հանդեպ, և կպատժեմ ծուլներն ու անկարգները:

— Ուրեմն պատժե՞լ ալ գիտես, քա՛ջ պառավ, — հարցուց կաթողիկոսը:

— Ապա ինչպե՞ս, պետություն մը կրնա՞ գոյություն ունենալ առանց պատիժի դրության: Իմ տունս ալ պզտիկ պետություն մըն է:

— Իսկ ո՞վ է թագավորը:

— Ոտքերուդ հողը, հաճի Մարը:

— Օ՛հ, օրհնված ըլլան այն ծերունի մայրերը, որոնք այսքան լավ կապերով կպահպանեն հայկական ընտանիքը (տե՛ս վերոհիշյալ գրքի 127-128-րդ էջերի տողատակերում— *ԱՄ. 2.*)<sup>\*</sup>:

Հետո կաթողիկոսը իր օրհնությունները տվավ տատին և այս նահապետական ընտանիքի բոլոր անդամներուն:

Այս գիրքը կբաղկանա 443 էջերե և չկա պզտիկ պատմոյուն մը, որուն մասին խոսիլը տաժանելի չըլլար:

Մեկե ավելի հեղինակներ մասնակցած են տեղեկություններ հավաքելու՝ յուրաքանչյուրը բոլորովին անկախաբար գործելով: Ասոնք են, 1. բելգիացի Ռուլան Ժաքմենը, 2. ամերիկացի Գրինը և իռլանդացի Դիլլընը:

Հետևաբար կարելի չէ ենթադրել, թե բոլոր այս հեղինակները խոսք մեկ ըրած են միայն ստություններ գրելու և միայն սարսափներ նկարագրելու համար:

<sup>\*</sup> Ի դեպ, ժողովածուում այս գրույցի աղբյուր է հղված «Արծազանք» շաբաթաթերթը (1895, № 83):

Այս իրողություններեն եզրակացուցած են, թե յուրաքանչյուր հայ կնոջ անցյալը շատ ավելի խելագարություն և զարհուրանք կպարունակե, քան հայ տղամարդունը, և պատճառները շատ հասկնալի են:

Այդ է մոտիկ անցյալը, մոտիկ կըսեն, որովհետև 1895-են միայն 25 տարի անցած է ...:

Այս բոլորեն կարելի է գաղափար մը կազմել Հայաստանի անցյալ, ներկա և նույնիսկ ապագա բոլոր արհավիրքներու մասին:

Դոստոևսկիի անդոհագին աչքերը ոչ միայն իր անձնական տառապանքները կարտահայտեն, այլև բովանդակ Ռուսաստանի տանջանքը, ու ոչ միայն իր շրջանի Ռուսաստանին, այլև մեր օրերուն: Կհիշե՞ք Ռասկոլնիկովի երազը: ...

Բայց ես չեմ ուզեր շեղիլ նյութես:

Հայ աղջիկներու աչքերու գեղեցկությունն ու խորությունը ուժեղ տպավորություն գործեցին վրաս, բայց պարագա մը շատ զարմացուց զիս և հետաքրքրությունս շարժեց: Երևանի մեջ կարելի չէ գտնել իգական տիպար մը սլացիկ հասակով, նման անոնց, որ կտեսնվին Նոր Նախիջևանի, Արմավիրի և Թիֆլիսի մեջ: Գրեթե բոլորն ալ ծուռ ոտքեր ունին: Ատոր ալ պատճառը հասկցա:

Երևանի խղճուկ թաղերեն մեկուն մեջ, ավազանին մոտ պտտած ատեն, հանդիպեցա քանի մը մատաղատի աղջիկներու, որոնք ջուր կկրեին գրեթե երկու փուլ ծանրությամբ ամաններով\*:

Իրենց դեռ դյուրաբեկ ոսկորները այդ տեսակ ծանր բեռի մը չէին կրնար տոկալ: Տեսած են այնպիսի այլանդակ օրորոցներ, ուր աղքատ դասակարգի հայ մայրեր կկապեն իրենց երեխաները: Այդ օրորոցները պզտիկ մակույկի ձևը ունին, այնքան պզտիկ, որ մանկիկը, չի կրնար երկնալ: Խեղճությունը և հուսահատությունը այդպեսով տձևության կենթարկեն ապագա կիներն ու մայրերը:

Հայ աղջկան տառապանքը կսկսի այն տարիքեն, երբ ուրիշ ազգերու զավակները կվայելեն կատարյալ հանգստություն:

\* ճակատամարտ, 8. X.1920:

Ես դիտած եմ չինացի մանուկներ Մանջուրիո մեջ, տեսած եմ հարավային Իտալիո մատաղ աղջիկները, վերջապես գիտեմ մեր հայրենիքին՝ Ուկրաինիո մեջ ռուս գեղջուկ երեխաներու կենցաղը. անոնք ալ նույնքան աղտոտ են և ցնցոտիներով պատսպարված, այն տեղերն ալ ջուր կկրեն, բայց ոչ թե անոնք, որ հազիվ տասը տարու կան ...

Ասկե զատ, ինչ որ գլխավորն է, անոնք երբեք չեն տեսներ այն սարսափները, որոնց ականատես և ենթակա են հայ աղջիկները, իրենց մատաղ տարիքին իսկ ...

Ձատիկ էր, և ահա, պատերազմի և հեղափոխության օրերուն, Ուկրաինիո ամենեն աղքատ գյուղերուն մեջ կզգայի, որ տոն է, կերգեին, կօրորվեին և կարմիր հավկիթներ կփոխանակեին:

Յայաստանի մեջ Ձատիկի շաբաթը բոլորովին տարբեր էր և այս ոչ թե անցյալ դարուն, այլ 1915-ին: Ատոր տեղեկացա կարդալով ֆրանսացի հեղինակ Յանրի Բարբի մեկ գիրքը\*, ուր կա պատմությունը արճեշցի հայ աղջկան մը:

«Երբ քյուրդերը սպանեցին բոլոր տղամարդիկը, իրենց բեկը գյուղ եկավ և պատվիրեց եկեղեցիի բակը հավաքել բոլոր կիներն ու աղջիկները և անոնց հրամայեց մերկանալ բոլորովին: Անոնք, որ չէին հնազանդեր, մորթվեցան ...

Երբ այս հրամանը գործադրվեցավ, բոլորը հասակի կարգով շարվեցան և բռնադատվեցան մեկիկ-մեկիկ անցնիլ բեկին առջևեն:

Բեկը ուշադրությամբ քննեց զանոնք, ինչպես կքննեն անասունները, և անոնք, որ իր ճաշակին հարմարեցան, մեկդի գատվեցան, իսկ մյուսները սպանվեցան ...»:

Ծիշտ է, որ Բարին Աստծու կողմն անհիծված մեր դարուն սկիզբը ռուս կիներն ու աղջիկներն ալ ենթարկվեցան շատ սարսափներու, սակայն Վանի աղջիկներուն կրած սարսափը անբաղդատելի է:

Տարիներ կանցնին, արյունոտ խելագարությունը կդառնա միայն պատմության սեփականությունը և նահատակ ռուս մանկամարդուհին պիտի խորհի, թե գեշ երազ մը տեսած է:

\* Տե՛ս ծան. 10:



Բայց այս բոլոր մանկամարդուհիները, որ անցան քյուրդ բեկին առջևեն, միշտ պիտի հիշեն այդ զարհուրելի իրականությունը:

Միևնույն տարին, 1915-ին, մինչև կայարան ընկերացա երիտասարդ բժշկուհիի մը, որ նոր վերջացուցած էր իր ուսումը, և որ վան դրկվեցավ:

Չկրցա հասկնալ այն հուսահատությունը, զոր կզգար մանկամարդուհին դեպի Չայաստան ճամփորդելու պատրաստված ատեն: Ես այդ հուսահատությունը կհամարեի վեհերոտություն, աններելի՝ բժիշկի մը համար, և այդ ճանապարհորդությունն իսկ շատ հետաքրքիր կթվեր ինձի: Բայց հիմա, Չայաստանի մեջ ապրելե հետո, այս երկրի մասին շատ բաներ կարդալե վերջ, հասկցա, թե փոքրոգի վախկոտություն մը չէր, որ կտանջեր այդ երիտասարդ բժշկուհին, այլ ավելի լուրջ և ավելի քստմնելի բան մը ...

Մեկ խոսքով, եթե ըսեն, թե Չայաստանի սահմաններուն մեջ ապրող հայ մանկամարդուհիին ճակատագիրը միայն սարսափ ու խելագարություն է, ո՛չ հասարակ տեղիք մը ըսած պիտի ըլլամ և ոչ ալ իրականութենն շեղում, և այս՝ մեր օրերուն, ինչպես հարյուր տարի առաջ:

Կրնայի հարյուրավոր օրինակներ հիշել հաստատելու համար ըսվածներուն ճշմարտությունը, բայց ես քստմնելի դրվագներ նկարագրող մը չեմ, և չեմ փափագիր խռովել իմ ընթերցողներս այնպիսի պատկերներով, որոնց բովանդակությունը առանց ինձի ալ ծանոթ է ...

Ուկրաինական երգ մը կա, զոր շատ կսիրեմ և որ այսպես կսկսի.

— *Անե՛ծք որորին, որ աշխարհ բերավ իր պզտիկները, երկու ճամփաներու բաժնված տեղը ...*

Եվ իսկապես Չայաստանն ալ կգտնվի այդ երկճղանքին վրա: Սակայն և այնպես փոքրիկ որորները, երբ ժամանակին ելլեն իրենց բույնեն, հաճախ հրաշալի կերպով գեղեցիկ են: Եվ այդ գեղեցկությունը ռուս ամենեն նուրբ գրողներուն մեկուն՝ Անտոն Չեխովին, ներշնչեց իր լավագույն պատմվածքներեն մեկը\*:

\* Տե՛ս ծան. 11:

Վախճանամ ընթերցողներես շատերը չեն կարդացած այդ պատմվածքը: Ես ինքս ալ երիտասարդությանս կարդացած եմ: Այն ատեն կերպեցի գրող դառնալ, և տպավորվեցա ոչ այնքան պատմվածքին բովանդակութենեն, որքան այն եղանակեն, որով կնկարագրեր գեղեցկության ուժը՝ բառերու միջոցավ:

Ահա՛, քանի մը տող.

«Հանկարծ զգացի, թե հով մը կիպի հոգիիս և կվանե օրվան բոլոր տպավորությունները իրենց տաղտուկով և տականքով: Առջևս տեսա գեղեցկություն մը և զայն զգացի այնպես, ինչպես մարդս կզգա շանթը: Իր սև գանգուր մազերը և թավ հոնքերը կներդաշնակվեին իր ճակտին և այտերուն քնքուշ և սպիտակ գույնին հետ, ինչպես կանաչ եղեգը անդորր գետակին»\*:

Քիչ մը անդին Չեխով կգրե.

«Ես այդ գեղեցկությունը կզգայի տարօրինակ ձևով: Մաշան իմ մեջս ո՛չ ցանկություն կարթնացներ, ո՛չ հափշտակություն, ոչ ալ վայելք, այլ ճնշող և միանգամայն ախորժելի թախծություն մը ...»:

Ինձի կթվի, թե Չեխովի թախծը՝ անքննելի թախիծ, առաջ կուգար այն բանեն, որ գեղեցկությունը՝ աստվածային հատիկ, ինկավ երկրի վրա, ուր ուշ կամ կանուխ, կյանքը և պարագաները զայն պիտի փոխակերպեին եթե ոչ գրաստի, գոնե գռեհիկ սովորականության մը:

Այդ պատճառով է, որ Չեխով զայն կբաղդատե շանթին հետ, որ պահ մը կփայլատակե, ամեն ինչ կլուսավորե և կանհետի: Իսկ այս բաղդատությունը կվերաբերեր հայ մանկամարդ աղջկան մը ...

Աղջիկը ըլլալ Մայր Հայաստանին, որ իր բույնը շինած է քարերուն մեջ, ուր ամառը արևը շատ կիզիչ է, իսկ ծմեռը մարդիկ ցուրտեն կմեռնին, կարոտները կկազմեն բնակչության հարյուրին ութունը, նախանձելի ճակատագիր մը չէ, անշուշտ: Իսկ այն մանկամարդուհիները, որոնց նմանը նկարագրած է Չեխով, երջանիկ բացառություններ են: Անոնք այն պզտիկ որորներն են, որոնց ծնողքը կամ ուրիշ բարի մարդիկ

\* ճակատամարտ, 9.X.1920:

ժամանակին օգնած են իրենց բույները ձգելու և թռչելու հեռավոր վայր մը, արտասահման կամ Ռուսաստան, որ ատենով այնքան ասպնջական էր ...

Անոնք ավելի սլացիկ և ճկուն կերպարանք ունին, անոնց աչքերը գեղեցիկ են, բայց և միշտ լուրջ:

Հաճախ ինձի այնպես կթվի, թե իրենց բիբերու լուրջ արտահայտության մեջ կգտնվի գլխավոր պատճառը այն գեղեցկության, որ ազդած է Չեխովի վրա: Անգամ մը ան ըսավ ինձի. «Գեղեցկությունն ալ տաղանդ մըն է»: Կթվի, թե այդ միևնույն խոսքը կգտնվի իր պատմության մեջ: Տաղանդ, այսինքն հատկություն մը, որ կարթնցնե ուրիշներու, երևութապես նույն մարդոց վրա գերազանցության գաղափարը:

Անցյալ տարի Թիֆլիսի մեջ տեսա թափոր մը, ամբողջ շքախումբ մը, որ ինձի ապացուցեց, թե գեղեցկությունը իրապես տաղանդ մըն է: Թիֆլիս հասնելես առաջ բնակած եմ Բաթումի մեջ, ուր, ինչպես գիտեք, կային շատ անգլիացիներ: Դիտելով զանոնք, ինձի անկարելի եղավ չնկատել այն վես նայվածքը, զոր ունին երբեմն ուրիշ ազգերու, և մանավանդ Հայերու հանդեպ:

Եվ սակայն այդ ջենտլմեններեն մեկը, երկուքը, երեքը և ավելին Բաթումեն մեկնեցան Հայուհիներ հարս տանելով իրենց հետ:

Ես աչքովս տեսա կառք մը՝ առնվազն վեց ձիով, ծաղկազարդ, ուղեկցությամբ հեծելազորքերու, որ կտաներ երիտասարդ ամուլը՝ գեղեցիկ Հայուհին և դյուրված, կախարդված անգլիացին ...

Ու նկատեցի, ժպտեցա և մտածեցի, թե իսկապես պետք էր ճշմարիտ տաղանդ մը ունենալ հարկադրելու համար անգլիացի մը, որ կորսնցնե իր սովորական պաղարյունությունը, անգլիացի, որ շատ անգամ երկրաշարժեն իսկ այնքան չազդվիր:

\* \* \*

Ես տեսած եմ շատ գեղեցիկ Հայուհիներ, բայց չեմ տեսած մեկը, որ բացարձակապես զվարթ ըլլա, այն զվարթութենեն, որ կհայտնվի դեմքի յուրաքանչյուր մկանին մեջ:

Ո՛չ իսկ մեկ հոգի ...

Չտեսա ո՛չ ազնվական և ոչ ալ քաղքենի դասերուն մեջ, որոնցմով լեցված են հարավային Ռուսիո խոշոր կենտրոնները:

Արմավիր, Ռոստով և Թիֆլիս, իմ բնակության ընթացքին, կղիտեի Չայուհիներուն դեմքերը: Չայ աղջիկներուն երկրորդ հատկանշական գիծն է իրենց շրթներուն ծալքը: Ես չնկատեցի ոչ մեկ գրգռիչ ծիծաղ, զոր կարծակեն հաճախ Ուկրաինիո ու Վրաստանի մանկամարդուհիները ... երկիրներ, որոնք պակաս դժբախտություններ չեն տեսած, և սակայն ավելի երջանիկ են, քան Չայաստանը:

Առանց բացվելու հայ աղջկան շրթները բարձրածայն կարտահայտեն այն ցավագին անհրաժեշտությունը, որուն ենթարկված է իրենց ամբողջ ազգը, տառապելու և լռելու, գերեզմանի մը պես լռելու համար ...

Ու այստեղ, Չայաստանի մեջ, դուն կգուշակես, թե մայրը, և այդ մորը մայրը, կլռեր և կտառապեր և դարձյալ կլռեր ...

Երբեմն իր ամբողջ դեմքը ջղային անձկություն մը կարտահայտեր ...

Ինչո՞ւ կը ծյուրին քաղքենի դասուն այս աղջիկները: Անոնք Չայաստան չեն ապրած, անոնք Չայաստանի ջարդերը իմացած են միայն թերթերու տեղեկություններեն, որոնք մեծ մասով կարդացված ալ չեն: Անոնք լավ հագված են, լավ կուտեն, իրենց մայրիկն ու հայրիկը, մանր վաճառականներ, զիրենք շատ կսիրեն, դպրոցականները և ուսանողները կդարպասեն իրենց ...

Շատ անգամ կխոսեի այդ Չայուհիներուն հետ: Կհարցնեի, թե ի՞նչ կուզեին ընել զիմնագիտնը ավարտելե վերջ:

Իբրև պատասխան, թեթևորեն կբարձրացնեին ուսերը, կշարժեին շրթները և լեզվով կչաչեին.

— Ես կուզեմ հետևիլ Պետրոգրադի կամ Մոսկվայի դասընթացքներուն, կամ երաժշտանոց մտնել:

— Բայց դասընթացքներ և երաժշտանոցներ կան Ռոստով և Թիֆլիս:

— Այդ ուրիշ ... Ես կփափագեի իսկական Ռուսաստանը երթալ կամ արտասահման:

Կկարծեմ, թե ուրիշ ոչ մեկ ազգի որ և է աղջկան մեջ չեմ հանդիպած այնքան վառ և այնքան համառ բաղձանքի մը,

կարելի եղածին չափ հեռուները երթալու և սորվելու, անդադար սորվելու:

Կարծես կվախնան իրենց հայրենիքեն և հոժարակամ կամուսնանան օտարներու հետ\*:

Պեպի լույսը, դեպի գիտություններն ու արվեստներու այս ձգտումը, երբեմն տարրական է, հավանաբար ծնած իբրև դիմադարձություն դարավոր գերության, գերություն՝ ընտանիքին մեջ, հարեմներու մեջ և վերջապես քաղաքական գերություն, որ տարիներով կճնշեր հայ կինը:

Ինձի կթվի, թե ոչ մեկ ուժ ժամանակակից հայուհիեն չպիտի կրնար առաջ բերել հին հաճի Մար մը, որ զմայլանքով ողջունվեր Յայրիկի կողմեն:

Այդ բազմաթիվ ուսման ծարավիներուն մեջեն շատ քիչերը կրնային Մոսկվա կամ Պետրոգրադ հասնիլ: Այնտեղ միշտ բոցեռանդ էին և ոչ մեկ բանե կվախնային:

Տասը տարի առաջ Պետրոգրադի մեջ կար քաղաքական կուսակցություն մը՝ Յ. Յ. Դաշնակցությունը, որ չափազանց վտանգավոր կնկատվեր, բայց միշտ ալ անոր կմասնակցեին հայ մանկամարդուհիները:

Պետրոգրադի սառնամանիքները վախ չէին պատճառեր Կարսի և Ալեքսանդրապոլի բնիկներուն, և առտուն հաճախ կտեսնեի Վասիլևոյի Օստրովի մեջ այդ սևաչվի և գանգրամազ մանկամարդուհիներեն՝ կարճահասակ, բայց առույգ, որոնք ամառնային հագուստ հագած՝ կաճապարեն պրոֆեսորի առաջին դասին հասնիլ:

Սեղմ շրթներով և կարճ հատկանշական քավածքով մանկամարդուհիներ ...

Ռուսական և արտասահմանի երաժշտանոցներուն մեջ բազմաթիվ էին հայ մանկամարդուհիներ, և այդ հաստատություններեն շրջանավարտ եղած են՝ Տերյան-Կորգանյան, Պապայան, Ակիմով-Էրիսով, Ադամյան քույրերը, Միրիմանյան քույրերը:

Միայն թե քնքուշ և այլ սայթաքած արարածներուն մեջ ես չտեսա ոչ մեկ հայ մանկամարդուհի, ոչ իսկ մեկ ...

\* Ճակատամարտ, 10. X.1920:

Հայ ուսանողուհիներուն կայտառությունը միշտ կզարմացներ զիս: Մինչդեռ իրենց հայրենակից ուսանողները կհիվանդանային և նույնիսկ հյուծախտե կբռնվեին կամ չէին կրնար շարունակել իրենց ուսումը դրամի չգոյության պատճառով: Մանկամարդուհիներեն շատ քիչ անգամ կհիվանդանային և գրեթե չէին գանգատեր իրենց վիճակեն: Եվ սակայն գիտությունը և կյանքը շատ ավելի դժվարին պետք էր ըլլային իրենց համար, որովհետև զավառական գիմնազիոնները բավարար կերպով չէին պատրաստեր զիրենք բարձրագույն դասընթացներու:

Հայ ուսանողուհիներու ծածկամտությունը անձնասիրական կթվեր: Բայց տեսա մանկամարդուհի մը, որ իր հիվանդ հայրենակցին կբերե իր ունեցած վերջին տասը ռուբլին: Եվ ան սիրահարված ալ չէր երիտասարդին, որ շնորհակալություն հայտնեց պարզ ակնարկով մը:

Այն ուսանողը, որուն հիվանդության ատեն մանկամարդուհին դրամը բերավ, ինձի հետ միևնույն հարկաբաժինին մեջ կապրեր: Երբ ինքն առողջացավ, այլևս քովը չեկավ:

Օր մը փողոցին մեջ հանդիպեցա և հարցուցի, թե ինչո՞ւ ալ այցելության չէր գար իր ընկերոջ:

— Ժամանակ չունիմ, շատ կփափագեի զինքը տեսնել, բայց ժամանակ չունիմ:

Եվ զլիսով թեևորեն բարևեց ու հեռացավ դեպի բժշկական համալսարան ...

Այս «ժամանակ չունիմ»-ը պարապ խոսք մը չէր, և ոչ ալ դեպի իր բարեկամը պաղություն կնշանակեր: Իսկական ճշմարտություն մըն էր:

Այն ատեն ես այն գաղափարը ունեցա, թե հայկական նոր ընտանիքին, նույնիսկ անոր նորագույն պատմության ապագան կախում չունի այն մանկամարդուհիներեն, որոնք ծանր կուժերով ջուր կկրեն Ալեքսանդրապոլի և Երևանի խեղճուկ փողոցներուն մեջ, ոչ ալ անոնցմե, որոնք բուրդ կմանեն արևածագեն մինչև վերջալույս և ոչ ալ սա դրամատերներու աղջիկներեն, որոնք կմեծնան ինքնաշարժով պտույտներ կատարելով Մոսկվայի կամ Պետրոգրադի պողոտաներուն մեջ, այլ այս Շուշանիկներեն և Մանիկներեն, որոնք «ժամանակ երբեք չունին»:

Եվ իրենց հայրենիքին առաջադիմությունը այնքան կընթանա, որովհետև իրենց թիվը շատ սահմանափակ է:

Մինչև հիմա ես խոսեցա միայն աղջիկներու մասին: Պատճառը շատ պարզ է: Շատ ավելի դյուրին է ուսումնասիրել անոնց հոգեբանությունը, քան հոգին ամուսնացած կնոջ մը: Կինը, որ իր սերը կուտա մարդու մը, ավելի լռակյաց կդառնա:

Ան չի սիրեր իր մտերիմ զգացումները հայտնել ոչ երջանիկ եղած ատեն, ոչ ալ երբ դժբախտ է: Ես չեմ ըսեր, թե ամուսնացած հայուհիները մինչև իրենց մահը հավատարիմ են իրենց ամուսիններուն: Ատիկա ճշմարիտ չպիտի ըլլար:

Առած մը կա, որ կըսես. «Բոլոր տարիքները կկախարդվին սերեն», ավելի քան կենթարկվին սիրո: Միևնույն առածով կարելի է ըսել, թե չկա որ և է ազգի կին, որ չդավաճանես: Եվ Հաստանի կիները բացառություն չեն կազմեր:

Բայց ես նկատած եմ երկու հետաքրքիր իրողություններ, որոնք շատ հատկանշական թվեցան ինձի:

Երբ ռուս, ֆրանսացի, լեհ և նույնիսկ գերմանացի կին, կլքես իր ամուսինը և կերթա իր սիրահարին քով, ընդհանրապես կզանգատի իր ամուսինին բռնակալութենեն, լալով կամ առանց լացի, և կպատմե իրենց կռիվներուն և իր ամուսնական բոլոր դժբախտություններուն մանրամասնությունները:

Մոսկվայի մեջ հայ կին մը սիրեց կատարելապես ազատ մարդ մը, զոր շատ լավ կճանչնայի, գրեթե իմ բարեկամս էր: Անգամ մը վագոնին մեջ պատահեցա իրեն և հարցուցի, թե երջանի՞կ էր:

Հաստատական պատասխան մը ստացա, որուն հաջորդեց անկեղծ խոստովանություն մը\*:

Կինը ոչ միայն երբեք չէր զանգատեր, այլև մյուս մարդուն հետ վարած կյանքեն ոչ մեկ դրվագ պատմած էր, կյանք մը որմե կատարելապես դժգոհելու իրավունք ուներ: Բարեկամս ինձի հարցուց, թե արդյոք այս պարագան կեղծիքի նշան չէ՞ր և կամ իրենց կապը միայն ֆիզիկակա՞ն էր: Կհիշեմ, թե պատասխանեցի, որ այդ նշան էր ամենաբարձր արժանապատվության, և իմ կարգիս հարցուցի, թե «Աննա Կարե-

\* ճակատամարտ, 12. X.1920:

նինա»-յի մեջ հանդիպա՞ծ է միակ դրվագի մը, ուր դժբախտ կինը դժգոհեր Վրոնսկիեն կամ անոր պատմեր մանրամասնությունները կենակցության՝ տաղտկալի պաշտոնատարի մը հետ. չմոռնանք, որ Տոլստոն Կարենինի տիպարը առավ հանգուցյալ Պոպեդոնոսկեն ...

Չեմ գիտեր, թե այս երևույթը հատկանշակա՞ն է հայ կիներուն համար, բայց ինձի կթվի, թե այդ հազվագյուտ բացառություն մըն է ուրիշ ազգերու կիներուն համար:

Չեմ ուզեր ընդհանրացնել, բայց գրողի հոտառությունը ինձի կըսե, թե հիշված պարագան հայ կնոջ առանձնահատուկ է:

Ժամանակին շատ գեղեցիկ կին մը, որ երկու սիրուն զավակներ ուներ, այրի մնաց շատ երիտասարդ հասակին մեջ, քսանհինգ տարեկան չկար:

Իր ամուսինը մեռավ հանկարծակի արկածով ...

Ամբողջ տասներկու տարի իր ձեռքը խնդրեցին հարուստ և ընկերային բարձր դիրք գրաված մարդիկ. նույնիսկ շատերը մեծապես հաճելի էին իրեն, բայց բոլորին ալ միևնույն պատասխանը կուտար.

— Վերամուսնանալով՝ ինքզինքիս համար բան պիտի գողնամ զավակներես, և իրավունք չունիմ այդպես ընելու, անոնց մե՞ղքը ինչ է, որ հայրիկը մեռած է: Ես պարտիմ անոնց, թե՛ հայրը և թե՛ մայրը ըլլալ:

Այո «պարտիմը» շատ հատկանշական է: Ան չէր ըսեր «կուզեմ», այլ «պարտիմ»:

Եվ այս կինը Հայ էր:

Կրկնեմ, թե չեմ ուզեր ընդհանրացնել, բայց ինքզինքիս թույլ կուտամ ընել միայն մեկ ընդհանրացում ամենեն աղքատ, գրեթե մուրացիկ դասերու, այրիներուն և մենավոր կիներուն համար:

Երկու անգամ դժբախտությունը ունեցա Նովոռոսիյսկեն Բաթում և Բաթումեն Տուապսե ճամփորդելու: Շոգենավերը լեցուն էին հայ գաղթականներով, որոնք իրենց հայրենիքը կդառնային: Կիներու և երեխաներու թիվը շատ ավելի էր այրերեն:

Այնտեղ տեսա թշվառություն մը, որուն մասին երագիս մեջ անգամ չէի կրնար գաղափար ունենալ:

Չեմ ուզեր խռովել ընթերցողներս՝ նկարագրելով բոլոր արհավիրքը: Անոթությունը և սովը կչարչրկեին անգթորեն. կլսեի աղաղակներ և հեծեծանքներ, բայց ուշադիր դիտող մը ըլլալով հանդերձ չնկատեցի, որ անքնութենն և անոթութենն գալարուն մայրը ո՞ր և է հարված փորձեր իր գավակը լռեցնելու ...

Հանդիմանությունները կըլլային խղդուկ մրմռուքով մը, իսկ գորովանքի ու փայփայանքի տեսարանները ավելի շատ էին:

Չափազանցություն չպիտի ըլլա, եթէ ըսեմ, որ միայն այստեղ, թերևս առաջին անգամ ըլլալով, ըմբռնեցի, թե ի՞նչ է մայրը ընդհանրապես և թե ի՞նչքան մեծ է իր տռամը, երբ չի կրնար փարատել իր գավկին անոթությունը ...

Թիֆլիսի մեջ հանդիպելով հազարավոր մուրացիկ տղոց, հաճախ ես ինձի հետևյալ հարցումը կուտայի, ո՞րն է ավելի զարհուրելի այս որբերուն համար, մա՞հը, թե մոր բացակայությունը: Եվ ամեն անգամուն ալ ես ինձի կպատասխանեի. անշուշտ, մորը բացակայությունը ...

Դյուրին է ըսել մուրացող մորը՝ «գնա՛ աշխատե»: Բայց ոչ ոքի բերանը առաջ կերթա այդ բանը ըսելու, որովհետև գիտե, թե մարդ գործ չպիտի տա անոր, պարզապես անոր համար, որ խանդակաթ մայրն է ան ...

Այս այսպես է ...

Եվ այստեղ պարտականության զգացումը ավելի զարգացած է:

Կթվի, թե նյութես շեղեցա: Բայց անկեղծ չպիտի ըլլայի, եթե ուրիշ խնդիր մըն ալ չշոշափեի:

Ինչո՞ւ հայ հարուստներ անհրաժեշտ միջոցներ ձեռք չեն առներ, այս արհավիրքը դարմանելու համար:

Հավանաբար կան պատճառներ, որոնց ես ծանոթ չեմ կամ չեմ հասկնար:

Միայն, երբեմն այն գաղափարը կուներեմ, թե թշվառ մայրերու ու զավակներու հանդեպ անտարբերությունը ամենեն քստմնելի երևույթն է, զոր տեսած եմ հայ բարձր ընկերության մեջ ...

Մենք վարժված ենք ...

Երբեմն ինձի այնպես կթվի, թե այս մեծ մեղքին համար է, որ Աստված կամ ճակատագիրը ո՛չ երջանկություն և ոչ ալ

հանգիստ կուտա ամբողջ Յայաստանի ... Բայց կվերադառնամ հայ կրթված դասու Յայուհիներու կյանքին, որովհետև ավելի լավ կճանչնամ այդ կյանքը և ավելի լավ կըմբռնեմ: Եվ կրկին կսկսիմ մանկամարդուհիներեն:

Յաճախ կլսեի այն կարծիքը, թե կիները ո՛չ կրոնք ունին և ոչ ալ հայրենիք: Անոնց հայրենիքը՝ հայրենիքն է անոր, զոր կսիրեն, իսկ Աստվածը՝ այն է, որուն կաղոթե իր սիրահարը:

Մինչև այդ չէի կրցած վճռել, թե ճի՞շտ է այդ կարծիքը: Բայց կկարծեմ, թե Յայուհիներուն համար ճիշտ է՝ շատ քիչ բացառությամբ:

Ես ճանչցած եմ խառն ամուսնություններ, մասնավորաբար ռուսներու հետ, իսկ այդ ամուսնություններն ծնած զավակները շատ հազվադեպ է, որ հայերեն խոսին: Մոսկվան և Պետրոգրադը ավելի ընտանի են անոնց համար, քան Երևանը և Ալեքսանդրապոլը:

Այս տեսակ պարագաներուն մեջ ծուլունը ավելի դյուրությամբ կկատարվի, բայց ինձի կթվի, թե այդ բանը կախում չունի միայն միջավայրին արագ ընտելանալու ընդունակություններեն, այլև այն իրողութենեն, որ Յայուհին չի կրնար կիսովին սիրել: Եթե ան իր կյանքը տա իր սիրականին, իրապես ամբողջ կյանքը կուտա մինչև իր մահը և ոչինչ կպահե իրեն համար: Եվ եթե ամուսինը կամա ակամա զինքը լքե, իր նախանձի տանջանքները ավելի սոսկալի են, քան ուրիշ ո և է ազգի կնոջ տառապանքները\*:

Յայուհին նախանձը կկրե բոլորովին տարբեր եղանակով: Ձայն գռեհիկ ձևով արտահայտելու գաթակղութենեն կխորշի, դավաճանութենե կվախնա և կլռե: Առանձնության մեջ իր արցունքներով կթոջե բարձր և ակռաներով կբզկտե զայն, բայց երբեք ցույց չի տար իր խոր վիշտը ո՛չ իր մտերիմներուն և ոչ ալ մանավանդ անոր, որ պատճառն է այդ տառապանքին:

Ավելորդ է ըսել, որ ես կխոսիմ կրթված դասու աղջիկներու մասին, զալով հասարակ դասերուն, որ մրցակցին հետ կռվելու չափ առաջ կերթան, այնտեղ պոռթկումները ավելի կոպիտ են, իսկ հուսահատությունը ավելի բուռն, որովհետև

\* Ճակատամարտ, 13.X.1920:

այնտեղ չունին մխիթարություն՝ ո՛չ գիրքերու և երաժշտության, ոչ ալ մշակված կյանքին:

Երբ խեղճ հայ կինը կկորսնցնե իր ամուսինը, գիտե, որ ամեն ինչ կորսնցուցած է և թե իր տղաքը պիտի մեռնին անոթութենեն կամ ամենեն բախտավոր պարագային պիտի մուրան Վերայի կամուրջին վրա: (Թիֆլիսի մեջ բանուկ կամուրջ մը):

Կդառնամ նորեն կրթված դասու հայ կիներուն:

Ինձի կթվի, թե նախանձոտ ըլլալով հանդերձ և գիտնալով միանգամայն, թե իր սիրականը այլևս կորսված է, հայ կինը երբեք չի դադրիր զայն սիրելէ, նույնիսկ այն պարագային, երբ ինքն ամուսնանա ուրիշի մը հետ: Ծիշտ է, որ երբ զինքը լքողին մասին խոսի, ուրիշ բան չըներ, բայց եթե արհամարհանքով երկարել իր վարի շրթունքը և թեթևորեն չաչել լեզուն: Այդ կնշանակե «Յո՛գս»: Բայց իր արժանապատվությունն է, որ կարգիլէ զինքը արհամարհանքով ժպտիլ կամ լեզուն չաչել: Այդ շարժումը իր հոգիեն չի բխիր: Եվ թերևս նույն գիշերն իսկ, իր երագին մեջ, պիտի գրկե ան, որ առաջին անգամ սեր ներշնչեց իրեն:

Ռոստովի մեջ կդիտեի հայ մանկամարդուհի մը, որ դժբախտությունը ունեցած էր սիրահարելու մեկու մը, որ թեև ոչ տարեց, բայց ամուսնացած էր և կպատկաներ արվեստագետներու աշխարհին, իհարկե, շփացած կիներեն:

Տարի մը անցավ վեպին հերոսը դադրեցավ զինքը սիրելէ, հետո մեկնեցավ. մանկամարդուհին ծառայության մտավ և նիհարցավ, դեղնեցավ, բայց առանց դժգոհելու աշխատեցավ լռիկ-մնջիկ:

Ես ալ նույնքան լուռ կերպով կհետևեի իրեն, համոզված, թե իր սրտին մեջ ատելության և վրեժի փափագը ունի:

Երբ հերոսը վերադարձավ, չկրցա ինքզինքս զսպել հարցնելու աղջկան.

— Անոր պիտի երթա՞ս:

— Պիտի երթամ ...

— Բայց արժանապատվություն չունի՞ս:

— Արժանապատվությունը ոչինչ է, երբ մարդ ճշմարտորեն կսիրե: Ան ինձի ոչինչ խոստացած է:

— Ուրեմն քեզ չի սիրեր ...

— Բայց ես դեռ կսիրեմ զինքը, — պատասխանեց մանկամարդուհին:

Ահա իրենց զգացումն ու հոգեբանությունը: Այդ զգացումը բուռն է, և բարեկիրթ մանկամարդուհիներուն քով անհատական շահը ամենեն վերջը կուգա, հակառակ այն կարծիքին, թե Յայերը ընդհանրապես ընչաքաղց են:

Իմ հետագա դիտողություններուս շնորհիվ այն եզրակացության եկա, թե միջին և անորոշ զգացումը շատ քիչ անգամ գոյություն ունի հայ մանկամարդուհիներու մոտ: Ընդհանրապես, կամ շատ մակերեսային է, և կամ փարած՝ հավատարիմ շան պես: Առաջին պարագային չի դարպասեր, ինչպես կընեն ֆրանսացի և լեհ աղջիկները:

Ավելի ետք հանդիպելով այն աղջկան, որուն պատմությունը հիշեցի, այլևս իր դժբախտ սիրո մասին չխոսեցա: Ան նկատեց այդ բանը և անգամ մը գրեց թղթի կտորի մը վրա. «Հոժարությամբ կխոսիմ ձեզ հետ, բայց ինձի նույնպես հաճելի է լուռ մնալ ձեր ներկայությանը»:

Յայ մանկամարդուհիները գիտեն գնահատել փափկանկատությունը:

Ես առիթ կունենայի տեսնելու հայ ազնվականության պատկանող կիներ և աղջիկներ: Իրենց մանկութենեն ուրիշ բան չէին հագներ, բայց միայն նուրբ կտավե զգեստ մը և արտասահմանի մեջ կառնեին իրենց ուսումը:

Անոնք ամառը կանցնեին Պիարից կամ Օսթանտ և կճանչնային աշխարհի բոլոր նշանավոր դեմքերը: Նյութական հոգեր չունեին, բայց և այնպես ոչ մեկ երջանիկ կթվեր: Իրենց աչքերը կարտահայտեին միշտ անձկություն կամ մտահոգություն և նոր տպավորություններու հավիտենական որոնումը: Միշտ բարոյական ծարավը ունեին: Ահա՛ թե ուր պետք է փնտրել իրենց անձկության գլխավոր պատճառը:

Անոնք հաճախ կամուսնանան առանց սիրելու, իբր սեր համարելով տղամարդուն գեղեցիկ արտաքինը տեսնելու հաճույքը կամ հրապուրվելով անոր ընկերային դիրքեն:

Առաջին տարին հազիվ անցած՝ ձանձրույթն ու անգոհունակությունը ծայր կուտային: Եվ այդ «հարուստ դժբախտներուն» (եթե կարելի է այդպես բացատրել) ամենեն երջա-

նիկները անոնք էին, որոնք ճաշակ ունեին արվեստի և գրականության:

Շատ ժամանակ չըներ, որ տեսա վերջապես հայ օրիորդ մը, որուն աչքերուն մեջ զվարթ արտահայտություն մը կար\*:

Իրմե խնդրեցի ինձի համար գրել ո և է բանաստեղծություն մը, և ահա, թե ինչ գրեց.

*Ինձի մոտեցավ հուշիկ հուշիկ, — Շրջապատեց իր թևերով,  
— Յետո կանգ առավ քնքշորեն, — Ինչպես անդոհանք մը  
մահաբեր:*

*Ծիծաղեցավ դժնդակ ծիծաղով մը, — Յեռուներն ուղղեց իր  
աչքերը, — Յետո խորասույզ ակնարկ մը նետեց, —  
Մատնելով գիս անծկության:*

*Եվ հուլորեն իջեցուց — Վարագույրը թանձրկեկ, — Ու  
մրմունջներ ծայր տվին, — Լռության մեջ ուրվային:*

*Կարծես խայթված կծու բանե մը, — Մարգարեական  
ինչպես մրրիկը, — Ես, կախարդված, փակեցի — Տնոյն  
աչքերս կապտորակ:*

*Բայց մահկանացուն նշմարեց, — Շողերն երկնային  
երազին, — Եվ, կուրացած չարաշուք խավարին մեջ, —  
Տեսավ, տեսավ ամեն բան ...*

*Ես ցրվեցի գորշ ստվերը, — որ ծեղունեն կիներ վար, — Եվ  
անդոհանքը ցնդեցավ, — Յեռաստանին մեջ կապույտ ...<sup>1</sup>*

Թերևս կսխալիմ, բայց այս ոտանավորը . (արձակ թարգմանված) շատ գեղեցիկ երևցավ ինձի: Եթե չճանչնայի անոր հեղինակը, երբեք չպիտի ըսեի, թե 18 տարեկան աղջկան մը գրչին արդյունքն է: Այս տողերը ավելի շատ կնմանին ժամանակակից Չայլտ Դարուլդի մը ոտանավորներուն: Խորագիրն է «Անդոհանք»:

Այսպիսի առիթներու մեջ գերմանացիները կհարցնեն. «Ալ ի՞նչ բան կպակսի»: Եվ ես փափագն ունեցա հարցնելու այդ տաղանդավոր երիտասարդ բանաստեղծուհիին. «Ալ ի՞նչ կպակսի քեզի»:

Փոխանակ պատասխանի՝ լսեցի առածի պես խոսք մը. «Կյանքի սիրուն և կյանքի երջանկության համար հաճույքով պիտի հրաժարեի ամենամեծ փառքեն»:

\* Ճակատամարտ, 14.X.1920:

Եվ հարուստ ու ազատ աղջկան մը մոտ կյանքի այս ծարավը երբեք չզարմացուց գիս: Ստածեցի. «Ասիկա իր անձնական ծարավը չէ, այլ ծարավը իր ժողովուրդին նախընթաց սերունդներուն, իր մեծ մայրերուն և մամերուն, որոնց առջև, գործածելով այս բանաստեղծուհիին չքնաղ պատկերը, կյանքը միշտ իր թանձր վարագույրը կիջեցներ:

Ես նկատեցի նաև, բայց առանց ապահովելու իմ դիտողություններուն ճշմարտությունը, բարձր դասու մանկամարդուհիին նկարագրին ուրիշ մեկ հատկանիշը. անոնք ունին ընկերուհիներ, բայց ոչ բարեկամուհիներ, բացի մանկության շրջանեն, ուր տեսած են խիստ գորովալից բարեկամության պարագաներ: Քանի կնեծնա մանկամարդուհին, այնքան կավելնա իր բարոյական մինակությունը: Բարեկամները կնեծնան, բայց այլևս չկա միևնույն անկեղծությունը:

Սովորաբար բարեկամուհիներեն մեկը կփորձե ուրիշի մը պատմել իր նոր մտերմություններեն մեկը, և ահա հուսախաբությունը կհաջորդե:

Վստահությունը, մտերմությունը լավ չէ հասկցված: Եվ Աստված չընե, որ իր մտերմությունը վստահած մանկամարդուհին ամենաթեթև ժպիտ մը նկատե իր բարեկամուհիին դեմքին վրա, ա՛լ վերջացած է բարեկամությունը ...

Վերջացած է միանգամ ընդմիշտ ...

Ընկերուհիները կնեծնան, բայց բարեկամուհիները կչվեն անդարձ ...

Ռուս կամ գերման աղջիկը, առաջին հուսախաբութենե վերջ, կփնտրե նոր բարեկամություն մը: Հայուհին մինչև ամուսնությունը, և երբեմն նույնիսկ մինչև մահը, երբեք չի հավատար կիներու բարեկամության:

Եվ իր հոգին կնեծնա մենավոր:

Պիտի ըսեմ, թե հայ մանկամարդուհին չապրիր միմիայն իր բանականությամբ, այլ շատ ավելի իր սրտին թելադրանքներով: Անոր համար առաջին տպավորությունը շատ մեծ կարևորություն ունի: Երբ թատերախաղ մը, գիրք մը կամ նույնիսկ մարդ մը իրեն հաճո չգա առաջին վայրկյանին, այդ տպավորությունը գրեթե երբեք չի ջնջվիր և եթե, ընդհակառակը, առաջին տպավորությունը նպաստավոր է, կներե գրքին բոլոր թերությունները և մարդուն բոլոր հանցանքները:

Այստեղ շատ լավ կհարմարի ռուսական առածը. «Մարդ սիրելի չէ, այլ բարի է, որովհետև սիրելի է»:

Կերկնեմ, թե այս բոլոր դիտողությունները իբր անուրանալի ճշմարտություններ չէ, որ կընեն: Այլ կըսեն. «Ինձի այնպես կթվի»:

Միայն մեկ բան կհաստատեն: Ոչ մեկ ազգի կնոջ հոգին այնքան մենակ է, որքան հայ կնոջը:

Եվ կխորհեի, թե այս առանձնությունը պետք էր ծնունդ տար խորհրդապաշտության և ջերմեռանդության: Եվ սակայն ...

11

Երբեմն Ռոստովի և Արմավիրի հայ եկեղեցիները գացած են, և տեսած են միայն ծերունիներ, կիներ և դեռատի տղաք, հաճախ նաև տղամարդիկ, զինվորներ և սպաներ, բայց երբեք մանկամարդուկիներ: Միայն մեկ անգամ հանդիպեցա անոնց, Ջատկի առտուն: Պարագան նույնն է Երևանի մեջ:

Երբեք չեմ հարցուցած, թե ինչու մանկամարդուկները այսքան պաղ են կրոնքին հանդեպ: Հայ մը պատասխանեց իմ հարցումիս\*.

— Ատենոք մենք՝ Հայերս, շատ հավատացյալ էինք և անդադար կաղոթեինք: Հետո տեսանք, որ Աստված մեզի չօգներ և ամեն հավատք կորսնցուցինք:

Հայ տղամարդուն դեպի Աստված ունեցած գործնական վերաբերումը շատ լավ կպատշաճի իր գործնական մտքին հետ: Բայց կիները: Ես չկրցա գոհանալ այս բացատրությունեն:

Ավելի վերջ ինձի օգնության հասավ մանկամարդուկի մը, որ նախ հայտարարեց կարճ և ազդու.

— Հանցանքը իմս չէ, եթե չեմ կրնար հավատալ ոչ Աստծու, ոչ ալ անդենական կյանքին: Ոչ կրնամ, ոչ ալ կուզիմ կեղծել: Հետո ... հետո ... կարդացա՞ծ եք Մերեյքովսկիի գործերը:

— Գրեթե ոչ մեկ գործ, բացի իր դրամաներեն, —խոստովանեցա:

— Այն ատեն ձեզի հիշեցնեմ իր բանաստեղծություններեն մեկը:

Եվ սկսավ արտասանել.

\* ճակատամարտ, 15. X.1920:

*«Քրիստոս հարյավ», կերգեն տաճարին մեջ,  
Եվ ես տխուր եմ, և լուռ է հոգիս ...*

*Արար-աշխարհ արյուն-արցունք կուլյա,  
Իսկ այդ օրհներգը, խորանին առջև,  
Ինչքա՞ն կեղծ կհնչե ...*

*Ա՛հ, եթե Քրիստոս մեր մեջն ըլլար ու տեսներ,  
Թե ի՞նչ դարձեր է մեր աշխարհը,  
Թե մարդիկ ի՞նչպես կատեն իրար,  
Եվ թե ի՞նչքան անպատիվ է մարդը ...*

Ես չեմ հիշեր այս բանաստեղծության վերջին տողերը, բայց այս քանի մը տողերը շատ բան բացատրեցին ինձի և հասկցա, թե անհարմար է այդ խնդիրներու մասին հարցաքննել մանկամարդուհին՝ աղջիկը ժողովուրդի մը, որ կորսնցուցած է իր հավատքը, ճիշտ ինչպես չվանի մասին չեն խոսիր կախված մարդու տան մեջ:

Բայց ամեն կանոն իր բացառությունը ունի, և եթե ինձի չէ հանդիպած հավատավոր կամ խորհրդագրած մանկամարդուհի, կրնամ ըսել, թե գիտեմ և կարդացեր եմ քերթվածները հայ լուրջ բանաստեղծուհիի մը: Անոր բանաստեղծություններեն յուրաքանչյուրը տոգորուն է խոր հավատքով մը առ Աստված:

Կարդացեք Շահինյանը, որ Մոսկվայի մեջ ուսանեցավ և ռուսերեն գրեց, բայց իր տաղանդը ավելի միջազգային է և ճշմարիտ:

Կրնայի թվել առնվազն տասնյակ մը բանաստեղծուհիներ և գրագիտուհիներ, բայց անոնց լեզվին անծանոթ ըլլալով, չպիտի կրնամ մեջբերումներ ընել: Միայն խորհուրդ կուտամ ամեն հայ աղջկան կարդալ Սրբուհի Տյուսաբի գործերը: Տիկին Տյուսաբ ծնած է 1842-ին (1841 թ. - *ԱՄ. Ձ.*) և մեռած՝ 1901-ին: Ան առաջինը եղավ, որ նվիրվեցավ հայ կիներու և աղջիկներու պաշտպանության: Ձեզի համար գաղտնիք մը չէ, թե շատ չըներ, որ, համաձայն ընդունված սովորության, հայ կինը չէր համարձակեր խոսիլ իր ամուսնուն ներկայությամբ: Թերևս ատիկա առաջ կուգար այն բանեն, որ հայ տղամարդիկը շատ կսիրեն իրենք խոսիլ կամ թերևս Արևելքի առանձնահատուկ կարգապահության հետևանք էր այդ:

Տյուսաբի լավագույն և ամենեն կարևոր գործերն են «Մայտա», «Սիրանույշ» և «Արաքսիա կամ Վարժուհին»: Չեն գիտեր, թե այս գործերը թարգմանվա՞ծ են ռուսերենի, բայց շեշտել հետևյալ իրողությունը, կարևոր է: Անցյալ դարու կեսին, երբ Արևելքի կիներուն մեծամասնությունը կարդալ անգամ չէր գիտեր, հայաստանցի կին մը համարձակեցավ ասպարեզ իջնել իր իրավունքներուն պաշտպանության համար, և իբրև միջոց ընտրեց գրականությունը: Անոր հաջորդեցին ուրիշներ՝ իրենց ժողովուրդին տանջանքները հասցնելով մինչև Եվրոպա:

Օճանոթացած ըլլալով, թեև շատ հարևանցի, հայ կին գրողներու՝ իմ գրչի քույրերուն կենսագրությանց, նկատեցի, որ գրեթե բոլորն ալ կմեծնային և իրենց ուսումը կառնեին Պոլսո մեջ կամ Ռուսաստան և կամ արտասահման, և հասկցա հայուհիներուն բուռն ձգտումը՝ մեկնելու ո՞ր և է տեղ առաջին պատեհությամբ:

Շատ ժամանակ չըներ, որ լսեցի սա խոսքը.

— Ի՞նչ կարելի է ըսել հայ մանկամարդ աղջկան մասին:

Ինչպես կտեսնեք, կարելի է շատ բան ըսել այդ մասին: Եվ եթե ես այնքան քիչ նյութ հավաքեցի, ատիկա չի նշանակեր, թե հայ մանկամարդուհիին հոգին դատարկ է: Անոնց գլխավոր հատկությունը այն է, որ չեն սիրեր իրենց վրա խոսիլ: Եվ ինձի կթվի, թե ատոր պատճառն է, ինչպես կըսե առածը, այն, որ անուշ ջուրերը խոր կըլլան:

Իրականին մեջ ալ այսպես է: Ես շատ եմ նավարկած և պիտի ըսեմ, թե ամենեն փառահեղ օվկիանոսը, ամենեն խորը, որուն ջուրերուն մեջ այլազան, հավիտենական կյանք մը կեռա ու կհորդի, Խաղաղական օվկիանոսն է. մինչդեռ ամենեն սոսկալի և ամենեն անհաճո փոթորիկին հանդիպեցա սա պզտիկ, ողորմելի Ազախի (Ազովի— *ԱՄ. Չ.*) ծովին վրա: Այս ծովը ոչինչ տեսած է, միայն փոթորիկ նավեր կրնան մտնել անոր մեջ, բայց հյուսիսի ամենաթեթև հովին փոթորիկը անտանելի կդառնա:

Մեծ փոթորիկներ չկան Վանա լճին վրա, բայց իր ափերն ու ջուրերը այնքան խորհուրդ և այնքան մարդկային տանջանքներ տեսած են, որ հեղինակներու ամբողջ սերունդ մը գրելու նյութ ունեցած են իրենց գիրքերուն մեջ:

Եվ սակայն այս լճին ջուրերը անուշ և խորունկ են ...

\* \* \*

Անգամ մը փողոցեն անցած ատեն հետևյալ խոսքը լսեցի.  
«Հայերը իրենք են պատասխանատուն իրենց կրած դժբախտությանց»:

Խոսքին շարունակությունը չլսեցի, բայց ըսել կուզեին, թե չարժեքի Հայերու վրա մտածել կամ խոսիլ: Ես քաղաքականութենե չեմ հասկնար, ատիկա իմ գործս չէ, բայց գրողի հոտառությունը ինձի կզգացնե, թե ատիկա բոլորովին ճիշտ չէ:

Ենթադրենք, թե այդ մեղադրողը կամ անճարակ հոգեբանը քիչ մը իրավունք ուներ իր խոսքին մեջ. «Հայերը իրենք են հանցավորը»: Բայց ան չհամարձակեցավ ավելցնել «նա՛ն Հայուհիները»: Եվ սակայն ոչ միայն իմ, այլև ուրիշներու կողմե մեջբերված իրողությունները կապացուցանեն, որ Վանի լճին մոտ և Ղարաբաղի մեջ ամենեն ավելի կիները, աղջիկները և մանուկներն են, որ տառապեցան:

Եվ համարձակորեն պիտի պատասխաներ, թե առաջին և երկրորդ ակնարկին:

— Ինչե՛ր կամ խոսելիք Հայաստանի աղջիկներու և կիներու ճակատագրի մասին, և պետք է այդ բոլորը ըսել այնպես, որ ամբողջ աշխարհը լսե և մտածե այդ լռակյաց և հլու դժբախտներուն վրա ...

Եթե անոնք հոժարական կհեռանան իրենց հայրենիքեն, անձնասիրությունը կամ ցրտությունը չէ, որ կհեռացնե, այլ աշխատելու փափագը, իրենց և կարողությունները ճշմարիտ, մեծ և մարդկային գործին, մշակույթին նվիրելու իղձը: Ու կվերադառնան ոչ թե իբր ճվացող արարած մը, կամ ալճեարայի և աշխարհագրության մասին ծանոթություններ քաղած աղջիկ մը, այլ իբր կին բժիշկ կամ ներկայացուցիչ արվեստի, որ կազնվացնե հոգին:

Այն մանկամարդուհիները, որոնք երջանկությունը ունեցած են ժամանակին երթալու և վերադարձած են վերածված, գիտեն երախտապարտ ըլլալ իրենց ուսուցիչներուն: Երբ 16 տարեկան օր. Միրիմանյանը Ավերի անունը կարտասաներ, կիսով չափ կզոցեր իր աչքերը, և թարթիչներու այս գրեթե աննկատելի շարժումին մեջ դուն կզգայիր երախտագիտու-

թյունը և պաշտունը հանդեպ այն մարդուն, որ գիտցած է զինք մոտեցնել աստվածային արվեստին, միակ սփոփանքը և միակ հանգիստը Աստծու կողմե լքված Հայաստանի, ինչպես և դժբախտ Ռուսաստանի համար ...

Մշակույթն դուրս երջանկություն չկա և չի կրնար ըլլալ երկրի մը համար: Եվ այն երկիրը, որուն կիները և ապագա մայրերը այնքան տենչանք ունին այդ մշակույթին, չի կրնար կորսվիլ, ինչքան ալ պզտիկ ըլլա իր երկրամասը, ինչքան ալ բազմաթիվ ըլլան իր թշնամիները ... Որովհետև զգացումին և տաղանդին ուժը ամեն տեղ է և միշտ գերազանց է բռնության անիծապարտ գործեն:

\* Ճակատամարտ, 16.X.1920:





## ЛИРИК ПРОЗЫ

(Портрет Бориса Лазаревского)

Поколения мчатся, традиции летят, десятилетия стали короче часов. Должно быть этот бешеный ритм скоро утомит Хроноса, и старик опять станет тихим, но сейчас мы еще в полосе крайней его лихорадки...

Борис Лазаревский уже весь в прошлом. Ближайший преемник школы Чехова и Куприна, он уже подлежал канонизации в пантеоне "Нивы"—издание его сочинений должно было выйти "приложением" за 1919 год, да события помешали.

Старше Зайцева, Чулкова и Ал. Толстого — этих писателей новой русской прозы, он еще недавно был "молодым", но пронеслась буря над Россией, и ряд его томов стоит на полке где-то среди "классиков".

Впрочем настоящим классиком, академического стиля, таким, как Бунин, он никогда не был.

Что-то мило - бесшабашное, богемствующее, студенческое, неустановившееся было и осталось навсегда характерной чертой его портрета.

Считая себя учеником Чехова и примыкая к методам его работы, которые можно определить как лирический реализм, он пишет всегда под настроением, всегда с налету — и потому всегда неровно.

Чуждый всякого модернизма в смысле вычурности, задуманности и хорошо владея языком, он в чистую русскую речь всегда вносил оттенок малороссийского юмора, где-то далеко спрятанного, а в момент самостийности, переведя сам себя на "украинский" язык, стал "национальным" писателем.

С модернизмом было у него одно только соприкосновение—это чуткость к вопросам эротики, иногда излишняя, слишком обнаженная. Эта чуткость особенно проявлялась в те годы, когда вся русская литература была увлечена разрешением "вопросов пола" и когда именно созрел талант Лазаревского.

Хорошо бы сейчас прочитать все его рассказы и повести в целом, но Тифлис не дает этой возможности, и память здесь должна заменять библиотеку.

Конечно, критики вроде Венгерова или Иванова-Разумника, составляя статьи для энциклопедии на букву "л", будут изображать Лазаревского как продолжателя чеховской традиции в смысле изображения дореволюционной, мещанской безобщественной русской жизни, будут искать в его героях и героинях отсутствие идеи и воли к делу, придавленности и угнетенности и тем дополнять общую, даваемую русской литературой, картину самодержавного строя.

И они, в своем русле, будут правы. Нытики и неврастеники, эротоманы и безвольники Бориса Лазаревского, несомненно, показательны для русского интеллигентского общества эпохи последних царей.

Но если только так рассматривать Лазаревского, то он окажется меньше даже своих размеров.

А между тем в нем есть нечто иное, ускользающее от взоров присяжных критиков, но улавливаемое публикой и друзьями — и те и другие его любят и понимают больше, чем критика.

Это иное — то искреннее беспокойство, то бессознательное искание, та интимная тревога, которая жила в широких слоях русского общества, как предчувствие грядущих бурь, настойчивым изобразителем которой явился романист Георгий Чулков.

В этом пункте Лазаревский соприкасается с новой литературой, и этим он обращен к будущему.

Это беспокойство, которое выражается то в донжуанстве, то в неудачничестве, Лазаревский описывает —

вадет всегда субъективно, очень часто от первого лица, иногда легко прикрываясь маской героя, — и потому определить его как лирика прозы вполне уместно.

Внимание Лазаревского, как лирического бытописателя, имеет определенный уклон в сторону женской души, причем это внимание у него нецеломудренно, и употребляя вульгарное сравнение, похоже на подглядывание за купающимися.

Если бы не было этого оттенка, конечно, рассказы Лазаревского имели бы очень большую ценность: он мог бы больше остановиться на психологии, точнее уяснить себе и читателям сдвиги воли и т. д.

Но эротика также входит в портрет Лазаревского, как и бесшабашность.

Примиряет с ней то, что она искренна, неприкрыта, и то, что с годами она ослабевает и заменяется тонами более приятными и прозрачными.

Тысячи мещанских историй влюбленности, падение и несчастий девушек, рассказанные Лазаревским, имеют одну общую черту: в жестоком, неприглядном быту, перипетии его героинь всегда освещены изнутри какой-то искрой, исходящей, может быть, от Гамсуна. Лазаревский ни разу не бросил камень в свою героиню, чем, например, снискал себе популярность автор пошлых историй Анатолий Каменский. Лазаревский ни разу не задрапировался в тогу моралиста, или особенного знатока и понимателя человеческих отношений. Он ни разу не взошел на кафедру и не произнес ни одной из тех поучительных фраз, которые пятнают гениальные произведения Льва Толстого. Это тэратэрность предохраняла Лазаревского от многих ошибок.

Вообще надо сказать, что он очень легко и дружелюбно впускает читателя в свою кухню. (За это его ненавидят непризнающие его эстеты). У него душа нараспашку, он весь на ладони, все выкладывает сразу, с подкупающей откровенностью и товарищеской болтливостью. В этом смысле каждый его рассказ — омут сти-

листических погрешностей. Про своих героев он рассказывает тысячи совершенно ненужных вещей, забывая иногда главнейшее. Такая манера письма легко могла бы стать хаотической, но от последнего Лазаревский спасается за решетку сюжета.

Всегда строя свой рассказ лирически, по настроению, он тем не менее умеет зорко следить за входами и выходами своих героев, и, как опытный режиссер, то выпихивает их на сцену, то выгоняет за кулисы. Все эти жесты жестокого обращения с героями и сюжетом у него на виду, он нисколько не скрывает их от читателей, — но читатель любит закулисную жизнь, и все кончается к обоюдному удовольствию. Повторяю, в "Вессах", в "Аполлоне" и во всех кружках русского купеческого и дворянского эстетизма Лазаревского могут высмеивать и высмеивать без конца. Но, кроме салонов, где книги больше лежат на столах, чем читаются, есть еще миллионы простецких комнат, душистых садов, где Лазаревского читают и любят, не замечая его манер.

Так же и в литературной столичной богеме. Не говоря уже о гомерических кутежах Куприна, где Лазаревский — желанный друг, о чопорном литературном обществе, где он — полезный гость, о потогонных редакциях, где он — лакомый кусок, — нет, в тихих, интимных углах литературы, в комнатках покойного Фидлера на Николаевской, во дворце богемы, "Палэ-Рояле", на Пушкинской, Лазаревский, неприкаянный, всегда спешащий, всегда смятенный — верный и любимый друг.

И есть у него один тайный, большой труд, который он ведет всю жизнь и которым будут зачитываться лет через сто, — это его литературный дневник.

Где бы Лазаревский ни был, в Тифлисе, в Махинджаурах, в столицах, на Волге, с ним всегда солидный, прекрасно переплетенный из великолепной бумаги том, в котором он своим почерком, где все буквы несутся, как сумасшедшие, изо дня в день, с часу на час ведет

летопись своих встреч и впечатлений. Нет писателя, который не заполнил бы ему там одной или многих страниц. Там клеиваются фотографии, засушенные цветы, рисунки, открытки, — это походный Фидлер. И таких томов уже больше десятка хранится в Публичной библиотеке Петербурга, куда Лазаревский аккуратно доставляет их по мере заполнения. И на каждом томе надпись: "В случае моей смерти доставить в Публичную библиотеку".

Вообще к смерти Лазаревский готов каждую минуту (как и его герои). И оттого проживет мафусаилов век. Он необычайно легок на подъем, на полете, на выезде. Вещи над ним не имеют власти. И этой воздушностью своего характера он напоминает людей будущей, немецкой культуры.

Почему он не стал "большим" писателем? Это было бы для него слишком громоздко, слишком торжественно. Всю жизнь проведя в богеме, испытав, как все, и голод и жестокую эксплуатацию, он никогда не мог позволить себе роскоши сосредоточиться спокойно на большом труде. Его великое — в малом. Его проблемы — атомы души. Его картины — миниатюры. Его собрание сочинений — путевые заметки житейского пути.

Так и надо его брать целиком, со всеми смешными и милыми сторонами его портрета, как типичную фигуру недавней по времени, но далеко ушедшей по психологии эпохи.

СЕРГЕЙ ГОРОДЕЦКИЙ

## ՀԱՅ ԿԻՆԸ

(Մեկ հատված պ. Գանկկիչի դասախոսությունից)

Իրանց անբարոյականությամբ հայտնի արևելյան բոլոր կանանցից մենք միայն մեկին ենք ճանաչում, որը, չնայելով իրանց սպառնացող բազմաթիվ վտանգներին, խստությամբ պահպանել է իր բարքերի մաքրությունը՝ այդ կինը հայուհին է:

Մեր ժամանակակից ճանապարհորդների և գրողների ամենամեծ պակասությունը այն է, որ նրանք շատ անփույթ կերպով են կազմում իրանց պատմությունները և նկարագրությունները, որոնց մեջ ոչ ճշտություն կա և ոչ անկողմնապահություն, որոնք անհրաժեշտ են թե հետաքրքրությունը շարժելու և թե նույնպես առհասարակ խրատելու համար: Մինչև այժմ օտար լեզվով ոչ մեկ հեղինակություն չկա, որի մեջ խոսվելիս լիներ Հայաստանի մասին և հայկական ժողովրդի վերաբերյալ բոլոր հանգամանքները խորը ուսումնասիրված լիներ: Այդ պատճառով և մենք այդ ժողովրդի մասին միայն այն, մեծ մասամբ նվազ տեղեկություններն ունենք, որոնց մենք քաղում ենք էնցիկլոպեդիաներից և ընդհանուր պատմության ու աշխարհագրության ձեռնարկներից:

Բայց հայ ժողովուրդը արժանի է, որ դեպի նրան ավելի ծանր վերաբերվեն, որովհետև այն ժամանակից, որ հայերը քրիստոնեություն ընդունեցին (տասն և հինգ դար առաջ), այս ազգի անունը շատ անգամ փառավորվեցավ պատմության մեջ: Ասիական բոլոր ժողովուրդներից իսկական նշանակություն միայն հայ ժողովուրդն ունի, որովհետև նրա մեջ քաղաքակրթության տարրեր կան, որ բոլորովին անծանոթ են նրա բոլոր հարևան ժողովուրդներին: Մենք մեր առարկայից կհեռանայինք, եթե մտադրվեինք խոսել Հայաստանի փայլուն պատմական անցյալի վրա. բայց մեզ անհրաժեշտ է դառնալ դեպի այդ անցյալը, պարզելու համար ամեն կողմից նշանավոր և հաստատող այն փաստը, որ երբեմն ընդարձակ և միայն ներկա ժամանակում աշխարհագրական դրությամբ վնասված այդ երկիրը, այնուամենայնիվ, պահպանեց այնքան

կենսական ուժեր, որ մի քանի դար շարունակ նրան չկարողացան թուլացնել ոչ հռոմայեցիք, ոչ պարսիկները և ոչ թուրքերը: Քրիստոնեական լուսավորված Հայաստանը ամեն ժամանակներում պետք է Ասիայի հետ կռվեր, և միայն, երկար և հերոսական ընդդիմադրության շնորհիվ, նրան աջողվեցավ ազատվել թուրքերի հալածանքներից մեկ կողմից և հարևանների շարունակ հարձակումներից մյուս կողմից, և ապաստան որոնել այնտեղ, ուր նրա կրոնը և նրա լեզուն, որ ամբողջ աշխարհում ամենահինն է, կկարողանային ապաստան գտնել:

Որքան անգամ նախանձը զինվորվում էր հայերի դեմ, և որպես հաճախ, տեսնելով նրա նյութական բարվոքման աճումը, շատերը հարցնում էին իրանց վատ ծածկված դառնությամբ. ինչպե՞ս կարողացավ այդ չարչարված ժողովուրդը կռվել անհաջողությունների դեմ, ձեռք բերել միջոցներ, իր անցյալի բոլոր ավանդությունները անձեռնամուխ պահպանել, հաստատուն մնալ իր ավերակների մեջ և հույսը չկորցնել մինչև անգամ այնպիսի հանգամանքներում, երբ մեծ ազգերն անգամ, անիշխանությամբ տատանված, երերվում են, չնայելով իրանց զորությանը:

Մենք կարող ենք պատասխանել այդ հարցին: Երբ ժողովուրդը, չենթարկվելով ճնշող հանգամանքների զորությանը, ընտրում է իրան համար որպես դևիզ հետևյալ երեք խոսքերը՝ աշխատանք, հավատ և ընտանիք, նա արդեն պատասխարված է փոթորիկի բոլոր վտանգներից, նա զգում է, որ օրից օր նրա ուժերը աճում են և հաստատ քայլով գնում է առաջադիմության ճանապարհի վրա, և, հետևապես, փրկության շավղի վրա:

Ոչ ոք չի հակառակվի այն բանի դեմ, որ հայ ժողովուրդը— մշակ ժողովուրդ է և որ նրա այդքան նախանձ գրգռող բարօրությունը միայն նրա ծանր և անխոնջ աշխատանքի արդյունքն է: Տասն և հինգ դար առաջ հայերը քրիստոնեություն ընդունեցին և այդ ժամանակից նրանց հավատի մեջ չէ նկատված ոչ մի խտտորումն: Վաղ ժամանակից լուսավորությունը դրեց Հայաստանը, երկրի այս փոքրիկ անկյունը, եվրոպական քաղաքակրթության բավական բարձր աստիճանի վրա: Նրա նյութական զարգացումը, բարօրության այս զորեղ տարրը, իր գլխավոր զորությունը քաղեց լուսավորությունից և բարոյականությունից և հետո իր կողմից ազդեց

բարքերի վրա, որովհետև աշխատող և ծաղկող ժողովրդի համար առաքինությունը ավելի մատչելի է, քան թե իր օրերը ծուլության մեջ անցկացնող մի ժողովրդի համար:

Տնտեսության և խնայողության ոգին, հարգանք դեպի սրբությունը և սեր դեպի ընտանիքը պահպանվում են հայ ազգի մեջ շնորհիվ նրա կնոջ, որը լիակատար տիրում է ընտանեկան կյանքում (պետք է նկատել, որ մենք այդպես խոսելով, հասկանում ենք միայն կնոջ բարոյական ազդեցությունը շրջապատողների վրա, տան մեջ սնվողների վրա, որովհետև գործերը բացառապես տղամարդկանց ձեռքումն են):

Հայերի մոտ ընտանեկան երջանկությունը կախված է ամուսինների փոխադարձ համաձայնությունից: Տղամարդը անխոնջ աշխատում է, կինը տնտեսության և կարգին է նայում տան մեջ և հոգում է նրա մեջ խաղաղություն պահպանել, որը զորեղ ներգործություն ունի տան մեջ բոլոր ապրողների վրա: Ընտանիքի գլուխը հավատացած է, որ տուն վերադառնալով՝ նա կտեսնի իր կնոջ ժպտող դեմքը և դեպի իրան մեկնված մանուկների ձեռքերը, որոնք սիրով բարևում են նրան: Երբ տղամարդը տանն է, իր սրտին մոտիկ արարածների շրջանում, նա մոռանում է իր օրական աշխատանքը: Ընտանեկան ուրախությունը մշակի ամենալավ պարգևներն են:

Հայ կինը կրթում է մանուկներին ծնողական իշխանության հնազանդության մեջ և իր կրոնի վարդապետությունների համաձայն: Եթե նա քաղաքումն է ապրում, որտեղ մի որ և է ուսումնարան կա, նա անպատճառ այնտեղ է ուղարկում իր զավակներին: Աղջիկների կրթության վրա առանձին ուշադրություն է դարձվում և ամբողջ Հայաստանը կարող է պարծենալ նրանով, որ նա դեռևս չներկայացրեց աշխարհին այն գայթակող և հրապուրիչ պատկերներից և ոչ մեկը, որոնց վրա նկարվում են՝ շնություն, անհարազատ ծնունդ և պրաստիտուցիա: Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում հայ կինը մեծ դեր է խաղում ընտանիքի մեջ: Ընտանիքը, ինչպես արդեն վերևն ասված է, մեկ փոքրիկ մասն է մեծ ամբողջի, որ հասարակություն է անվանվում: Թող երեխաներ ունեցող ամեն մի կին կրթի նրանց այդպես, և հավատացած կացեք, որ հասարակության մեջ չեն լինի այն խռովությունները, որոնք, հայտնի դարաշրջաններում, հիմնովին

կենսական ուժեր, որ մի քանի դար շարունակ նրան չկարողացան թուլացնել ոչ հռոմայեցիք, ոչ պարսիկները և ոչ թուրքերը: Քրիստոնեական լուսավորված Հայաստանը ամեն ժամանակներում պետք է Ասիայի հետ կռվեր, և միայն, երկար և հերոսական ընդդիմադրության շնորհիվ, նրան աջողվեցավ ազատվել թուրքերի հալածանքներից մեկ կողմից և հարևանների շարունակ հարձակումներից մյուս կողմից, և ապաստան որոնել այնտեղ, ուր նրա կրոնը և նրա լեզուն, որ ամբողջ աշխարհում ամենահինն է, կկարողանային ապաստան գտնել:

Որքան անզամ նախանձը զինվորվում էր հայերի դեմ, և որպես հաճախ, տեսնելով նրա նյութական բարվոքման աճումը, շատերը հարցնում էին իրանց վատ ծածկված դառնությամբ. ինչպե՞ս կարողացավ այդ չարչարված ժողովուրդը կռվել անհաջողությունների դեմ, ձեռք բերել միջոցներ, իր անցյալի բոլոր ավանդությունները անձեռնամուխ պահպանել, հաստատուն մնալ իր ավերակների մեջ և հույսը չկորցնել մինչև անզամ այնպիսի հանգամանքներում, երբ մեծ ազգերն անզամ, անիշխանությամբ տատանված, երերվում են, չնայելով իրանց գորությանը:

Մենք կարող ենք պատասխանել այդ հարցին: Երբ ժողովուրդը, չենթարկվելով ճնշող հանգամանքների գորությանը, ընտրում է իրան համար որպես դևիզ հետևյալ երեք խոսքերը՝ աշխատանք, հավատ և ընտանիք, նա արդեն պատասպարված է փոթորիկի բոլոր վտանգներից, նա զգում է, որ օրից օր նրա ուժերը աճում են և հաստատ քայլով գնում է առաջադիմության ճանապարհի վրա, և, հետևապես, փրկության շավղի վրա:

Ոչ ոք չի հակառակվի այն բանի դեմ, որ հայ ժողովուրդը— մշակ ժողովուրդ է և որ նրա այդքան նախանձ գրգռող բարօրությունը միայն նրա ծանր և անխոնջ աշխատանքի արդյունքն է: Տասն և հինգ դար առաջ հայերը քրիստոնեություն ընդունեցին և այդ ժամանակից նրանց հավատի մեջ չէ նկատված ոչ մի խոտորումն: Վաղ ժամանակից լուսավորությունը դրեց Հայաստանը, երկրի այս փոքրիկ անկյունը, եվրոպական քաղաքակրթության բավական բարձր աստիճանի վրա: Նրա նյութական զարգացումը, բարօրության այս գործը տարրը, իր գլխավոր գորությունը քաղեց լուսավորությունից և բարոյականությունից և հետո իր կողմից ազդեց

թողեցին ճակատագրի կամքին, բախտ ցանկանալով նրան: Երևի, որբը սովից կմեռներ, եթե նրան չորդեգրեր մի պառավ այրի կին, որը մի քանի հարյուր ռուբլի դրամագլուխ ուներ: Վերև նկարագրած տխուր անցքից հետո հինգ տարի անցավ: Փոքրիկ որբուհին երևելի գեղեցկուհի դարձավ: «Ես չեմ մեռնի մինչև չապահովացնեմ քեզ», - շատ անգամ ասում էր նրան պառավ կինը: Բայց մի գեղեցիկ առավոտ կարճատև հիվանդությունից հետո, բարերարուհին հավիտենականության գիրկը մտավ: Նրա մահից հետո ոչ կտակ մնաց և ոչ փող: Կտակը գրված չէր, իսկ փողերը, ես համարձակ կասեմ այս, վերցրեցին նրանք, որոնք մեռնողի վերջին թուղթերին ներկա էին: Այս պատմության հերոսուհին երկրորդ անգամ որբացավ: Բայց, իր ապշեցնող գեղեցկության շնորհիվ, նա հանդիպեց այնպիսի մարդկերանցից մեկին, որոնք սիրում են թշվառ աղջիկների անմեղությունը և պատիվը ոտնակոխ անել: Այդ մարդը սկսեց ամենավիրավորող առաջարկություններ անել նրան. բայց նա արհամարհանքով մերժեց դրանց:

Այնուամենայնիվ, աղքատությունը արդեն պատրաստվում էր տիրապետել իր որսին, որին նա հինգ ամբողջ տարիներ հանգիստ էր թողել: Անառակը, իր կողմից, հսկում էր իր զոհին: Քաղցը, մտածում էր նա, կհասցնի նրան այնտեղ, որ նա անձնատուր կլինի: Բայց նա սխալվում էր. աղջիկը խուլ մնաց նրա բոլոր հանդգեցուցիչ խոսքերին:

Կան մարդիկ, որոնց կիրքը աճում է այնքան, որքան որ արգելքներն են բազմանում: Տեսնելով, որ թշվառ աղջիկը անողոք է, այս անգամ իսկապես սիրահարված կրքոտ Դոն-ժուանը առաջարկություն արավ նրան. բայց մեծ եղավ նրա զարմանքը, երբ բարկությամբ մերժեցին նրա առաջարկությունը:

— Մենք զանազան դավանության ենք պատկանում,— ասաց նրան երիտասարդ աղջիկը:

— Ես քո հավատը կընդունեմ:

— Ես հավատափոխի հետ չեմ ամուսնանա:

— Ես քեզ սիրում եմ:

— Սուտ է. երբ տղամարդը սիրում է կնոջը, նա նրան հարգում է, և ոչ թե ցանկանում է նրան խաբել:

— Կենդանի, թե մեռած դու իմս կլինես,— աղաղակեց մերժված սիրահարը:

Այդ սպառնալիքը սարսափեցրեց երիտասարդ աղջկան. նա հասկացավ, որ կորած է:

Այս պատմությունը վերաբերվում է այն ժամանակին, երբ գավառական անկյունում պոլիցիան մեկ տեսակ միջ էր, երիտասարդ աղջիկ փախցնելը շատ հեշտ բան էր և դա անդադար կատարվում էր: Մի այդպիսի վտանգ ևս սպառնում էր որբին, նա չէր կարող կասկածել այդ բանի մեջ:

Մի գեղեցիկ, արեգակնային առավոտ նա գնաց հայոց փոքրիկ եկեղեցի, քառորդ ժամ աղոթեց, հաստատ քայլերով գնաց դեպի Կուրի ակիը: Մի քանի թուպեից հետո գետը իր գիրկն ընդունեց թշվառ աղջկա մարմինը, որը մահը գերադասեց անպատվությամբ:

Չկարծեք, որ այս օրինակը հնարել են նրա համար, որ բոլոր վերոհիշյալներին ավելի նշանակություն տամ. միք համարի այդ բանը նույնպես որպես մեկ եզակի փաստ. գյուղական հայ կանանց մեջ քաղաքային նրբացրած գիտությունից ավելի նշանավոր բան կարող է գտնվիլ, որ է՝ բարոյական կրթությունը, որի մեջ գլխավոր դերը խաղում է չփչացած և իր պարտավորություններին հավատարիմ սիրտ:

Խորը քննելով հայ կանանց ընտանեկան բարքերը, դուք չեք զարմանա տեսնելով, որ ժողովրդի մասսայի մեջ գերակշռում է բարոյականությունը և բարօրությունը: Ինձ չափազանց ախորժելի էր համոզվել այդ բանում իմ Կովկաս եղած ժամանակ: Թող այդ երկիրը, որը, իր բախտով, կարողացավ երկար տարիների ընթացքում ազատվել Եվրոպայի հուզմունքից, թող այսուհետև էլ հեռու մնա այդ բանից և թող իրանով մի գեղեցիկ ժողովրդի օրինակ ցույց տա, որը բոլորովին նվիրել է իրան խաղաղ պարապմունքներին և որը իր մտավոր զարգացման համար գործ է ածում իր խելացի և բարոյական ազգաբնակության բոլոր գործունեությունը:

## ՌՈՒՄ ԾԱՆԱՊԱՐՅՈՐԴ Ա. ԵԼԻՍԵԵՎԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Թեև հայ ժողովրդի մեկ մասը գտանվում է Ռուսաստանի և Պարսկաստանի իշխանության ներքո, իսկ մեկ մասը ցրված է հին աշխարհի բոլոր անկյուններում, բայց այնուամենայնիվ հայերի մեծ մասն ապրում է Փոքր Ասիայում, որ նույնիսկ Ասորեստանի իշխանության ժամանակ կոչվում էր Հայաստան, և կար ժամանակ, որ այդ երկիրը կազմում էր հզոր հայկական թագավորության մեկ մասը: Հետաքրքիր է այդ փոքրաթիվ, բայց ամուր և դիմացկուն ժողովրդի ճակատագիրը, որն յուր առավել կամ նվազ սեփական կյանքով, յուր մնացականությամբ և հարատևությամբ մեկ առեղծված է ոչ միայն պատմաբանի, այլև մարդաբանի համար (անտրոպոլոգ): Արարատ լեռնով, Վանա լճով, Միջագետքի երկվորյակ (Եփրատ-Տիգրիս) վտակներով և Սև ծովի ափերով սեղմված Հայաստանը, թեև ցամաքի խորքերից Առաջավոր Ասիա դիմող ազգերի մեծ մասի ճանապարհի վերա էր գտանվում, բայց, այնուամենայնիվ, հընթացս շատ դարերի նա ապրել է յուր սեփական կյանքով, օգտվելով միևնույն ժամանակ յուր դրացի Քաղդեացի և իրանց մշակած քաղաքակրթությամբ: Այն ազգը, որ սկսած Նեմրութից և Շամիրամից մինչև մեր օրերը կարողացել է առավել կամ նվազ պահպանել յուր անհատականությունը, պահպանել է մասամբ և յուր տիպը, սովորությունները, լեզուն և կրոնը, չնայած, որ ամբողջ աշխարհի ազգերից և ոչ մեկը, նույնիսկ հրեաները, չէ ենթարկվել այնքան տառապանաց, որքան հայ ժողովուրդը. այդ ազգը չէ կարող մոռացվել, նա իրավունք ունի ապրելու և ապագայում: Գոյության կռվի տեսակետից նայած զարմանալի է այդ փոքրաթիվ ժողովրդի դիմացկանությունը և հարատևությունը, որ հզոր ազգությանց մեջ դարերի ընթացքում սեպի նման ամրապնդված կարողացել է ապրել մինչև մեր օրերը: Ընկան կործանեցան Ասորեստանը և Բաբելաստանը, Պարսից, Պարթևաց, Մակեդոնացվոց, Հռովմայեցվոց և Մոնղոլաց ընդարձակ պետությունները. շատերը հին հզոր ազգերից, ինչպես քաղդեացիք, պոնտացիք և պարթևք կորան, անհետա-

ցան երկրի երեսից, իսկ փոքրաթիվ հայ ազգը ոչ միայն ապրեցավ, այլև այժմ լի կենսական ուժերով դիմում է բորբոք սիրով դեպի գիտություն, դեպի աշխատանք. մտածում է ազատվել հազարամյա լծից, ծաղկեցնում է յուր գրականությունը, ուսանում է, ձգտում է դեպի առաջ և արդեն շատ բան ձեռք է բերել: Հայ ազգը հիրավի պատմության համար ավելի մեծ առեղծված է, քան թե հրեան և գնչուն: Այդ երկու աշխարհաքաղաքացի մշտաթափառ ժողովրդի համար չկա հայրենիք—ubi bene, ibi patria (որտեղ լավ է, այնտեղ է հայրենիքը), իսկ հայ երկրագործը չէ թողել յուր Հայաստանը, շատ չէ հեռացել Վանից և Արարատից: Ներկայումս չնայած յուր կրած թշվառությանց, հպարտ օսմանլուի աչքում ստրուկ համարված հայը ոչ միայն գերազանցում է յուր տիրոջից, որ արագ դիմում է քայքայման, այլ Առաջավոր Ասիայի բոլոր ազգերից նա ավելի քաղաքակրթված է, ցույց է տալիս մեծ սեր դեպի կրթությունը, մեծ ընդունակություն վաճառակա-նության և արհեստների ծաղկման սկզբնապատճառ լինելու. նա աչքաբաց է և բնական զգաստ. և ահա այդ բոլոր հատկություններով է զանազանվում հույնի ախտյան հայը խաղաղ ճանապարհով Անատոլիայի նվաճման գործում: Եվ, հիրավի, շատ տեղ այդ վայելուչ երկրում չկա մեկ տուն, որ կառուցած չլինի հայը, չկա մի տեղական կտոր, որ գործված չլինի հայի ձեռքով, չկա պտուղ, որ հայի այգուց դուրս եկած չլինի: Այդ բոլորի համար, անկասկած, աշխատասեր և եռանդուն հայը շատ բանում պարտական է յուր գլխավոր օգնական կնոջը: Միշտ գործունյա հայուհին ճշմարտապես կարող է համարվել հայ ազգության գլխավոր հենարանը: Հայ կինը այն շաղախն է, որ միացնում և ամրապնդում է հայ գերդաստանը, ընդ նմին և հայ ազգությունը գլխովին: Եթե մի որևիցե տեղ կարելի է գտնել ընկալուչ և ժրագլուխ կին, որ պահպանում է ազգայնության գաղափարը, յուր ցեղի հարատևությունը, անկասկած, Արևելքում այդ արժանավորագույն կանանցից մեկն է հայ կինը: Հընթացս երկար դարերի գոյութեան կռվից այդ ամուր և տոկուն փոքրաթիվ ազգը կարողացել է հաղթող դուրս գալ հենց այն պատճառով, որ նորա կյանքի նեցուկը եղել է տոկուն և գործունյա հայ կինը, որ կարողացել է հաշտեցնել և միացնել միմյանց հետ հակառակություն և ներքին խռովություններ սիրող հայերին:

Հայուհին ամուր պահպանելով գերդաստանի միությունը, ամուսնական անկողնու մաքրությունն և ընտանեկան օջախի սրբությունը, դորանով պահպանել է քայքայման հաճախ մերձ եղած յուր ազգի ամբողջությունը: Հայուհին գիշեր-ցերեկ աշխատում է ինչպես եզ համբերութեամբ բարիք դիտող յուր ամուսնուն հավասար, ընդ նմին ջանացել է և յուր ազգի համար, որի աշխատանքը չթողեց Հայաստանը զոհ գնալու Քաղդեացվոց, Պարսից և Օսմանվոց: Անխոնջ աշխատասիրությունը հայուհու կյանքի անբաժան հատկանիշն է և գլխավոր առաքինություններից մեկը, որի վերա պետք է կանգ առնենք՝ նորա դրությունը նկարագրելու ժամանակ: Թրքուհին և պարսկուհին, եթե անհրաժեշտ կարիքը չէ ստիպում աշխատելու, մեծ մասամբ իրանց ժամանակը անցնում են դատարկ. դուռանի պահանջման համեմատ նոքա պարտական չեն օգնելու իրանց ամուսնու օրապահիկն հայթայթելու: Մեծ մասամբ նոքա միայն թանկագին խաղալիք են, ծնված հարեմի համար և զվարճություն պատճառելու իրանց ամուսնուն միայն մեկ բանում, նոքա այդպես ծնված են և սնված դարերի ընթացքում: Ուրիշ արարած է նոցա դրացի հայուհին. նա միշտ ոտի վերա է՝ անխոնջ աշխատելու և միշտ զբաղված առտնին զործերով. կարելի է համարձակ ասել, որ աշխատանքը նորա ոսկե ձեռքերից ցած չէ ընկնում: Ըստ երևույթին, այդ հարատև և տաժանելի աշխատանքը հայուհու համար ամենևին չունի այն սարսափելի ծանրությունը, որի տակ ճնշված են քրդուհիք, արաբուհիք և եգիպտոսի ելլանուհիք. դորա պատճառն այն է, որ այդ վերջին ազգերը կնոջ վերա մեծ մասամբ նայում են իբրև մի աշխատավոր զրաստի վերա, որ պարտական է աշխատել միշտ յուր ընտանյաց և մեծ մասամբ բոլորովին դատարկապորտ ամուսնու կարյաց բավականության համար: Մինչդեռ հայուհին աշխատում է սիրով, որովհետև նորա ամուսինը ևս յուր ընտանյաց և տան համար աշխատում է ինչպես եզ: Հայուհին, լինի նա աղքատ, հարուստ, ամուսնացած և թե օրիորդ, բացի ծանր աշխատանքներից, զբաղվում է և արհեստներով, կարճես, հենց նորա համար, որպեսզի յուր ժամանակը իզուր չկորցնե և բավականություն տա յուր մշտապահանջ աշխատանաց



ծարավին: Ինչ որ հագնում է հայ ընտանիքը, ոչ միայն կարում է, այլև պատրաստում է ինքը՝ ջանասեր հայուհին. նա հավասար ճարպկությանը թե կարում է, թե մանում և թե գործում. հայուհու գործած կոշտ և նուրբ կտավը և մինչև անգամ բրդե գործվածքները ոչ միայն բավականացնում են հայ ընտանիքի պահանջները, այլև տարվում և վաճառվում են



օտար երկիրներում: Եվրոպական արհեստանոցների գործվածները, որոնք դուրս են քշել Արևելքի ձեռագործները, դժվարությամբ են կարողանում մրցել հայ կնոջ ձեռագործների հետ, որովհետև հայ կինը արտադրում է թե արագ, թե ամուր և թե արժան:

Հայուհին, բացի յուր ընտանիքի համար և այլ թեթևագին հագուստներ պատրաստելուց՝ վաճառելու համար, վշից, մետաքսից, բամբակից և բրդից պատրաստում է ավելի թանկագին կտորներ: Այդ գործվածքները, չնայելով որ ձեռքով և նախնական գործիքներով են պատրաստվում, այնուամենայնիվ իրանց արժանավորությամբ հետ չեն մնալ եվրոպական արհեստանոցների գործվածքներից: Արևելքի այն

գեղեցիկ արտադրությանց շատերը, որոնք ի ցույց են դրված վայելչապես մեր արևելյան կոչված խանութների պատուհաններում, գործված են Կովկասի, Պարսկաստանի և Անատոլիայի հայ կանանց ձեռքով: Տրապիզոնի, Եվդոկիայի, Վանի, Արզրումի, Բիթլիսի արտադրած նուրբ կտավները, հյուսյալ շապիկները, թավուտ երեսաքիչները և սավանները, խարբերդի այծի նուրբ մազից հայտնի գործվածները, պարսկական կոչված գեղեցիկ և ամուր խալիներն ու կարպետները, որոնք զարմանք են պատճառում մարդուս իրանց բազմազան նկարներով և գույների ճաշակավոր հարմարությամբ, Արզրումի երկարավիզ գուլպաները, որոնց վերա, ինչպես մագաղաթի վերա, կարելի է գրել, բրդից գործված Վանի ամուր շալերը, որոնց կարելի է գործածել ճանապարհի համար իբրև անծրկից անթափանցելի ծածկոց, խարբերդի բրդե գործվածքները, որոնք համարյա իրանց նրբությամբ, փայլով և գույների գեղեցկությամբ հետ չեն մնալ Լիոնի շալերից—ահա Արևելքի այդ բոլոր գործվածքները ըստ մեծի մասին թուրքիո և Պարսկաստանի հայուհու ձեռաց գործն է\*:

Այդպիսի աշխատասիրություն և շնորհք ունենալով հայուհին չի ընկնի: Մինչդեռ թրքուհին, պարսիկ կինը կամ արաբուհին իր մարդու հարեմից դուրս, օրինակի համար այրիացած ժամանակ, սովորաբար ոչ մի բանի ձեռք զարկել չէ կարողանում, հայուհին, ընդհակառակը, այնպիսի դիրք է բռնում, որ կարողանում է ոտի կանգնեցնել մի ամբողջ հայ ընտանիքը:

Հայուհու աշխատասիրությունը մինչև անգամ առակ է դարձել Արևելքում. թրքական հայտնի առակ կա, որ ասում է՝ «հայուհին նման է անընդհատ պտտող անիվին», և թուրքերի կողմից հեզնությամբ գործ ածվող այդ առակը իսկապես ամենալավ գովասանք է հայ կնոջ համար, որը ոչ մի բովե առանց աշխատանքի մնալ չէ կարող: Մինչև անգամ ճանապարհորդելիս, էշի կամ ջորու վրա նստած ժամանակը, հայուհին գործում կամ մանում է: «Դիցուք, մի որևէ գործի համար հայ կնոջ դատարան են կանչում. իմանալով, որ այնտեղ բավական ժամանակ պետք է կորցնի, հայուհին իր հետ վերցնում

\* Արծազանք, 23. X.1888, № 41, էջ 571- 572:

է իր դուզը և մի քիչ բամբակ կամ բուրդ: Մինչև որ նրան դուրս կկանչեն, մինչև որ դուրս կգա դատավորը (որը թրքական սովորությամբ շատ էլ շտապով չէ լինում) նա մանում կամ գործում է\*): Շատ անգամ պատահել է տեսնել Հայաստանում, թե ինչպես հայ կանայք գալիս էին եկեղեցի ձեռքներին զանազան ձեռագործ ունենալով, որով նրանք զբաղվում էին մինչև ժամասացության սկսվելը: Այդպիսով, կարելի է կատարելապես համաձայնվել հիշյալ հեղինակի (Արծրունի) այն խոսքերի հետ (նկատի ունի «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունուն—ԱՍ. Չ.), որ «Ասիայի խորքերում, կտրված լինելով քաղաքակրթված աշխարհից, աշխատասեր հայ ժողովուրդը իր ձևով լուծել է կնոջ ընտանեկան աշխատանքի հարցը, դարձնելով նրան ամենալավ զարդարանք կնոջ համար: Մինչև որ հայ տղամարդը միշտ հոգում է հարստություն ձեռք բերելու և խնայելու համար, հայ կնոջ վրա է ընկնում տան ներքին բարեկարգության մասին հոգալը և տնտեսության բարվոքելը: Չարմանալի չէ ուրեմն, որ ընտանեկան կյանքը շատ զարգացած է հայերի մոտ, և Արևելքի բոլոր ազգերի մեջ մենք չենք ճանաչում մի ուրիշ ազգ, որի մեջ այնքան լավ կազմակերպված լիներ ընտանիքը և այսքան ամուր դիրք ունենար կինը, իբրև մայր և իբրև ամուսին: Կարելի է ասել, որ հայը ամենաքնքուշ ամուսինն է Արևելքում:

Մարդկային իրավունքներով օգտվելու կողմից հայ կինը, կարելի է ասել, ավելի ազատ է, քան թե արևելքի կանայք, չբաց առնելով և Արաբիայի անապատի աղջիկը: Սակայն այդ ազատությունը ավելի աղջկանն է տրված, քան թե մարդու գնացած կնոջ: Աղջիկ կամ կին գնել ու ծախելը, կամ կանանց գերի առնելը երբեք գոյություն չի ունեցել Հայաստանում. հայ աղջիկը չգիտե, թե ինչ է երեսի ծածկոց, ինչ է հարեմ, որոնք տիրապետում են հայերին շրջապատող ազգերի մեջ. Հայաստանի աղջիկը ինչպես անապատի բեղվին, ամեն տեղ գնում է ազատորեն և բաց, չծածկելով երեսը. նա կարող է դիմել զանազան հարցերով մինչև իսկ օտար տղամարդոց. կարող է մասնակցել ընդհանուր խաղերի և խոսակցությունների և մինչև անգամ պարերի և երգերի մեջ, որոնց, իսկապես ասե-

\* ) Экономическое положение Турецких Армян, Г. Арцруни.



լով, շատ են սիրում հայուհիները:

Արտաքին կողմից հայուհիները արդարացի կերպով հռչակված են Արևելքում իրենց գեղեցկությամբ: Թխագույն թավշյա մորթը, սև մագերը, և մեծ սև ու փայլուն աչքերը, որոնք կամարակապված են խիտ հոնքերով և երկար արտևանունքներով, հաճախ մեծ քիթը և շրթունքները մի առանձին գեղեցկություն են տալիս հայուհու դեմքին: Հայուհու այդ իր տեսակի գեղեցկությունը տարաբախտաբար շատ շուտ է թառամում, և դեմքի բոլոր գծերը մի քանի տարուց հետո չեն կարողանում նույնիսկ հասկացողություն տալ նախկին գեղեցկության մասին: 16-18 տարեկան գեղեցիկ



հայուհին, շատ անգամ արդեն 24-26 տարեկան հասակում այնպիսի դեմք է ստանում, որը զուրկ է մինչև իսկ գրավիչ լինելուց: Հայ գեղեցկուհիները զանազանվում են իրանց թավամազ լինելով, որը երևում է նույնիսկ դեմքի վրա, բուսնելով բավական զգալի կերպով բեղերի և մորուսի տեղերում. հայուհիների այդ հատկությունը բոլորովին դուր չէ գալիս հարեմներում, որտեղ կինը հաճախ գնահատվում է իր մորթու քնքշությամբ: Այդ պատճառով հայուհիները, ինչպես և վրացի աղջիկները, շատ անգամ, և ավելի քան ուրիշները, ենթարկվել են ծանր տանջանքների, երբ նրանց մարմնի բոլոր մասերից բարբարոսաբար պոկում են մազերը, — մի բարբա-

րոսություն, որը գործադրվում էր, և, ինչպես ասում են, այժմ էլ գործադրվում է Արևելքի մի քանի հարեմներում. հայուհիների այդ արտաքին սիրունությունը ավելի է մեծանում նրանց ազգային տարօրինակ հագուստի շնորհով, որը նրանք այժմ իզուր են դնել գցում: Կապկությունը ոչ մի ազգին չէ սազում: Ի՞նչու է ազգային սովորությամբ գեղեցիկ և գույնզգույն կերպով հագնված հայուհին իր սիրուն շորերը փոխում եվրոպական զգեստի, այն էլ միայն այն պատճառով, որ դա կարված է *a' la franca*: Բայց ինչպես մեր կուլտուրային երկրներում մոդան ուշք չէ դարձնում ոչ ճաշակի և ոչ էլ տեղական սովորությունների վրա, այնպես էլ Հայաստանում՝ տղամարդոց շորերի մեջ փոփոխություն մտցնելուց հետո, փոփոխություններ են մտցնում և կանանց շորերի մեջ: Հայուհիները կրում են իրանց շորերի վրա շատ դրամներ, որոնցով զարդարում են ոչ թե միայն իրանց թասակը և մազերը, այլև պարանոցը, կուրծքը և ձեռքերը: Գեղեցիկ շորը, մի հայտնի աստիճան կոկետության հետ, որը հատուկ է հայուհիներին, այլև նրանց հագնվելու շնորհքը, ավելի գրավիչ են դարձնում Հայաստանի աղջկան: ...

Ընդհանրապես ազատ հայուհին Արևելքի մյուս քրիստոնյա կանանց նման չկարողացավ կատարելապես ազատ մնալ կնոջ վրա մահմեդականների ունեցած հայացքներից և դրա հետ միասին մի հայտնի աստիճանի փակ և առանձնացած լինելուց: Եթե իսլամի այդ ուղղությունը չկարողացավ մեծ ներգործություն ունենալ հայ աղջկա վրա, դրա հակառակ, ամուսնացած հայ կնոջ վրա այդ ներգործությունը կրկնապատիկ եղավ, մի տեսակ հարեմականության մեջ դնելով նրան: Հարսանիքի օրից սկսած, երիտասարդ հայուհին, որ մինչև այդ օրը չգիտեր, թե ինչ է երեսի քողը, սկսում է քողով ծածկել ոչ թե միայն երեսը, այլև իրանը, բացի դրանից երիտասարդ ամուսինը պետք է որքան կարելի է խույս տա ամեն տեսակ խոսակցություններ ունենալուց նույնիսկ կանանց հետ, էլ չենք խոսում տղամարդկանց մասին, ինչքան էլ որ կարևոր լինել այդ խոսակցությունը: Այդ սովորությունը հայերը բացատրում են նրանով, որ, նոցա խորին համոզմունքով, ամուսնության սկզբի ժամանակներում երիտասարդ կինը պետք է պատկանի իր մարդուն ոչ թե միայն մարմնով, այլև հոգով և բոլոր իղձերով, և այդ պատճառով պարտավոր է

միմիայն նրան դիմել: Ավելորդ է ասել, որ հենց այդ համոզմունքի մեջն է թաքնված կնոջ վրա ունեցած արևելյան հայեցակետը, որով կինը համարվում է իր մարդու ճորտը: Հայուհու առանձնանալը իր շրջապատողներից և նրա ականա լռակեցությունը, բարեբախտաբար, հայերի մեջ շատ էլ երկար չէ տևում, և սովորաբար վերջանում է այն ժամանակ, երբ կինը ծնում է առաջին երեխան: Առաջին ծնունդը ազատում է երիտասարդ կնոջը իր փակ դրությունից և նա իրավունք է ստանում խոսելու իր ամուսնու մերձավոր ազգականների, և մինչև իսկ հոր և եղբայրների հետ: Եթե ամուսնու ազգականները շատ են, այն ժամանակ, պատահում է, որ հինգ և մինչև անգամ տասն տարի է անցնում, մինչև որ երիտասարդ կինը կարողանում է հաստատ իրավունքներ ստանալ իրան օտար ընտանիքի մեջ:

Բայց այդքան երկար ժամանակ անցնելուց հետո էլ հայուհին այնպես ազատ չէ, ինչպես եվրոպացի կինը: Ճիշտ է, հաճախ նա ման է գալիս բոլորովին ազատ կերպով և բաց երեսով, բայց այնուամենայնիվ չէ հասնում այն ազատության, ինչ ազատություն, որ վայելում է հայ աղջիկը: Ամուսնացած կնոջ ազատության այդքան սահմանափակումը հայերը բացատրում են այն անհրաժեշտությամբ, որ մարդու գնացած կինը պետք է կենտրոնանա ամբողջապես իր տան մեջ և բացառապես պետք է պատկանի իր մարդուն և ընտանիքին: Արևելքի ազգությունը և կնոջ վրա Արևելքի ունեցած հայեցակետերը այդ բանում աչքի են ընկնում բավական զգալի կերպով: Դեպի կինը թերահավատությամբ վերաբերվելը ավելի շոշափելի կերպով աչքի է ընկնում Առաջավոր Ասիայի շատ հայերի մեջ, որոնք մինչև այժմ էլ իրանց կանանց համար պահպանել են և երեսի քող և հարեմ. երգրումում, խարբերում, և մինչև անգամ մեզ մոտ Կովկասում, մի քանի խուլ անկյուններում կարելի է տեսնել հայերի մեջ հարեմի նման մի բան: Երեսին քող ծածկելով և կատարելապես անջատված լինելով տղամարդկանց հասարակությունից, կինը, իհարկե, չէ կարող այնպես ազատ և լայն կերպով գործել, ինչպես նա կարող էր անել բոլորովին ինքնուրույն եղած դեպքում. նա դառնում է մի տեսակ ծաղիկ, մի տեսակ խաղալիք իր մարդու ձեռքում՝ զրկված լինելով մինչև անգամ մարդկային իրավունքներից: Հայ կնոջ առանձնացած լինելը այն տեղն է

հասնում, որ ընտանիքի տղամարդ անդամները կանանց և աղջիկների հետ միասին չեն ճաշում. շատ անգամ տանտիկինը պատրաստելով ամեն բան ճաշի համար, ինքը հեռանում և առանձնանում է այն սենյակում, որտեղ տեղավորված են լինում ընտանիքի մյուս կանայքը՝ փոքրիկ երեխաների հետ միասին:

Հայոց ընտանեկան կազմակերպությունը մինչև այժմ էլ պահպանել է կատարյալ նահապետականության բանվորություն (բնավորություն—*ԱՄ. Ջ.*):

Ընտանիքի մեջ բոլոր իշխանությունը գտնվում է հոր կամ պապի ձեռքում, որը և ընտանիքի գլուխն է, և որին ամենքը ենթարկվում են անպայման: Հայրականության նախնական սկզբունքը պահպանվում է այդ նահապետական ընտանիքում ամենայն ճշտությամբ:

Ընտանիքի ամբողջ եկամուտը գտնվում է ընտանիքի գլխավորի կատարյալ կարգադրության տակ, որը իր այդ իրավասությունը մասամբ բաժանում է կնոջ հետ: Այդ սիստեման այնքան ամուր է, որ մինչև անգամ ամուսնացած որդիքը և թոռները աշխատում են չբաժանվել ծնողական տնից և համախմբվելով կազմում են ավելի կամ պակաս բազմանդամ ընտանիքներ և տոհմեր, որոնք հաճախ ամբողջ գյուղեր են կազմում: Այդպիսի պայմաններում ընտանիքը աճելով աճում է, իսկ խելացի տնտեսության, այլև ելքի ու մուտքի ընդհանուր լինելու պատճառով, ընտանիքը նյութական բարեկեցություն է ունենում:

Այն միջոցին, երբ պապը կամ հայրը ղեկավարում է ամբողջ ընտանիքը, և ընտանիքի յուրաքանչյուր անդամի գործունեությունը դեպի ընդհանուր օգուտն է ուղղում, պառավ մայրը կամ տատը նույն կերպով հսկում է ընտանիքի կազմակերպության վրա և նրան է պատկանում ընտանիքի յուրաքանչյուր անդամի տնտեսության բարձրագույն հսկողությունը: Հենց ընտանիքի այդ ամուր կազմակերպության շնորհով էլ հայոց ազգը կարողացավ կրել այն բոլորը, ինչ որ նրա գլխին եկավ պատմական մի քանի հազար տարիների ընթացքում: Հայերի մի քանի խմբերում, որոնք մինչև այժմ էլ պահպանել են իրանց անկախությունը, ստացվածքի ընդհանուր լինելը և իսկական կոմունականությունը հասնում են զարգացման այն ամենաբարձր հնարավոր աստիճան-

ներին, որ միայն տեսականապես քարոզում են Լասսալ և Պրուդոն: Յուրաքանչյուրի ստացվածքը պատկանում է բոլորին, բայց այդ չէր զրկում մարդուն անձնական սեփականության և շահեցողության կարելիությունից:

Խոտորջուրի լեռնոտ և կիսաանկախ գավառում, որի բնակիչները հայտնի են իրանց վայրենի և բիրտ բնավորությամբ, «երբ ընտանիքի հայրը գնում է մի հեռու տեղ կամ թե վաղահաս կերպով մեռնում է, համայնքը պարտավոր է պահել և կերակրել իր հաշվով նրա ընտանիքը, մինչև որ նա կգա, կամ մինչև այն ժամանակ, երբ արական սեռի երեխան այնքան կմեծանա, որը կկարողանա փոխարինել իր հորը: Այն ընտանիքը, որին այս կամ այն ժամանակ կրակել է (կերակրել է.—ԱՄ. 2.) համայնքը, պետք է իբրև շնորհակալություն՝ նվիրի մի բան ուսումնարանի կամ եկեղեցու օգտին: Այդ կիսավայրենի խոտորջուրցիների մեջ այրի կինը իրավունք ունի նորից մարդու գնալ միայն այն դեպքում, երբ նա միայն աղջիկներ ունի, իսկ եթե նրա երեխաների մեջ նույնիսկ մի տղա կա, այն ժամանակ ամուսնանալը այդպիսի այրի կնոջ համար նախատինք է համարվում» (Արժրունի):

Այդ տեսակ սովորությունները անկասկած հին հայկական սովորությունների մնացորդներ են, և ամենից լավ վկայում են, թե մինչև որ աստիճան էին զարգացրել հայերը իրանց ընտանեկան սկզբունքը, որը տալիս էր համայն ազգին ամբողջություն և ամրություն, և այդ այն աջող դրության շնորհով, որ ունեցել է կինը հայ ընտանիքում:

---

Մշակ, 1888, № 124, 125: «Մշակը» և հայ կինը, էջ 226 - 231:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	3
ԳԼՈՒԽ I. ՀԱՅԱՍՏԱՆԸ Բ. ԼԱԶԱՐԵՎՍԿՈՒ ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԵՋ.....	5
ԳԼՈՒԽ II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՋԻԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՆԱՅՔ Բ. ԼԱԶԱՐԵՎՍԿՈՒ ԱԿՆԱՐԿԱՇԱՐՈՒՄ ..... ԵՎ ԵՎԵՆԻՍ ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ.....	15
ՎԵՐՋԱՐԱՆԻ ՓՈՒՆԱՐԵՆ.....	40
ԱՍՓՈՓՈՒՄ (ռուսերեն).....	42
ԱՍՓՈՓՈՒՄ (անգլերեն) .....	44
ԲՈՐԻՍ ԼԱԶԱՐԵՎՍԿՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
НА ЧУЖБИНЕ.....	49
БРОШЕЧКА.....	52
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՋԻԿՆԵՐՆ ՈՒ ԿԻՆԵՐԸ.....	58
ՀԱՎԵԼՎԱԾ	
СЕРГЕЙ ГОРОДЕЦКИЙ. ЛИРИК ПРОЗЫ ( портрет Бориса Лазаревского ).....	87
ՀԱՅ ԿԻՆԸ ( մեկ հատված պ. Գանկևիչի դասախոսությունից) .....	92
ՈՐՈՒ ՃԱՆԱԴԱՐՅՈՐԴ Ա. ԵԼԻՍԵՎԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅ ԿՆՈՋ ՍԱՍԻՆ. ....	98

-130077-]

ՋԱԶԱՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱԶԱՐԱՊԵՏԻ

ԲՈՐԻՍ ԼԱԶԱՐԵՎՍԿԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ  
ՄԱՍԻՆ

ЗАКАРЯН АНУШАВАН АЗАРАПЕТОВИЧ

БОРИС ЛАЗАРЕВСКИЙ

ОБ

АРМЕНИИ И АРМЯНСКОЙ ЖЕНЩИНЕ

Կազմի վրա՝ Նատալյա Թեոմյանի դիմանկարը  
(նկարիչ՝ Հակոբ Մ. Հովնաթանյան)

Տպագրական 7 մամուլ: Չափսը՝ 60 x 84 <sup>1</sup>/<sub>16</sub>:

Թուղթը՝ օֆսեթ № 1: Տպաքանակ՝ 500:

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24:

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220090284

A II  
90284



ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱԶԱՐԱՊԵՏԻ ԶԱՔԱՐՅԱՆԸ  
ծնվել է 1954 թ. Նախիջևանի ԻԽՄՀ Օր-  
դուբադի շրջանի Փառակա գյուղում:  
1971 թ. ավարտել է Երևանի Ն. Կրուպ-  
կայայի անվան միջնակարգ դպրոցը,  
1975-ին՝ Խ. Աբովյանի անվան հայ-  
կական պետական մանկավարժական  
ինստիտուտի բանասիրական ֆակուլ-  
տետը: 1975 թ. դասավանդել է Հոկտեմ-  
բերյանի շրջանի Նոր Արտագերս գյուղի  
միջնակարգ դպրոցում: 1975-1976 թթ.  
ծառայել է խորհրդային բանակում (Խա-  
բարովսկի երկրամաս, ք. Օբլուչին):

1977-1979 թթ. աշխատել է Հայաստանի գիտությունների  
ակադեմիայի հրատարակչությունում որպես խմբագիր: 1980-  
1993 թթ. եղել է ԳԱ «Լրագրեր հասարակական գիտությունների»  
ամսագրի պատասխանատու քարտուղարը:

1993 թ. հոկտեմբերից ղեկավարել է ՀՀ Գերագույն խորհրդի,  
ապա Ազգային ժողովի, ՀՀ կառավարության աշխատակազմերի  
կառուցվածքային տարբեր ստորաբաժանումներ (հրատարակ-  
չական բաժնի վարիչ, արձանագրային - հրատարակչական  
բաժնի վարիչի տեղակալ, գրասենյակի ղեկավար, քարտուղա-  
րության պետի տեղակալ, «Հայաստանի Հանրապետության  
պաշտոնական տեղեկագիր» ՊՓԲԸ-ի գործադիր տնօրեն):  
2000 թ. մարտից ԱԺ աշխատակազմի հրատարակչական բաժնի  
վարիչն է:

1999-2003 թթ. միաժամանակ եղել է ՀՀ գիտությունների  
ազգային ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդեսի»  
պատասխանատու քարտուղարը: 2003-ից հանդեսի խմբագրի  
տեղակալն է:

Բանասիրական գիտությունների թեկնածու է (1985 թ.): Չորս  
մենագրության [«Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական  
կյանքը (1914-1920 թթ.)» (1984 թ.)՝ «Ռուս գրագետները և հայ  
իրականությունը» (XX դարի 10-ական թվականներ)» (1994 թ.,  
ռուս.), «Ալեքսանդր Կուլեբյակինը և Հայաստանը» (2003 թ.,  
ռուս.), «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս գրական գոր-  
ծիչների գնահատությամբ» (2003 թ., ռուս.)] և շուրջ ութսուն  
գիտական հոդվածների ու հրապարակումների հեղինակ է:

1989-ից դասախոսում է Երևան քաղաքի բուհերում:

Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է (1986 թ.):

Ամուսնացած է, ունի երեք երեխա: